

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 19-ի N 646 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



2017-2022 թթ.

Երևան-2017
Հունիս

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	3
ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....	9
1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	9
1.1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ	9
1.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	12
1.3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՄՔՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՑԻՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔՔԱՐ	16
1.4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ	25
1.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԱՆԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՈՒՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ	27
1.6. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	30
1.7. ԿԱԴԱՍՏՐ	32
2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	35
2.1. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	35
2.2. ՍՓՅՈՒՌ	37
2.3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	40
3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ	44
3.1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ, ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԶԲՈՍՇՐՋՈՒԹՅՈՒՆ	44
3.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ	52
3.3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	57
3.4. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ	63
3.5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՏՈՒԹՅՈՒՆ	72
3.6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	79
3.7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ	84
3.8. ՔԱՂԱՔԱՑԻՆՈՒԹՅՈՒՆ	86
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ	90
4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	90
4.2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	97
4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	103
4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	110
4.5. ՄՇԱԿՈՒՅԹ	114
4.6. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ	119

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ կառավարությունը ներկայացնում է 2017-2022 թվականների ժամանակահատվածում երկրի կայուն զարգացումը երաշխավորող գործունեության ծրագիր, որի առանցքը կազմում են լայնամասշտար բարեփոխումները։ Այն հենվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի ուղերձի, Հայաստանի Հանրապետական Կուսակցության և Հայ Յեղափոխական Դաշնակցության նախընտրական ծրագրերի և կոալիցիոն հուշագրի սկզբունքների վրա, ինչպես նաև լայն հասարակությունում շրջանառվող առաջադեմ գաղափարների վրա։

Ծրագիրը միտված է առարկայական, բայց միևնույն ժամանակ ինստիտուցիոնալ և հեռանկարային լուծումներ տալու հասարակությունում լայն քննարկման առարկադաս այն ախտորոշումներին, որ 2017 թվականի սկզբին հրապարակեց ՀՀ կառավարությունը։ ՀՀ կառավարությունը նպատակադրված է ապահովել մեր երկրի անվտանգությունը, ինչպես նաև այդ գերազույն խնդիրը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ տնտեսական առաջնորդացը՝ արտացոլելով այն կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում։

Ծրագիրը միտված է կայուն տնտեսական աճի միջոցով ապահովելու ամուր պաշտպանությամբ կոփված խաղաղություն, ներառական աճ՝ հանրության բոլոր հատվածների համար, հանրային կյանքում ակտիվ ներգրավածություն՝ Հայաստանի բոլոր քաղաքացիների համար։ Հայաստանը պետք է դառնա ամրող հայության միավորման, նրա հնարավորությունների, կարողությունների, կապերի օգտագործման և ամրող ներուժի իրացման կենտրոն։ Սույն ծրագրով նախատեսվող բարեփոխումների կենտրոնում ՀՀ քաղաքացին է, իսկ ծրագրի հաջողության գրավականը մեր քաղաքացիների նախաձեռնողական և ակտիվ մասնակցությունն առաջարկվող բարեփոխումներին։ Այդ բարեփոխումները պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության քաղաքացու բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություններն ու կարողություններն անընդհատ ընդլայնելու կայուն երաշխիքները։

Նման իրավունքների իրացումը կարող է արդյունավետ իրագործվել միայն գործուն սահմանադրախրավական համակարգում։ Այս առումով առավել, քան կարևոր է ապահովել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված խորհրդարանական կառավարման համակարգին սահուն անցումը։ ՀՀ կառավարությունը կներդնի բոլոր ջանքերը խորհրդարանական համակարգում պետական կառավարման արդյունավետությունը, հանրության առջև իշխա-

Նույթյան պատասխանատվությունը և հաշվետվողականությունը, իրավունքի գերակայությունն ապահովող օրենսդրական հիմքեր ստեղծելու գործում:

ՀՀ կառավարության ծրագրի տեսլականը հիմնված է հետևյալ սկզբունքի հիման վրա. մենք պետք է ունենանք անվտանգ, արդար, ազատ և խեղացի Հայաստան:

Հայաստանը ծովային ելք չունեցող երկիր է, որի չորս սահմաններից միայն երկուսն են բաց: Մեր երկիրը բախվում է տարածաշրջանային մարտահրավերներին, որոնք սպառնում են մեր անվտանգությանը: Այս համատեքստում առանցքային է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգ զարգացման իրավաքաղաքական և ուսումնական կայուն երաշխիքների ձևավորման խնդիրը: Մենք կանգնած ենք մեր սահմանները պաշտպանելու մարտահրավերների և, միաժամանակ, երկու անմիջական հարևան-բարեկամ պետությունների հետ հարաբերությունները խթանելու խնդիր առջև: Ենեղով այդ հանգամանքներից՝ մենք պետք է շարունակենք զարգացնել մեր ուսումնական կարողությունները՝ ապահովելով **ՀՀ զինված ուժերի մարտունակությունը, մշտապես կատարելագործումն ու համընթաց արդիականացումը, ինչպես նաև ժամանակակից սպառագինությունը:**

Հայաստանի Հանրապետությունը պետք է բարձրակարգ դիվանագիտություն իրականացնի՝ զարգացնելով և ամրապնդելով մեր հարաբերությունները շահագրգիռ պետությունների հետ՝ ամրապնդելով մեր քաղաքական և տնտեսական կապերը և ավելացնելով դաշնակից ու գործընկեր երկրների շարքը:

Մրան զուգահեռ, **ՀՀ կառավարությունը պետք է կենտրոնանա ներքին խնդիրների լուծման և հասարակական բարեկեցության բարձրացման հնարավորությունների վրա՝ ընդգծելով մեր երկրում ընտանիքի կյանքի որակի ու ապագա սերնդի արժանապատիվ ապրելու հեռանկարների՝ ներառյալ կրթության, առողջապահության և զբաղվածության մատչելիության ապահովման կարևորությունը:**

Հայաստանի անվտանգության համատեքստում **ՀՀ կառավարությունը կարևորում է մեր բնական պաշարներն արդյունավետ, թափանցիկ օգտագործելու և այդ ոլորտում պետության համար առավելագույն շահույթի ձևավորման խնդիրը, քանի որ դրանք ոչ միայն այսօրվա, այլ նաև մեր ապագա սերունդների անվտանգությունն ապահովելու համար կարևորագույն գործոններից են:**

ՀՀ կառավարությունը շարունակելու է Հայաստանի Էներգետիկ անվտանգության ապահովմանը և տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում երկրի ունեցած զգալի ներուժի

իրացմանը միտված ակտիվ քաղաքականությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու այլընտրանքային էսերգետիկայի աղբյուրների ավելացման և էսերգախնայողության վրա:

Մեր երկրի զարգացումը պետք է ուղղված լինի այն մարտահրավերների հայթահարմանը, որոնց այսօր բախվում է Հայաստանը: Այդ նպատակով, նախնառաջ, ՀՀ կառավարությունը պարտավորվում է բարձրացնել և ամրապնդել արդարության և վստահության մթնոլորտը մեր հասարակությունում: Դրան հասնելու համար մենք նախաձեռնել ենք բարեփոխումներ՝ նպատակ ունենալով զարգացնելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հանրային կառավարման ինստիտուտների դեկավարման կարողություններն ու մոտեցումները և բարելավելու որակը՝ վերջիններս դարձնելով առավել արդյունավետ, մարդակենտրոն, թափանցիկ և ներառական, ինչպես նաև բարձրացնելով այդ մարմինների և ինստիտուտների հաշվետվողականությունը հանրության առջև:

Հայաստանը կլինի ստեղծագործելու և արարելու հենարան միայն այն դեպքում, եթե ապահովված լինի արդյունավետ մրցակցային միջավայր: Միայն այդպիսի միջավայրը հնարավորություն կընձեռի ներդրումներ՝ ներգրավելու միջոցով որակյալ աշխատատեղեր ստեղծելու համար:

Մենք հաջողելու այլ ճանապարհ չունենք, քան ապահովել, որ բոլորը վստահ լինեն Հայաստանում իրենց ներուժն առավելագույնս կյանքի կոչելու հնարավորության հարցում: Ամեն ձեռնարկատեր պետք է վստահ լինի «յուրաքանչյուրը կարող է հետապնդել նոյն տնտեսական նպատակը, ինչը, որ մեկ ուրիշը» սկզբունքի կիրառման, արդար և առողջ մրցակցային միջավայրի անխուսափելիության հարցում:

Երկրում արդարության կարևորագույն երաշխավորներից է դատական համակարգը: ՀՀ կառավարությունն իրականացնելու է համալիր միջոցառումներ ուղղված դատական համակարգի անվախության և անաչառության երաշխավորման գործում՝ արդյունավետ և կանխատեսելի արդարադատություն ապահովելու համար: Պետք է ձգտենք նրան, որ իրավիճակին, եթե իրավական վեճ ունեցող յուրաքանչյուր ոք համոզված լինի, որ ՀՀ դատական համակարգի միջոցով իրենց խնդիրներին կտրվի արդար և անաշարժ լուծում:

Կոռուպցիան մեծագույն չարիք է, որի դեմ մենք պետք է պայքարենք բոլոր հնարավոր և օրինական միջոցներով: ՀՀ կառավարությունը, իր իրավասության շրջանակներում, միջոցներ կգործադրի կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զար-

գացումն ու լիարժեք կիրառումն ապահովելու համար, որպեսզի ապահովվեն իշխանության՝ հասարակության հետ հետադարձ կապն և հանրության կողմից վերահսկողությունը:

Սոցիալական պաշտպանության ոլորտում անցում կկատարվի դեպի նոր քաղաքականության, որի հիմնական նպատակը սոցիալական անարդարություն ծնող պատճառների և ոչ նպատակային օժանդակության թիրախսավորումը, այնուհետև դրանց չեզոքացմանն ու կանխարգելմանը միտված ծրագրերի իրականացումն են: Զուգահեռաբար ընդլայնվելու է պետության կողմից իրավես կարիքավոր խմբերին տրամադրվող նպատակային սոցիալական օժանդակությունը:

Ասված ծառայությունները, այդ թվում՝ բժշկական օգնությունը, պետք է տրամադրվեն միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը պետք է կանգնած լինի Հայաստանում անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող յուրաքանչյուր անձի կողքին:

Մեր երկրի զարգացման գաղափարախոսությունն ու ձևաչափն ունեն նոր ազդակների և նախաձեռնությունների կարիք: Հայաստանի զարգացման հիմքում պետք է դրվի «խելացիի» գաղափարը: Հայաստանի տնտեսությունը պետք է զարգանա շնորհիլ ժամանակակից, աշխարհում մրցունակ, բարձր որակավորում ունեցող, կիրթ, մոտիվացված և շարժունակ աշխատուժի: ՀՀ կառավարությունը կվերանայի երկրում գործող կրթական համակարգը բոլոր մակարդակներում՝ հանրությանը զինելու այն գիտելիքներով և հմտություններով, որոնք կենսական նշանակություն կունենան հաջորդ տասնամյակներում:

Ժամանակակից գլոբալ մարտահրավերների համատեքստում Հայաստանի համար խելացի և նորարար տնտեսություն ունենալն այլընտրանք չունի: Խելացի կառավարման հիմքում դրված է առկա միջոցներով առավելագույն արդյունքի հասնելու սկզբունքի կիրառումը: Խելացի զարգացման մեր տեսլականի ապահովման համար առաջնային է մարդկային ներուժի զարգացումը: Զարգացման այս հրամայականի ներքո կրթության ոլորտում բարեփոխումները պետք է ոչ միայն անդրադասնան այսօրվա խնդիրներին, այլ նաև ապահովեն, որ մենք ունենանք մրցունակ և ստեղծագործ մարդկային ուսուրս թե՛ ներկայի, թե՛ ապագայի համար:

Առաջիկա հինգ տարվա ընթացքում Հայաստանի տնտեսական աճը հիմնված կլինի տնտեսության ներքին ռեսուրսների արդյունավետ և խելացի օգտագործման ու արտաքին աշխարհում մրցունակության բարձրացման վրա՝ ապահովելով արտահանման ծավալների

աստիճանական ավելացումը, ինչը պետք է հանդիսանա տնտեսական աճի առանցքային շարժիչը:

Մրցունակ ազգային տնտեսություն և տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու համար կարևոր են արտադրողականության շարունակական աճը և նոր տեխնոլոգիաների անընդհատ կիրառումը: Մրցունակ և նորարար տնտեսություն ունենալու համար ՀՀ կառավարությունը մշակելու և կյանքի է կոչելու Հայաստանի թվային օրակարգը, որը հիմք կիանդիսանա մեր տնտեսության վերափոխման և կենսունակության ապահովման համար: Թվային օրակարգը կանդրադանա մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներին. պետական կառավարման համակարգին, ենթակառուցվածքներին, տնտեսությանը և աշխատատեղերին, հասարակական կյանքին, կրթությանը, գիտությանը, հետազոտություններին, մշակույթին, անվտանգությանը և Հայաստանի մասնակցությամբ ինտեգրացիոն գործընթացներին:

Գործարար միջավայրի գործելատճը պետք է հիմնված լինի ժամանակակից, կիրառական գիտելիքների և կառավարման հմտությունների վրա: Անհրաժեշտ է արդիականացնել գործարար էկոհամակարգը՝ խրախուսելու նոր աշխատատեղերի ստեղծումն ու խթանելու նորարարությունների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև տնտեսությունում արտադրողականության աճի բարձրացման նպատակով լայնորեն կիրառելու նորարար տեխնոլոգիաները: Մեր գործարարները պետք է լինեն ճկուն և առաջադեմ մշտապես հարմարվելով արագ փոփոխող գլորալ միջավայրին և հրամայականներին: Մեր երկրի գործարար միջավայրը պետք է ապահովի մրցունակ և հարմարավետ էկոհամակարգ և հավասար խաղի կանոններ, այն պետք է գրավիչ լինի թե՛ տեղական գործարարների, և թե՛ օտարերկրյա ներդրողների համար:

Ավելի, քան 7 միլիոն հայ ապրում է Հայաստանից դուրս և ափոված է ամբողջ աշխարհում: Մեր նպատակը սիյուռքահայության և հայրենիքի առավել ամուր կապի ստեղծման բանաձնը գտնեն է, ինչը հնարավորություն կընձեռի պահպանելու հայի ինքնությունը, ինչպես նաև Հայաստանը դարձնելու հայանպաստ կենտրոն, որը միավորում է աշխարհով մեկ սփոված բոլոր հայերին:

Հայաստանը և սիյուռքը մեկ ամբողջի երկու մասն են՝ միմյանց հետ կապված պատմության մեկ շղթայով, մեկ ճակատագրով, հայրենիքի ապագայի հանդեպ ունեցած անհանգստությամբ: Մենք պատասխանատվություն ենք կրում մեկս մյուսի նկատմամբ,

ինչն էլ մեզ համոզում է միավորել ուժերը, բազմապատկել հնարավորություններն ու շտկել մեր կեցվածքը աշխարհի նիստուկացում:

Մենք պետք է միջավայր ստեղծենք, որպեսզի սփյուռքում բնակվող տարբեր ոլորտների կառավարիչները, մշակութային գործիչները, կրթության և գիտության ոլորտի միջազգային ճանաչում ունեցող մեր հայրենակիցները մասնակից դառնան մեր երկրում ընթացող բարեփոխումներին՝ առաջին հերթին կառավարման նոր մշակույթ բերելու, սփյուռքի մեր լավագույն մասնագետների գիտելիքներն ու ներուժը համահայկական նպատակներին ծառայեցնելու համար:

Հայերին միավորելու կարևորագույն միջոցներից մեկը մեր ազգային մշակույթն է: Մենք պետք է հավաստենք, որ մեր հարուստ մշակութային ժառանգությունը և ամուր ազգային ինքնությունն են դրված մեր ազգի անկախ ինքնորոշման հիմքում և երաշխավորում են մեր հայրենիքի հարատևությունը:

ՀՀ կառավարությունը սույն ծրագրի իրականացմամբ 2017-2022 թվականների ընթացքում նպատակադրում է՝

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում համախառն ներքին արդյունքի միջին հաշվով շուրջ 5 տոկոս աճի ապահովման միջոցով,
- արտահանման աճի նշանակալի տեմպերի ապահովում՝ ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 40-45 տոկոսի,
- առքատության կրճատման ապահովում՝ իջեցնելով այն 12 տոկոսային կետով,
- զբաղվածության աճի և արժանապատիվ աշխատանքի վարձատրության օպտիմալ գործակցմամբ՝ անվանական նվազագույն աշխատավարձի 25 տոկոս աճի ապահովում՝ հաշվի առնելով կառուցվածքային գործազրկությունը և երկրի մրցունակության նվազման դիսկերը զսպող նվազագույն աշխատավարձի և աշխատավարձի մերիանայի համամասնությունը:

ՀՀ կառավարության ծրագրում նախատեսված միջոցառումների արդյունքային ցուցանիշները բացահայտում են այն թիրախները, որոնց նվաճմանն էլ միտված է լինելու ՀՀ կառավարության գործունեությունը՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում: Միջոցառումներն իրականացվելու են բազմաբնույթ սահմանափակումների միջավայրում: Հետևաբար, յուրաքանչյուր ժամանակահատվածում, առկա ֆինանսական հնարավորություններից կախված, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում և պետական բյուջեներում

կարտացոլվեն ծրագրում նախանշված միջոցառումներից առավել առաջնահերթ գնահատվածները:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի արդիականացումը եղել է և շարունակում է մնալ ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Նշված արդիականացումը պայմանավորված է ինչպես սահմանադրական բարեփոխումներով, այնպես էլ այսօրվա կառավարման համակարգը մեր առջև ծառացած մարտահրավերներին ժամանակին և արդյունավետ արձագանքերու հնարավորությամբ օժտելու հրամայականով: Ժամանակակից զարգացումները միտված են պետական կառավարումը դարձնելու ավելի ճկուն, արդյունավետ, նվազ ծախսատար և մարդակենտրոն, ինչպես նաև պետական կառավարման որոշ ոլորտներում ներդրվում են ծրագրի կառավարման մեխանիզմներ ու տեխնոլոգիաներ: ՀՀ կառավարությունն արդեն ակտիվորեն սկսել է պետական կառավարման համակարգի օպտիմալացման և աշխատանքի մեթոդների փոփոխության ուղղությամբ աշխատանքների իրականացումը և դա է լինելու ՀՀ կառավարության առաջիկա հինգ տարվա գործունեության թիրախներից մեկը:

Սահմանադրական բարեփոխումների իրացման այս փուլում կարևորվում է կառավարման արդյունավետ համակարգի մշակման համար օրենսդրական պատշաճ հիմքերի նախատեսումը, և այդ նպատակով ՀՀ կառավարությունը մշակելու է «Կառավարության մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթ: ՀՀ կառավարությունը նաև շարունակելու է սահմանադրական բարեփոխումների օրենսդրական ապահովման աշխատանքները՝ մշակելով ՀՀ Սահմանադրությունից բխող օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ կառավարության մեկ այլ գերակայությունն է լինելու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի թվայնացումը: Դա վերաբերում է ինչպես պետական կառավարման համակարգի ներսում տեղեկատվության հավաքագրման,

փոխանակման և վերլուծության համակարգերի և մեխանիզմների ներդրմանն ու կատարելագործմանը, այնպես էլ պետական կառավարման մարմինների կողմից քաղաքացիներին և գործարարներին մատուցվող ծառայությունների թվայնացմանը և տրամադրմանը՝ Էլեկտրոնային եղանակով:

Էլեկտրոնային կառավարման ոլորտում ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ քաղաքացիներին և բիզնես ոլորտին պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը, մատչելիությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կիսթանի Էլեկտրոնային եղանակով պետական ծառայությունների մատուցումը:

ՀՀ կառավարության կողմից ներդրված պետական ծառայությունների մատուցման միասնական հարթակների համակարգը կզարգացվի՝ ներդնելով լրացուցիչ ծառայություններ և էապես ավելացնելով միասնական հարթակների քանակն ու հասանելիությունը: Պետական ծառայությունների մատուցման ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում քաղաքացիների համար հնարավորություն կստեղծվի «մեկ պատուհանի» սկզբունքով ծառայություններ ստանալու՝ բացառելով մի քանի մարմիններ այցելելու անհրաժեշտությունը: Կոռուպցիայի կանխարգելում առանցքային նշանակություն ունի երկրում անվտանգության և կայունության ապահովման համար: Կոռուպցիան վտանգում է մարդու իրավունքների պաշտպանությունը, քայլայում է ժողովրդավարական արժեքները, խոչընդոտում է օրենքի գերակայության հաստատմանը, խաթարում է տնտեսության բնականն զարգացման ընթացքը: Կոռուպցիայի հաղթահարման նպատակով անհրաժեշտ է իրականացնել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության արմատավորմանն ուղղված հստակ քայլեր և կոշտ հակառուացյին քաղաքականություն՝ հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման, նոր հակակոռուացյին խնստիտուցիոնալ համակարգի ներդրման և զարգացման, կոռուպցիայի համընդիանուր կանխարգելման, պատասխանատվության անխուսափելիության միջնորդի ձևավորման միջոցով: Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է կենտրոնացնել առավել ոխսկային ոլորտներում և առավել մեծ վնաս ներկայացնող երևույթների վրա:

1. Պետական կառավարման համակարգի արդիականացման ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) ավելացնել վստահված ոլորտի արդյունավետ կառավարումն ապահովելու համար ՀՀ կառավարության անդամների պաշտոնական լիազորությունները և սահմանել դրան համարժեք պատասխանատվություն.

2) սահմանել բոլոր հանրապետական գործադիր մարմինների համար կատարողականի առանցքը և ըստ դրանց վարկանշել, սահմանել տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման նոր կարգը.

3) վերհանել և վերացնել պետական կառավարման մարմինների կողմից քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին նվազագույն կոռուպցիոն ռիսկեր պարունակող ծառայությունների մատուցման նպատակով ավելորդ ընթացակարգերը և օղակները, նվազագույնի հասցնել առօրյա կյանքում պետական կառավարման մարմինների հետ անհարկի շփումները.

4) ավելացնել պետական կառավարման մարմինների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև կատարելագործել նրանց և քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների միջև արդյունավետ հետադարձ կապը.

5) կրճատել պետական կառավարման համակարգի ծախսերը՝ հիմք ընդունելով իրականացվող գործառույթների անհրաժեշտությունն ու փաստացի իրականացումը.

6) իրաժարվել պետական կառավարման մարմիններում կրկնվող կամ անարդյունավետ գործառույթներից.

7) ընդլայնել քաղաքացիներին և ներդրողներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու համար «մեկ պատուհանի» սկզբունքով քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների համակարգը՝ օգտագործելով գոյություն ունեցող հարթակները և, որպես ծառայություններ մատուցողներ, ներգրավել նաև մասնավոր սուբյեկտներին.

8) ներդնել հանրային ծառայողների մասնագիտական ունակությունների, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման աստիճանի գնահատման կատարողականության նոր չափանիշներ՝ հիմք ընդունելով հանրային ծառայողի կերպարի արմատական վերափոխման հրամայականը:

2. Թվային համակարգի զարգացման ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը՝

ա. ստեղծել մասնագիտացված օդակ, որը միասնական տեղականի հիման վրա կիամակարգի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման էլեկտրոնային համակարգերի զարգացման քաղաքականությունը,

բ. հիմնել պետական և տեղական ՏՀՏ-ի համակարգերի փոխգործելիության պլատֆորմ, որը նախադրյաներ կստեղծի պետական կամ տեղական ինքնակառավարման

մարմինների համակարգերում ցանկացած տեղեկատվություն միայն մեկ անգամ մուտքագրելու համար՝ ստեղծելով հասանելիություն բոլոր լիազորված օգտագործողների համար,

գ. շարունակել բոլոր խոշորացված համայնքներում և հինգ քաղաքում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրման աշխատանքները,

դ. մշակել և փորձարկել համայնքների համար տիպային տեղեկատվական համակարգեր:

2) մինչև 2018 թվականի ավարտը՝

ա. մշակել և ընդունել ընդհանուր թվային ռազմավարություն (թվային օրակարգ), որը կուրվագծի թվայնացման ոլորտում ՀՀ կառավարության ռազմավարությունը և հետագա քայլերը,

բ. անցում կատարել բոլոր պետական մարմիններում ներդրված համակարգերի՝ միասնական մուտքի և նույնականացման համակարգին:

3) 2018-2019 թվականների ընթացքում լիարժեք գործարկել ՀՀ նախարարությունների «թեժ գիծ» ծառայության միասնական էլեկտրոնային հարթակը.

4) մինչև 2019 թվականի ավարտը՝

ա. ստեղծել հարցումների միասնական էլեկտրոնային հարթակ՝ ուղղված քաղաքացիների կողմից պետական մարմիններին հասցեագրված հարցումներին և դիմումներին պատասխանելու արդյունավետ էլեկտրոնային կառավարման գործիք ներդնելուն: Համակցել միասնական էլեկտրոնային հարթակը «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին.

5) մինչև 2020 թվականի ավարտը՝

ա. մեծացնել էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների թիվը,

բ. մշակել և ներդնել պետական կառավարման էլեկտրոնային խնտեգրված համակարգ:

1.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանի տարածքների բնակչիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաշափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարրերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաշափություններ և անհրաժեշտություն են առաջացրել մշակելու տարածքների անհամաշափությունների մեղմմանն ուղղված գործողություններ:

Պետք է շարունակվի տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության իրականացումը՝ նպատակ ունենալով ընդարձակելու տեղական ինքնակառավարման համակարգում բնակչությանը մատուցվող ծառայությունների ընդգրկումն ու որակը:

ՀՀ մարզերի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքների զարգացման անհամաշափությունների նվազեցման նպատակով հանրապետությունում ձևավորվել և սկիզբ է առել մարզային և համայնքային ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացը, որը պետք է կրի շարունակական բնույթ:

Հանրապետության աղքահանության ոլորտի առկա խնդիրների լուծման ուղղությամբ «Մաքոր Հայաստան» ծրագրի շրջանակներում մշակվել են օրենսդրական բարեփոխումների փաթեթ, ինչպես նաև դրանց վերաբերյալ գործողությունների ծրագիր, որոնց ընդունման և հետևողական կիրառման արդյունքում ՀՀ տարածքում առաջիկայում պետք է ունենանք աղքահանության այսօրվա վիճակից տրամադրուեն տարբերվող իրականություն:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Տարածքային կառավարման բնագավառում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝
1) մշակել և իրականացնել մարզային ռազմավարությունները և գործառնական ծրագիրը, նախաձեռնել մարզային և համայնքային զարգացման ծրագրերի համատեքստում պետական և այլ աղբյուններից ֆինանսավորման հաշվին մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ծրագրեր, գնահատել հանրապետական գործադիր մարմինների կողմից մշակված քաղաքականությունների ազդեցությունը և արդյունավետությունը, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտն ընդունել ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունները և առաջին գործառնական ծրագիրը՝ կարևորելով պետություն-համայնք-մասնավոր հատված գործընկերության մեխանիզմները,

բ. մինչև 2017 թվականի ավարտը մարզային գործառնական ծրագրերի իրականացման նպատակով ներդնել մարզային զարգացման հիմնադրամների համակարգի (ՄԶՀ), հիմնադրամները ձևավորել ՀՀ պետական բյուջեի, դրամաշորհների, այլ աղբյուրների հաշվին, որոնց միջոցով կֆինանսավորի մարզերի գործառնական ծրագրերի միասը,

գ. մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել մարզերում տնտեսական գարգացումն ապահովելով նպատակով ԵՄ-ի և ՄԱԶԾ-ի հետ համատեղ ծրագրեր (օժանդակություն մարզային գարգացման ծրագրերի իրականացմանը (ԵՄ ծրագրեր՝ օժանդակություն խոշորացված համայնքներին - 4 և Տարածքային գարգացման փորձնական ծրագրեր /PRDP/ - 7), ՄԱԶԾ ծրագրի՝ ինտեգրված աջակցություն գյուղական բնակավայրերի գարգացմանը Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում ծրագրի իրականացում)։

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել տարածքային կառավարման հայեցակարգը՝ ամրագրելով տարածքային կառավարման համակարգում բովանդակային փոփոխություններ՝ վերահմաստավորելով տարածքային կառավարման մարմինների առաքելությունը։

3) 2018-2022 թվականների ընթացքում շարունակել սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերը։

2. Տեղական ինքնակառավարման բնագավառում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2019 թվականների ընթացքում շարունակել վարչատարածքային բարեփոխումները, ավարտել համայնքների խոշորացման գործընթացը։ Այս ուղղությամբ բարեփոխումների հաջողությունը երաշխավորելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

ա. 2017-2019 թվականների ընթացքում շարունակել վարչատարածքային բարեփոխումները, ավարտել համայնքների խոշորացման գործընթացը,

բ. 2017-2022 թվականների ընթացքում ձևավորել միջհամայնքային միավորումները, ներդնել միջհամայնքային համագործակցության տարբեր ձևեր՝

- խոշորացման գործընթացին զուգընթաց զարգացնել ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխսադրումները,
- համայնքների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով մատուցվող ծառայությունների համար մինչև 2017 թվականի ավարտը սահմանել և ներդնել հստակ չափորոշիչներ, պատվիրակել համայնքային ծառայություններ մասնավոր ձեռնարկություններին՝ համայնք – մասնավոր հատված գործընկերության շրջանակներում,

գ. ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, մասնավորապես, աղետների ռիսկի նվազեցման և աղետների արձագանքման, անասնաբուժական, ֆիտոսանիտարական, ծառայությունների, առաջնային առողջապահության ոլորտներում, բարձրացնել գյուղական բնակավայրերում նախադպրոցական և տարրական

կրթության որակը՝ ուսուրաների համատեղ օգտագործման և նոր մեխանիզմների ներդրման ճանապարհով,

դ. մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ներդնել համայնքների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային համակարգը, ներդնել համայնքային կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգեր, ստեղծել տեղական հարկերի բազաների և վճարումների առցանց համակարգ,

2) համայնքային բյուջեների ձևավորման և համայնքների ֆինանսական կառավարման բնագավառում բարեփոխումների հիմնական նպատակը համայնքներում ծրագրային բյուջետավորման կիրառումը և բյուջեների ու համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի միջև կապի ամրապնդումն է, համայնքի եկամուտների ծավալում համայնքների սեփական եկամուտների բաժնեմասի հետևողական ավելացումը և ֆինանսական համահարթեցման բազմագործոն համակարգի ամբողջականացումն է:

Մասնավորապես, նախատեսվում է՝

ա. 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ծրագրային բյուջետավորման աստիճանական ներդրում համայնքի տեղականի, ոլորտային (ծրագրային) նպատակների, վերջնական արդյունքների, ծրագրերի և միջոցառումների սահմանման նպատակով,

բ. 2017-2022 թվականների ընթացքում հետևողականորեն ավելացնել համայնքի եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտների բաժնեմասը՝ հավաքագրման կարգուկանոնի բարձրացման, վճարովի նոր ծառայությունների մատուցման, ինչպես նաև այլ հնարավոր նոր եկամուտների գանձման միջոցով,

գ. 2018 թվականից սկսած անցնել սուբվենցիաների տրամադրման նոր քաղաքականությանը. մրցակցային սկզբունքով սուբվենցիայի տրամադրում լավագույն ծրագրեր ներկայացրած համայնքներին,

դ. 2019 թվականից սկսած իրականացնել ֆինանսական համահարթեցման բազմագործոն համակարգի ամբողջական կիրարկում:

3. Գործարարության զարգացման ուղղությամբ՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, բնակչության կենսապահովման բարձրացմանն ու աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ներդրումային և գործառնական ծրագրերի խթանման և դրանց արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ներդրումային ծրագրերին ներկայացվող հստակ չափորոշիչներ, որոնց կիրառմամբ գնահատման արդյունքներով կորոշվի պետական աջակցության շրջանակը.

2) ՀՀ տարածքներում գործարարության զարգացման նպատակով 2017-2022 թվականների ընթացքում պետական և ֆինանսական կառույցների հետ համատեղ անցկացնել դասընթացներ՝ ներդրումային ծրագրերի մշակման և բիզնես-ծրագրերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

3) 2017-2022 թվականների ընթացքում միջոցներ ձեռնարկել ներդրումային և գործառնական ծրագրերի ֆինանսավորման գործընթացներում առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակեպությունների ներգրավման ուղղությամբ.

4) 2018-2022 թվականների ընթացքում ՀՀ պետական տարեկան բյուջեների կազմման ժամանակ առաջարկություններ մշակել ներդրումային ծրագրերի վարկավորման տոկոսադրույթների սուբսիդավորմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսների ներառման ուղղությամբ:

4. Կոչտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը բարեկավելու, զարգացնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի կոչտ կենցաղային թափոնների կառավարման համակարգերի զարգացման հայեցակարգերը.

2) 2017-2019 թվականների ընթացքում հանրապետության բոլոր մարզերի համար մշակել ԿԿԸԿ-ի ենթահամակարգերի ներդրման առանձին հայեցակարգեր, որոնց լոկալ առանձնահատկությունները հաշվի առնելով կսպանավեն ենթահամակարգերի կայացման ուղենիշերը.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել աղբահանության և սանիտարական մաքրման նորմեր.

4) 2018-2020 թվականների ընթացքում մշակել աղբավայրերի նախագծման, կառուցման և շահագործման կանոնակարգը:

1.3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏԱՄԱԽԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱԽՅՈՒՆ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

ՀՀ կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և ՀՀ օրենքներով երաշխավորված մարդու իրավունքների և իիմսարար ազատությունների պաշտպանության արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար:

Արդարադատության ոլորտում ՀՀ կառավարության բարեփոխումներն ուղղված են լինելու ՀՀ Սահմանադրության փոփոխություններից բխող օրենսդրության արդիականաց-

մանը, մարդու իրավունքների և ազատությունների առավել արդյունավետ պաշտպանությանը, դատական համակարգի մատչելիության և արդյունավետության ապահովմանը, նորարարական լուծումների միջոցով արդարադատության համակարգի նպատակների իրացմանը:

Նոր դատական օրենսգիրքը սահմանադրական օրենքի մակարդակում նախատեսում է վերհանված խնդիրների լուծումները, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում ստորև նշված հիմնական լուծումներով՝

- դատական համակարգում տարբեր ատյանների դատարանների լիազորությունների համակարգը պետք է լինի հստակ տարանջատված և բաղանսավորված,
- անհրաժեշտ է կատարելագործել դատարանների և դատավորների ներքին անկախության ապահովման մեխանիզմները,
- դատական գործընթացներում հնարավորինս պետք է անցում կատարել էլեկտրոնային ձևաչափերի կիրառմանը,
- անհրաժեշտ է վերանայել դատական քննության ընթացակարգը՝ ներդնելով ժամանակակից գործիքներ,
- դատարանների արդյունավետությունը բարձրացնելու և ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով անհրաժեշտ է խթանել վեճերի այլընտրանքային լուծման եղանակների զարգացմանը:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար պետք է բարձրացվի դրա հասանելիությունը, և սահմանվեն նոր գործուն մեխանիզմներ:

Անշափահասների արդարադատության ոլորտում բարեփոխումներն ուղղված են լինելու երեխաների համար արդարադատության հասանելիություն ապահովող կառուցակարգերի ստեղծմանը և զարգացմանը, իրավախսախտ, տուժող, վկա երեխաների իրավունքների պաշտպանությանը և անհրաժեշտ առանձնահատկությունների արտացոլմանը ՀՀ օրենսդրության մեջ և պրակտիկայում:

Արդարադատության համակարգի նկատմամբ քաղաքացիների և բիզնեսի սպասումներն արդարացնելու նպատակով հարկադիր կատարման ոլորտում պետք է իրականացվեն բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն ՀՀ-ում ներկայում գործող հարկադիր կատարման ենթակա ակտերի՝ սահմանված պահանջների արդյունավետ, համաշափորեն, սեղմ ժամկետներում և կողմերի իրավունքների պահպանմամբ իրականացմանը՝ միաժամանակ

ապահովելով տեղեկատվական համակարգերի համակցումը խոցելի խմբերի իրավունքների երաշխավորմանը, ինչպես նաև բիզնես միջավայրի բարելավմանը:

ՀՀ կառավարությունը ծրագրի շրջանակներում ջանքեր կգործադրի քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների ներդրման, կրկնահանցագործության կրճատման և հանցանք կատարած անձանց սոցիալական վերաբնտեղրման գործընթացն ավելի արդյունավետ իրականացնելու ուղղությամբ: Միջոցներ կձեռնարկվեն պրոբացիայի ծառայության նպատակային գործունեությունը և արդյունավետությունն ապահովելու, պատիժը կրող և կալանավորված անձանց իրավունքները պաշտպանելու և օրենքով սահմանված պատժի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կառուցակարգեր ստեղծելու ուղղությամբ:

Արդարադատության մատչելիության և արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է ընդլայնել ՀՀ նոտարիատի ինստիտուտի ներգրավման շրջանակները, ինչը կնպաստի անձանց միջև հետագա վեճերի կանխարգելմանը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2019 թվականի ավարտը հետևողականորեն իրագործել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը՝ սերտ համագործակցելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ մինչև 2019 թվականի ավարտը մշակել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը:

2. Դատական համակարգում բարեփոխման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը լրամշակել «Դատական օրենսգիրը» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրը ՀՀ օրենքների նախագծերը և լրամշակված տարրերակները ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը.

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների նոր ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր.

3) մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքից բխող անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքներ.

4) մինչև 2019 թվականի ավարտը բարձրագույն դատական խորհրդի (համաձայնությամբ) հետ համատեղ զարգացնել դատարանների համապարփակ էլեկտրոնային կառավարման համակարգը:

3. Արդարադատության մատչելիության ապահովման և փաստաբանական գործունեության բարելավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել Pro-bono իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց խրախուսման մեխանիզմներ.

2) մինչև 2019 թվականի ավարտն ընդլայնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակները, մասնավորապես, գույքային (գումարի) պահանջով գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը բարձրացնել՝ նվազագույն աշխատավարձի հազար հինգ հարյուրապատիկի.

3) մինչև 2020 թվականի ավարտն անվճար իրավաբանական օգնության տրամադրմանը զուգահեռ ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ ներդնել մատչելի իրավաբանական օգնության մատուցման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգեր.

4) մինչև 2021 թվականի ավարտը փաստաբանների համար ներդնել իրավաբանական սխալից պարտադիր ապահովագրության ինստիտուտը՝ մշակելով չափանիշներ մասնագիտական սխալից առաջացած վնասի հատուցման համար:

4. Անչափահասների արդարադատության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2020 թվականի ավարտը բարեփոխել իրավախախտ, տուժող և վկա երեխաների իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության ապահովմանը և երեխայի դատավարություններում մասնակցության կարգավորմանն ուղղված օրենսդրությունը, այդ թվում՝ մինչև 2022 թվականի ավարտը մշակել, փորձարկել և ներդնել արդարադատության ոլորտում իրավախախտ, վկա և հանցագործությունից ու բռնությունից տուժած երեխաների վերականգնման և պաշտպանության ծառայությունների հայեցակարգը:

5. Քրեակատարողական ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել կալանավորված անձանց և դատապարտյալների մասնագիտական կրթության նոր ծրագրեր, ձեռնարկել միջոցներ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մասնագիտական կրթության շարունակական ապահովման ուղղությամբ.

2) մինչև 2018 թվականի ավարտը բարեփոխել քրեակատարողական առողջապահական համակարգը և բարեկավել քրեակատարողական հիմնարկների առողջության առաջնային պահպանման ծառայությունների որակը, ստեղծել բժշկական ծառայողների անկախության երաշխիքներ.

3) մինչև 2019 թվականի ավարտը մշակել Քրեակատարողական նոր օրենսգիրքը և ենթաօրենսդրական ակտերը՝ վերանայելով ազատությունից զրկման վայրերում անձանց պահման ռեժիմները, ներդնելով խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման համակարգը, վերափոխելով քրեակատարողական ծառայողների արարքների կամ ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմները.

4) մինչև 2020 թվականի ավարտն իրականացնել քրեակատարողական համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումներ, քրեակատարողական ծառայության մի շարք գործառույթների, այդ թվում՝ սննդի ապահովման գործառույթը՝ մասնավոր հատվածին պատվիրակելու (outsourcing) հնարավորության վերաբերյալ և հանձնութների տրամադրման սահմանափակման համապատասխան ուսումնասիրություն և ծրագրի մշակում.

5) մինչև 2020 թվականի ավարտը մշակել և իրականացնել քրեակատարողական ծառայությունում կալանավորված անձանց և դատապարտյալների, պրոբացիայի պետական ծառայությունում շահառուների, ինչպես նաև պատժից ազատված անձանց զբաղվածությունն ու վերասցիալականացումն ապահովելու ուղղությամբ մասնագիտական ծրագրեր և միջոցառումներ.

6) մինչև 2022 թվականի ավարտը բարեկավել քրեակատարողական առողջապահության երկրորդային հիվանդանոցային ծառայությունները.

7) մինչև 2022 թվականի ավարտը մշակել և իրականացնել քրեակատարողական համակարգի աշխատողների աշխատանքային պայմանների բարեկավմանն ու սոցիալական երաշխիքների համակարգի բարեփոխմանն ուղղած ծրագրերը:

6. Պրոբացիայի ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել պրոբացիայի պետական ծառայության կողմից իրականացվող էլեկտրոնային հսկողության համակարգի գործարկումը՝ ըստ փուլերի.

2) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել պրոբացիայի պետական ծառայությունում վերասցիալականացման ծրագրեր՝ շահառուների առնվազն 30 տոկոսի ներգրավմամբ.

3) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրարկումը.

4) մինչև 2022 թվականի ավարտն ամրողական իրականացնել գործնականում պրոբացիայի պետական ծառայության գործառույթները և զարգացնել ու կատարելագործել ծառայության կարողությունները:

7. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը կանոնակարգել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հայցի ապահովման նպատակով իրականացվող գործողությունները՝ սահմանելով արգելադրվող գույքի պարտապանի ընտրության, ինչպես նաև հայցի ապահովման միջոցների վերացման առավել պարզեցված ընթացակարգ.

2) մինչև 2017 թվականի ավարտը ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը հասանելի դարձնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի, ինչպես նաև կենսաթոշակ ստացող քաղաքացիների տվյալների ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական բազան.

3) մինչև 2018 թվականի ավարտը հստակեցնել կատարողական գործողությունների՝ ներառյալ փորձաքննությունների կատարման ժամկետները՝ հասցնելով դրանք նվազագույնի և համապատասխանեցնելով հարկադիր կատարման մարմնի գործիքակազմին.

4) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել հարկադիր կատարողների և կատարողական վարույթների մասնակիցների միջև առկա փաստաթղթաշրջանառությունը՝ մեծապես էլեկտրոնային եղանակով, կատարողական գործողությունների ժամկետների հստակ ամրագրմամբ.

5) մինչև 2019 թվականի ավարտը ներդնել որոշակի կատարողական վարույթների շրջանակներում տեսաձայնագրման միջոցներ՝ ուղղված կոնկրետ կատարողական գործողություններին.

6) մինչև 2019 թվականի ավարտն ստեղծել էլեկտրոնային համակարգ դատարանների և դատական ակտերի հարկադիր կատարման մարմնի միջև՝ միաժամանակ վերացնելով դատավարության մասնակիցներին կատարողական թերթ տրամադրելու գործընթացը:

8. Նոտարական համակարգում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել էլեկտրոնային կապը հանրային ծառայություններ մատուցող պետական մարմինների նոտարական գործողություններն արդյունավետ իրականացնելու և «մեկ պատուհան» սկզբունքով ծառայություններ մատուցելու նպատակով.

2) մինչև 2018 թվականի ավարտն ընդլայնել իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող ապացույցների շրջանակը՝ ներառելով վկայի ցուցմունքները՝ դրա հետ մեկտեղ քրեական պատասխանատվություն նախատեսելով վկայի կողմից նոտարին սուտ ցուցմունք տալու համար.

3) մինչև 2020 թվականի ավարտը զարգացնել ‘նոտարի’ որպես կանխարգելող արդարադատություն իրականացնող մարմնի կարողությունները:

9. Սնանկության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը սահմանել և կանոնակարգել ՀՀ արդարադատության նախարարության կողմից սնանկության կառավարքի նկատմամբ կարգապահական վարությունների հարուցման և պատասխանատվության միջոցների կիրառման արդյունավետ գործիքակազմ.

2) մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ խթաններ ստեղծելով սնանկության վարույթում կազմակերպությունների առողջացմանը և դրա համար գործուն միջոցներ ձեռնարկել՝ որպես գերակայություն սահմանելու ուղղությամբ:

3) մինչև 2019 թվականի ավարտը կատարելագործել սնանկության կառավարիչների որակավորման քննությունների անցկացման կարգը:

10. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2019 թվականի ավարտն արդիականացնել քաղաքացիական կացության ակտերի ոլորտի օրենսդրությունը, այդ թվում՝ նախատեսել գործառնություններն առավելապես էլեկտրոնային եղանակով իրականացնելու գործիքակազմ և ներդնել «մեկ պատուհան» ծառայությունը՝ ապահովելով ՔԿԱԳ-ի տարածքային մարմինների վերակազմակերպումը տարածքային սպասարկման գրասենյակներին.

2) մինչև 2019 թվականի ավարտը բարեփոխել ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ պաշտոնական փաստաթղթերի ապոստիլով վավերացման ընթացակարգերը, ձևավորել և ներդնել էլեկտրոնային ապոստիլի համակարգ.

3) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել ՀՀ տարածքում յուրաքանչյուր ծննդյան և մահվան ակտային գրանցումը՝ անկախ պետական գրանցման համար նախատեսված դիմում ներկայացնելու հանգամանքից.

4) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել երեխայի միջազգային առևտնագման և օտարերկրյա որդեգրումների բնագավառի բարեփոխումներ՝ օրենսդրական մակարդակով ամրագրելով բոլոր ընթացակարգերը.

5) մինչև 2022 թվականի ավարտը թվայնացնել քաղաքացիական կացության ակտերի թղթային արխիվը:

11. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել իրավաբանական անձանց պետական գրանցման գործնական ամրողությամբ էլեկտրոնային եղանակով՝ բոլոր գրանցումների համար առցանց դիմելու հնարավորությամբ.

2) մինչև 2019 թվականի ավարտն արդիականացնել Հայաստանի Հանրապետության իրավաբակային ծանուցումների պաշտոնական խնտերնետային www.azdarar.am կայքը, ներդնել հայտարարությունների տրամադրման առցանց էլեկտրոնային համակարգ.

3) մինչև 2020 թվականի ավարտը հիմնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հենքի վրա Բիզնես ռեգիստրի գործակալություն և մշակել ու ներդնել միասնական էլեկտրոնային բիզնես ռեգիստրի համակարգ.

4) մինչև 2021 թվականի ավարտը թվայնացնել իրավաբանական անձանց արխիվային փաստաթղթերը, ստեղծել էլեկտրոնային արխիվ.

5) մինչև 2022 թվականի ավարտը պարզեցնել և զարգացնել ապահովված իրավունքների գրանցման համակարգը:

12. Էլեկտրոնային արդարադատության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը լիարժեք գործարկել էլեկտրոնային նոտար՝ www.e-notary.am և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի www.e-register.am էլեկտրոնային համակարգերը: Հնարավորություն ստեղծել էլեկտրոնային ռեգիստրի բոլոր գործառույթներն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար.

2) մինչև 2019 թվականի ավարտը զարգացնել նորմատիվ իրավական ակտերի իրապարակման համակարգը՝ գործարկելով պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիրը.

3) մինչև 2019 թվականի ավարտը ձևավորել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բջջային էլեկտրոնային թվային ստորագրությամբ ծառայությունների մատուցման համար իրավական հիմք.

4) մինչև 2019 թվականի ավարտը թվայնացնել ՀՀ դատական արխիվային՝ նյութերը՝ երեք տարվա կտրվածքով, ինտեգրել թվայնացված նյութերը գործող ավտոմատացված համակարգերին և իրականացնել թվային արխիվի համակարգի վերաբերյալ հանրության իրազեկման միջոցառումներ.

5) մինչև 2020 թվականի ավարտն ստեղծել արդարադատության ոլորտում ձևավորված էլեկտրոնային բազաների և ծրագրային լուծումների հիման վրա քաղաքացիներին առցանց ծառայությունների մատուցման կարողություններ՝ նույնականացման քարտերի և բջջային էլեկտրոնային թվային ստորագրության գործիքների օգտագործմամբ.

6) մինչև 2020 թվականի ավարտը մշակել, ներդնել և գործարկել պրոբացիայի պետական ծառայության էլեկտրոնային կառավարման (e-probation) ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը.

7) մինչև 2019 թվականի ավարտն ամրողական գործարկել «Կալանավորված անձանց և դատապարտյաների ռեգիստր» էլեկտրոնային կառավարման համակարգը (e-penitentiary).

8) 2019-2020 թվականներին՝ ներդնել ՀՀ արդարադատության նախարարության թեժ գիծ ծառայության էլեկտրոնային համակարգ.

9) 2020-2021 թվականներին՝ համակցել էլեկտրոնային արդարադատության բաղկացուցիչ մասը կազմող էլեկտրոնային կառավարման համակարգերը.

10) մինչև 2022 թվականի ավարտն ստեղծել հանրագրերի էլեկտրոնային համակարգ:

13. Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը զարգացնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը, ստեղծել և գործարկել միջազգային իրավական չափորոշիչներով նախատեսված և պահանջներին համապատասխանող հակակոռուպցիոն կանխարգելիչ ինքնավար մարմին.

2) մինչև 2018 թվականի ավարտը ձեռնարկել միջոցներ գործող հակակոռուպցիոն ուղղմավարության շարունակական իրականացման ուղղությամբ՝ շեշտադրելով հանրային ծառայության համակարգում բարեխիղճ, ազիվ ու արհեստավարժ կաղղերով համալրելու անհրաժեշտությունը: Մշակել հակակոռուպցիոն նոր գործուն, հեռանկարային ուղղմավարություն՝ նոր հակակոռուպցիոն թիրախային ոլորտների սահմանմամբ.

3) մինչև 2019 թվականի ավարտը ձեռնարկել միջոցներ հայտարարագրման, էթիկայի, անհամատեղելիության և այլ սահմանափակումների ինստիտուտների շարունակական կատարելագործման ուղղությամբ և շարունակաբար ընդլայնել հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկը.

4) մինչև 2019 թվականի ավարտը հստակեցնել օրենսդրական մակարդակում կոռուպցիոն հանցագործությունների և զանցանքների շրջանակները.

5) մինչև 2021 թվականի ավարտը բարելավել հակակոռուպցիոն ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման համակարգը.

6) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել, զարգացնել ազդարարների պաշտպանության գործուն կառուցակարգերը և ապահովել դրանց կիրարկումը: Ստեղծել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ՝ ազդարարին անանուն կերպով հաղորդում տալու հնարավորության տրամադրմամբ.

7) մինչև 2019 թվականի ավարտը ձեռնարկել միջոցներ ԱՃԹՆ (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) վավերացման գործընթացի շրջանակներում անհրաժեշտ միջոցառումների իրականացման ուղղությամբ.

8) մինչև 2020 թվականի ավարտը ձեռնարկել միջոցներ կոռուպցիոն հանցագործություններ քննող նախաքննական մարմինների ենթակայության և կոռուպցիոն հանցագործությունների քննության լիազորությունները մեկ մարմին տրամադրման հնարավորության ուսումնասիրման ուղությամբ:

14. Գործարար միջավայրի բարելավման և բիզնեսի շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել «Գործարարների շահերի պաշտպանի մասին» ՀՀ օրենքի նախագիծ և այն ներկայացնել ՀՀ Ազգային ժողով ու մինչև 2018 թվականի ավարտը՝ որպես գործարարների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վեճերի լուծման այլընտրանքային արդյունավետ միջոց ներդնել՝ գործարարների շահերի պաշտպանի ինստիտուտ:

1.4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԿԱՐԳ

Հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս մակարդակը և հակաիրավական երևոյթներին հակագդելու՝ հասարակության ավանդաբար մեծ սպասելիքները ուստիկանությունից, հարկադրում են ունենալ այնպիսի լիազորություններով

ոստիկանություն, որն ունակ կլինի համարժեք արձագանքելու հանցավորության գլոբալիզացիայից բխող որոշ սպառնալիքների (ահարեւէչություն, վերազգային հանցագործություններ և այլն), հակաիրավական ուսունակություններից պաշտպանելու մարդուն ու հասարակությանը, իր գործունեության սկզբունքներով համապատասխանելու ժողովրդավարական արժեքային համակարգին:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Հասարակական վստահություն և քաղաքացիներից աջակցություն ստանալու գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2019 թվականի առաջին կիսամյակի ավարտը հավաքները լուսաբանող լրագրողների հետ քաղաքակիրթ գործակցության ապահովման նպատակով, ոստիկանությունը քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների մասնակցությամբ ապահովելու է մեթոդական ուղեցույցերի մշակումն ու հրապարակումը, որոնք վերաբերելու են հավաքների սահմանափակման կամ դադարեցման հիմքերին, պայմաններին, կարգին, խաղաղ հավաքի բոլոր չափորոշիչներին, խաղաղ հավաքին ոստիկանական աջակցություն ցուցաբերելու սահմաններին, ինչպես նաև հավաքները լուսաբանող լրագրողների հետ գործակցության կանոններին:

2. ՀՀ ոստիկանության գործունեության մեջ ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործման ընդլայնման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել ժամանակակից տեխնիկական միջոցները՝ ոստիկանության գործառույթներն իրականացնելու համար, մասնավորապես, հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգությունն ապահովելու, հանցագործությունները, վարչական իրավախսախտումները հայտնաբերելու, կանխելու, խափանելու գործառույթների իրականացման համար.

2) մինչև 2020 թվականի ավարտն իրենց ծառայողական պարտականությունները կատարող ոստիկանության ծառայողների գործողությունները վերահսկելու և դրանվ իսկ մարդու իրավունքների պաշտպանության առավել գործուն կառուցակարգերի ներդրման նպատակով նախատեսվում է ձեռք բերել և օգտագործել պարեկային ծառայողների համագետատին ամրացվող շարժական տեսաձայնագրող սարքեր:

3. ՀՀ ոստիկանության կանխարգելիչ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտն ստեղծել Գյումրի և Վանաձոր քաղաքներում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների

կազմում թվային տեխնոլոգիաների օգտագործմամբ շահագործվող օպերատիվ կառավարման կենտրոններ, որոնք թույլ են տալու իրավախսաստումների և հանրուեն վտանգավոր դեպքերի վերաբերյալ ամրող տեղեկատվությունը կրուտակել մեկ կենտրոնում, ապահովել դրանց օպերատիվ արձագանքումը, ճիշտ և արդյունավետ կառավարել ոստիկանության ուժերը և միջոցները:

1.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակատղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ հանդիսանալով պետության անվտանգության ապահովման քաղկացուցիչ տարր, նպաստելու է երկրի կայուն զարգացմանը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Արտակարգ իրավիճակների բնակչության պաշտպանության բնագավառի իրավական դաշտի կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Մեյսմիկ պաշտպանության մասին» և այլ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նախագծերի մշակում:

2. Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատրաստվածության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2022 թվականների ընթացքում կազմակերպել և ապահովել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության շտաբների և քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պատրաստությունը:

3. Աղետների ռիսկի նվազեցման էլեկտրոնային միասնական կառավարման համակարգի ստեղծման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2020 թվականների

ընթացքում գործարկել աղետների ռիսկի նվազեցման էլեկտրոնային միասնական կառավարման համակարգ:

4. Աղետների վաղ ազդարարման և հուսալի ու կայուն կապի համակարգերի զարգացման նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2022 թվականների ընթացքում ներդնել բնակչության աղետների վաղ ազդարարման և իրազեկման ժամանակակից համակարգ՝ թվային կապի կիրառմամբ:**

5. Փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի զարգացման, ուսուցման և համագործակցության նպատակով 2017-2022 թվականների ընթացքում **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) ստեղծել և զարգացնել փրկարարական և արագ արձագանքման այլ ուժեր, այդ թվում՝

ա. սահմանամերձ բնակավայրերում, մասնավորապես, **ՀՀ Տավուշի մարզի քաղաքացիական պաշտպանության 10 հենակետերի կարողությունների զարգացում, ինչպես նաև **ՀՀ Տավուշի մարզում 6 և ՀՀ Վայոց ձորի մարզում 4 քաղաքացիական պաշտպանության հենակետերի ստեղծում,****

բ. անտառային հրդեհների մոնիթորինգի և կանխատեսման կարողությունների զարգացում,

գ. ինժեներասակրավորական և կինոլոգիական խմբերի կարողությունների զարգացում,
դ. ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում միջազգային չափանիշներին համապատասխան ներքին որակավորված թիմերի ստեղծում,

ե. 2019-2021 թվականների ընթացքում **ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում վարժականապարակների կառուցում,**

գ. 2018-2022 թվականների ընթացքում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի հետ համատեղ ուսումնավարժությունների անցկացում, փոխհամագործակցության և գործնական հմտությունների մակարդակի բարձրացում:

6. Աղետների ռիսկի նվազեցման կրթական համակարգի զարգացման նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հավատարմագրման գործընթացը՝ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և նոր կրթական մեխանիզմների, ծրագրերի ներդրմամբ:

7. Աղետների բժշկության համակարգի կատարելագործման նպատակով 2017-2022 թվականների ընթացքում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) իրականացնել վերապատրաստումներ ուղղված բուժաշխատողների մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսուցողական բնույթի միջոցառումներ.

2) ստեղծել ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ աղետների բժշկությամբ վերապատրաստված մասնագետների հաշվառման միասնական բազա:

8. Համայնքի աղետների ռիսկի կառավարման կարողությունների հզորացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2022 թվականների ընթացքում ներդնել սահմանամերձ մարզերի քաղաքային համայնքներում ճշնաժամային կառավարման համակարգ՝ աղետների ռիսկի կառավարման գործընթացներում՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ:

9. Միջազգային և տարածաշրջանային մակարդակով կայուն գործընկերության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2022 թվականների ընթացքում զարգացնել հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնը, ինչպես նաև խթանել մասնակցությունը միջազգային կառույցների և գործընկեր երկրների կողմից իրականացվող աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված համատեղ ծրագրերին և միջոցառումներին:

10. Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած մարդկային անվերահսկելի հոսքերի կառավարման կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2020 թվականների ընթացքում մշակել և հաստատել «Խոշոր աղետների կամ ռազմական գործողությունների հետևանքով առաջացած մարդկային անվերահսկելի հոսքերի կառավարման կարողությունների զարգում» պլան:

11. Սեյսմիկ պաշտպանության ծառայության համակարգի բարեփոխման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում արդիականացնել, թվայնացնել և ընդլայնել սեյսմիկ վտանգի հուսալի մոնիթորինգն ապահովող ազգային դիտացանցը՝ կապի ժամանակակից միջոցների համալրմամբ.

2) 2018-2020 թվականների ընթացքում մշակել կարևոր ջրամբարների պատվարների սեյսմիկ խոցելիության գնահատման ծրագիր:

12. Հիդրոգերևութաբանական և հակակարկտային համակարգերի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել հակակարկտային պաշտպանության համակարգի զարգացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագիր.

2) 2018-2019 թվականների ընթացքում ստեղծել հակակարկտային պաշտպանության առավել արդյունավետ և փոխացնող համակարգ՝ ներառելով նաև հրթիռային պաշտպանության ժամանակակից միջոցները.

3) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել հիդրոլոգիական և օդերևութաբանական դիտարկումների պետական ցանցի փուլային արդիականացում և ավտոմատացում:

1.6 ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության կարևոր գործառույթներից է պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարումը։ Պետական գույքի կառավարման արդյունավետության խնդիրն լուծելու համար պետական գույքի կառավարման քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու՝

- պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը, վարչարարության պարզեցումը,
- պետություն-մասնավոր հատված գործընկերության համար բարենպաստ պայմանների ստեղծումը, որը կապահովի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
- պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների շահութաբերության բարձրացումը,
- առևտրային բարձր պահանջարկ ունեցող պետական գույքի սեփականության իրավունքի օտարումը, որը կապահովի հանրային օգտակարության բարձրացումը.

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման և արմատապես բարելավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը հաստատել 2018-2020 թվականների պետական գույքի կառավարման ծրագիրը, որի մեջ կներառվեն պետական գույքի հետ նախատեսվող

բոլոր գործողությունները՝ իրենց ժամկետային առաջադրանքներով, սպասվելիք ֆինանսական արդյունքներով և պահանջվող ծախսերով, միջոցառումների համար պատասխանատու մարմիններով, ակնկալվող արդյունքներով.

2) մինչև 2020 թվականի ավարտն իրականացնել պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցումը՝ նախատեսելով նաև ֆոնդային բորսայի միջոցով պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի վաճառքի կազմակերպումը.

3) 2018 թվականի ընթացքում պարզեցնել պետական գույքի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման ընթացակարգերը՝ նվազագույն վարչարարության ապահովմամբ.

4) 2018 թվականի ընթացքում պետական ծախսերի կրճատման և հանրությանը մատուցված ծառայությունների որակի բարձրացման նպատակով ուսումնասիրել ՀՀ մարզերում պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորությունը և սերկայացնել առաջարկություններ պիլոտային իրազործման վերաբերյալ:

5) 2018-2020 թվականների ընթացքում իրականացնել եռամյա ծրագրով սահմանված առաջադրանքների և միջոցառումների տնտեսական և ֆինանսական արդյունքների հսկողությունը, այդ թվում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ծրագրերի կատարման հսկողությունը:

2. Պետություն-մասնավոր հատված գործընկերության ընդլայնման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափը, որի արդյունքում մասնավոր հատվածին տարաժամկետման պայմանով հնարավոր կրառնա փոխանցել տնտեսական շրջանառությունից դուրս մնացած պետական գույքը.

2) 2018-2022 թվականների ընթացքում ներդրումային բարձր գրավչություն ունեցող պետական գույքի օտարման և մասնավորեցման գործիքակազմում ստանալ առավել տարածում ունեցող «գործարար միավորի վաճառք» սկզբունքը, որի իրականացման համար գործարքի գումարի 10 տոկոսը կուղղվի գույքի վաճառքի նախապատրաստման և կազմակերպման ծախսերի փոխհատուցմանը.

3. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության, շահութաբերության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը սահմանել և 2018-2022 թվականների ընթացքում ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների աշխատանքի հիմնական ֆինանսական, տնտեսական և որակական ցուցանիշները, այդ թվում դրանց գործարար ծրագրերի համաձայնեցման և մշտադիտարկման միջոցով.

2) 2017-2022 թվականների ընթացքում լայնորեն կիրառել հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու պրակտիկան.

3) մինչև 2018 թվականի ավարտը վերակազմակերպել 100 տոկոս պետական սեփականությամբ առևտրային կազմակերպությունները ոչ առևտրային կազմակերպությունների, եթե պետական բաժնետոմսերով առևտրային կազմակերպություններն իրենց գործունեությամբ շահույթ չեն ապահովում.

4) մինչև 2018 թվականի ավարտը սահմանել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործադիր տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների աշխատանքի խրախուսման նոր ձևեր ու մեխանիզմներ:

4.Պետական գույքի կազմի և ճիշտ (նախընտրելի) կառուցվածքի ձևավորման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ստեղծել պետական գույքի վաճառքի առցանց հարթակը, որում ներկայացված կլինեն գույքի ձեռքբերման բոլոր անհրաժեշտ պայմանները.

2) մինչև 2018 թվականի ավարտն ուսումնասիրել պետական գույքի օտարման առանց նախապես հայտարարված վաճառքի մեկնարկային գնի ՀՀ-ում աճուրդային եղանակի կիրառման հնարավորությունը և ներկայացնել համապատասխան առաջարկներ:

1.7. ԿԱԴՎԱՏԾՐ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության որոշ պետական և մասնավոր կազմակերպություններ աշխատանքներ են սկսել երկրատեղեկատվական համակարգերի (այսուհետ՝ ԵՏՀ) ստեղծման ուղղությամբ, սակայն դրանք լուծում են միայն իրենց քննազարդությունը և աշխատավայր համապատասխան առաջարկները:

Ուսումնասիրելով միջազգային առաջադեմ փորձը և համաձայն INSPIRE 2007/2/EC դիրեկտիվների, ՀՀ-ում առկա բոլոր գեղեցիական և քարտեզագրական նյութերն անհրաժեշտ է համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ նաև 19115:2003 «Երկրատեղեկատվական տեղեկատվություն - Մետատվյալներ» (ISO 19115:2003 "Geographic information - Metadata") տարածական տվյալների և ծառայությունների մետատվյալների ձևավորման մեթոդոգիայի, ինչպես նաև մետատվյալների պրոֆիլների կանոնների պահանջների մասով:

Պետական նշանակության աշխատանքներից է նաև կրթական համակարգի համար քարտեզների և այլ հիմնարար ատլասների ստեղծումը: Նախկինում հրատարակված 32 անվամբ ուսումնական քարտեզներն անվճար տրամադրվել են ՀՀ և Արցախի Հանրապետության դպրոցներին: Համահունչ լինելով ՀՀ կառավարության գրոսաշրջության ոլորտի զարգացման ծրագրին՝ անհրաժեշտ է հրատարակել տարարնույթ տուրիստական քարտեզներ և ճանապարհային ատլասներ: Այս քարտեզները մատչելի ձևով կներկայացնեն Հայաստանն օտարերկրյա գրոսաշրջիկներին:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Գեղեցիայի և քարտեզագրության բնագավառում առկա վիճակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2020 թվականների ընթացքում ավարտին հասցնել թեմատիկ քարտեզագրության բնագավառում Հայաստանի Ազգային ատլասի ոռուերեն տարբերակի ստեղծման աշխատանքները և հրատարակել, միաժամանակ իրականացնել ՀՀ խոշորացված համայնքների բազմաֆունկցիոնալ քարտեզների ստեղծում.

2) 2017-2022 թվականների ընթացքում ստեղծել և ներդնել ՀՀ քաղաքների բազային երկրատեղեկատվական համակարգ.

3) 2017-2022 թվականների ընթացքում ստեղծել ՀՀ տարածքի օդալուսանկարահանման նյութերի հիման վրա քաղաքների 1:2000 մասշտարի տեղագրական հատակագծեր, մասնավորապես, ՀՀ տարածքի օդալուսանկարահանման նյութերի հիման վրա կստեղծելն ՀՀ 46 քաղաքների 1:2000 մասշտարի տեղագրական հատակագծեր.

4) 2018-2019 թվականների ընթացքում ՀՀ պետական մասշտաբային շարքի քարտեզների ձևավորումը ISO միջազգային ստանդարտներին համապատասխան.

5) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել աշխարհագրական անվանումների ոլորտում աշխատանքներ, մասնավորապես, 2017-2021 թվականների ընթացքում

իրականացնել ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքներ, ինչպես նաև շարունակել մեծ պահանջարկ ունեցող տարաբնույթ բառարանների և տեղեկատունների ստեղծման և հրատարակման աշխատանքները:

2. Հողաշինարարության ոլորտում առկա վիճակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել հողերի խոշորացման ծրագիր՝ յուրաքանչյուր տարի 5-ական համայնքներում.

2) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ հողային պաշարների կառավարման գլխավոր սխեմայի կազմում:

3. Անշարժ գույքի կադաստրային գնահատման ոլորտում առկա վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2018-2019 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում սահմանել միասնական տարածագնահատման նոր գոտունորում.

2) 2018-2020 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման աշխատանքներ, ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի որակական և տնտեսական նոր գնահատում:

4. Առցանց՝ ինքնաշխատ եղանակով տեղեկատվության տրամադրման ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը զարգացնել առցանց ծառայությունները՝ այն դարձնելով այդ ծառայություններից օգտվողների համար հնարավորինս մատչելի և հարմարավետ: Կոմիտեի պաշտոնական կայքում (www.e-cadastre.am) գրանցվելուց և իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ տվյալներ ներկայացնելուց հետո, հետագա բոլոր հնարավոր տեղեկատվությունները կտրամադրվեն առցանց: Առցանց տեղեկատվության տրամադրումը կիրականացվի երկու ուղղությամբ՝

ա. այն տեղեկատվությունը, որը կարող է տրամադրվել յուրաքանչյուր անձին, կտրամադրվի առանց որևէ գրանցման, պարզ և կարճ գործողությունների միջոցով,

բ. սեփականատերերին տեղեկատվությունը կտրամադրվի համակարգում գրանցվելուց և իրենց սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի միավորների վերաբերյալ տվյալներ ներկայացնելուց հետո: Համակարգում գրանցումը և անշարժ գույքի միավորների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելն անհրաժեշտ

Է սուրբեկտին և իրեն պատկանող անշարժ գույքի միավորները միանշանակ նույնականացնելու համար:

2. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղևորությունը հիման վրա Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին քարենպաստ պայմանների ապահովման, համաշխարհային եւ տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ եւ գործընկեր երկրների հետ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման համար արտաքին քաղաքական ուղեգծի իրականացումն ուղղված է լինելու՝

- դարարախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի, մասնավորապես, ժողովորդների ինքնորոշման իրավունքի հիման վրա.

- արտաքին անվտանգության ուղղագրական քաղադրիչի ամրապնդմանը.
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, դատապարտմանը և ցեղասպանության հանցագործության կանխարգելմանը:

- Երկկողմ հարաբերություններում
- Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ուղմավարական հարաբերությունների առավել խորացմանն ու ընդլայնմանը,
- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդմանը,
- Եվրոպական երկրների հետ երկկողմ համագործակցության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը,
- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական և փոխահավետ հարաբերությունների խորացմանը,
- փոխահավետ համագործակցության ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերությունների խորացմանը,

- Չինաստանի հետ համապարփակ հարաբերությունների հետագա ամրապնդմանը: Հնդկաստանի հետ համագործակցության ընդլայնմանը,
- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության շարունակմանը,
- Ամերիկայի մայրցամաքի երկրների հետ համագործակցության զարգացմանը,
- Ասիայի, Աֆրիկայի և Օվկիանիայի պետությունների հետ համագործակցության հարաբերությունների զարգացմանը,
- հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորմանը.
- Բազմակողմ ձևաչափերում՝
- Եվրասիական տնտեսական միության շրջանակներում համագործակցության ակտիվ մասնակցությանը,
- ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցության շարունակական խորացմանը,
- Եվրոպական միության հետ համապարփակ գործընկերության ընդլայնմանը,
- ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցությանը,
- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածության և ՀՀ շահերի պաշտպանությանը,
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը ՀՀ ներգրավվածության խորացմանը, 2018 թվականին Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի պատշաճ կազմակերպմանը,
- ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակմանը, Ասիատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը,
- միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացմանը:
- Հայաստանի տնտեսական կայուն զարգացմանը նպաստելուն, մասնավորապես՝
- երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը՝ հաղորդակցության ուղիների ապաշրջափակման, արտաքին հարաբերություններում տնտեսական բաղադրիչի ընդլայնման միջոցով,
- հայրենական արտադրանքի արտահանման խթանմանը, նոր շուկաների բացահայտմանը, օտարերկրյա ներդրումների և դեպի Հայաստան զբոսաշրջիկների թվի ավելացմանը՝ դիվանագիտական ներկայացուցությունների ակտիվ ներգրավման միջոցով,

- միջկառավարական հանձնաժողովների աշխատանքների ակտիվացմանը, տնտեսական բնույթի միջցառումներին հայկական կողմի մասնակցության ապահովմանը,
 - ՀՀ տնտեսության զարգացման տարբեր ոլորտներում սփյուռքի ներուժի առավել արդյունավետ ներգրավմանը.
- օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը.
- արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին, այդ թվում՝ սիրիական աջակցության ցուցաբերմանը.
- օտարերկրյա պետություններում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմանը.
- միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն առավել ընկալելի դարձնելուն, բարենպաստ միջազգային հանրային կարծիքի ձևավորմանն ուղղված գործողությունների իրականացմանը.
- երկկողմ և բազմակողմ ձևաչափերով խորհրդարանական դիվանագիտության զարգացման և կապերի ամրապնդման աջակցմանը:

2.2. ՍՓՅՈՒԻՌԸ

Սփյուռքը, ձևավորվելով հայ ժողովրդի դժվարին ճակատագրի հետևանքով, այսօր վերածվել է Հայաստանի մրցակցային առավելության: Սփյուռքը Հայաստանի շարունակությունն է: Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, հայության ներուժի համախմբումը և նպատակային օգտագործումը, նրա բոլոր հատվածների միասնականության ապահովումը Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու կարևորագույն գործուներից է:

Սփյուռքի մեր քոյքերն ու եղբայրները բազմաթիվ ոլորտներում ունեն հարուստ փորձառություն, գիտելիք և հմտություններ, որոնց ներդրումը և կիրառումը Հայաստանում կարող են առաջ բերել նոր զաղափարներ, ներմուծել նոր աշխատանքային մշակույթ, ստեղծել մրցունակ ապրանքներ և ծառայություններ: Սփյուռքի մեր հայրենակիցները պետք է Հայաստանում կարողանան ստեղծել հավելյալ արժեք:

Հայաստան-սփյուռք գործակցությունը հիմնված է միասնականության, պատասխանատվության և քափանցիկության արժեքների հիման վրա:

ՀՀ կառավարության առաջիկա տարիների գործունեությունը հիմնականում ուղղված է լինելու սիյուռքի ներուժի թիրախային օգտագործման, ինքնակազմակերպման և ազգային ինքնության պահպանման հարցերում աշակցությանը և Հայաստանում սիյուռքահայերի ինտեգրմանը:

1. Սիյուռքի ներուժը թիրախային օգտագործելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում ապահովել Հայաստանի և սիյուռքի միջև համակողմանի կապերի սերտացման և համագործակցության մակարդակի բարձրացումը, համահայկական առաջնահերթությունների հստակեցումը, համահայկական կառույցների, մասնագիտական ընկերակցությունների և սիյուռքի անհատների հետ համատեղ ծրագրերի իրականացումը.

2) 2018-2019 թվականների ընթացքում գնահատել տարբեր երկրներում հայկական համայնքների ներուժը և մշակել ըստ երկրների՝ սիյուռքի ներուժի Հայաստանում ներգրավման գործողությունների ծրագիր.

3) 2017-2018 թվականների ընթացքում մշակել ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև այլ առյուրներից ստացված ներդրումային ծրագրերը և Հայաստանում ներդրումային հնարավորությունները՝ ՀՀ օրենսդրության, փոքր ու միջին բիզնեսին տրված արտոնությունները, ԵԱՏՄ երկրներ և միջազգային շուկաներ արտահանման առավելությունների մասին սիյուռքի գործարարներին հասանելի դարձնելու գործուն կառուցակարգերը.

4) 2017-2019 թվականների ընթացքում սիյուռքահայերի գրոսաշրջային այցելությունները դեպի Հայաստան խթանելու նպատակով հայաշատ տարածաշրջաններում ներկայացնել Հայաստանի գրոսաշրջային առավելությունները, մասնավորապես, այդ նպատակով հավաքներ, հանդիպումներ և այլ միջոցառումներ կազմակերպելով ԱՊՀ տարածքում, Եվրոպայում և ԱՄՆ-ում.

5) մինչև 2018 թվականի ավարտը մշակել սիյուռքի հայ բժիշկների, գործարարների, իրավաբանների, ճարտարագետ-ճարտարապետների և այլ մասնագիտական ընկերակցությունների գործունեության աջակցմանն ուղղված միջոցառումների ծրագիր.

6) 2018-2019 թվականների ընթացքում ապահովել Հայաստանում սիյուռքահայերի և սիյուռքահայ մասնագետների մասնակցությունն առողջապահական և Էկոտուրիզմի գարգացման ծրագրերի մշակման և իրագործման գործընթացներում:

2. Սփյուռքի ինքնակազմակերպման և ազգային ինքնության պահպանման հարցերում աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում շարունակել միջոցներ ձեռնարկել սփյուռքի ինքնակազմակերպման գործընթացները խթանելու հարցում, ինչպես նաև ցուցաբերել օժանդակություն թույլ կազմակերպված համայնքների համախմբմանը:

2) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ստեղծել և տարածել արևելահայերեն և արևմտահայերեն ուսուցողական հոդվածներ, համայնքներին տրամադրել ուսուցողական ձեռնարկներ, դասագրքեր և այլ նյութեր՝ սփյուռքահայ երիտասարդների շրջանում հայերենի բավարար իմացության մակարդակի բարձրացման նպատակով.

3) 2018-2022 թվականների ընթացքում ընդլայնել սփյուռքի երիտասարդության համար նախատեսված հայրենաճանաչության ծրագրերը, դրանց մասնակիցների թիվը և աշխարհագրությունը.

4) 2018-2022 թվականների ընթացքում շարունակել Հայոց ցեղասպանությանը վերաբերող գրքերի, ուսուցողական ձեռնարկների հրատարակությունն ու դրանց տարածումը և կազմակերպել հանդիպում-քննարկումներ Հայաստանի և սփյուռքի համապատասխան կառույցների, մասնագետների հետ.

5) 2018-2019 թվականների ընթացքում իրականացնել իպամացված և ծպտյալ հայերի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն և առաջարկել մոտեցումներ.

6) 2017-2022 թվականների ընթացքում ապահովել ՀՀ կառավարության օժանդակության շարունակականությունը վիրահայությանը, երիտասարդական և մշակութային կենտրոնների զարգացմանը.

7) մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ընդունել սփյուռքի հայալեզու ԶԼՄ-ների հետ տեղեկատվական դաշտում համագործակցության և աջակցությանն ուղղված գործողությունների ծրագիր:

3. Հայաստանի Հանրապետությունում սփյուռքահայերի ինտեգրմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում ապահովել Հայաստանում բնակվող սիրիահայերի և իրաքահայերի սոցիալական և տնտեսական ինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացման աշխատանքների շարունակականությունը.

2) մինչև 2018 թվականի ավարտը լրամշակել և ընդունման ներկայացնել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը.

3) մինչև 2019 թվականի ավարտը մշակել արտակարգ իրավիճակներում հայտնված մեր հայրենակիցների ազգային խստեգրման ռազմավարությունը՝ ներառելով միջազգային կազմակերպությունների և դուռը երկների օժանդակությունների տրամադրման գործիքակազմ:

2.3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամրողականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, Հայաստանի և Արցախի բնակչության անվտանգությունը, ռազմական բնույթի առկա և հավանական սպառնալիքների ժամանակին բացահայտումը, գնահատումը, կանխումը, կասեցումն ու չեղոքացումը:

Հայաստանի Հանրապետության անվտանգ միջավայրը, մեր երկրի առջև ծառացած ռազմաքաղաքական և ռազմական բնույթի մարտահրավերները վկայում են, որ անվտանգության ապահովումը մեր պետության առաջընթացի և կայուն զարգացման միակ գրավականն է: Հայաստանի և Արցախի անվտանգության հանդեպ ամենօրյա ուսուձգությունները, լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման անմիջական սպառնալիքներն ու դրանց իրականացման գործնական քայլերը մեզ այլընտրանք չեն թողնում, քան անընդհատ և հետևողականորեն բարձրացնել մեր երկրի անվտանգության մակարդակը, ինչը հանդիսանալու է Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթ նպատակներից մեկը:

Հայաստանի և Արցախի երաշխավորված պաշտպանության համար բավարար ռազմական կարողությունների ստեղծումը պահանջում է մեր պետության ժողովրդագրական և տնտեսական հնարավորություններին անհամաշափ ուսուրացնելու: Այդ նպատակով պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը շարունակելու է առաջնորդվել ազգ-քանակ հայեցակարգի սկզբունքներով: Դա հնարավորություն կտա մշակել համալիր և ոչ ստանդարտ լուծումներ, որոնք հիմնված կլինեն պաշտպանական քաղաքականության՝ փոխկապակցված արտաքին, տնտեսական, սոցիալական, տեղեկատվական, հասարակական, կրթական, գիտական քաղաքական ուղղությունների հետ փոխհամաձայնեցված (ինտեգրված) և հավասարակշռված, հասարակական վստահությունը վայելող որոշումների վրա և կապահովեն Հայաստանի, Արցախի և սփյուռքի ամրող ներուժի օգտագործման առավելագույն արդյունավետություն: Ըստ որում, պաշտպանության ոլորտում համազգային ներուժի օգտագործման արդյունավետության չափանիշ պետք է

հանդիսանա ոչ միայն հասանելի ռեսուրսների առավելագույն նպատակային օգտագործումը (սպառումը), այլև դրա արդյունքում ավելացված արժեքի ստեղծման խթանումը:

Մեր խնդիրն է ստեղծել ռազմաքաղաքական բարենպաստ հնարավորություններ, ռազմական արդյունաբերության և ռազմական գիտության արդի ձեռքբերումներն արդյունավետ կիրառող, դրանք խթանող, հասարակության անմիջական ներգրավմամբ նրա վստահությունն ու աջակցությունը վայելող պաշտպանության համակարգ՝ մարտունակ, մշտապես կատարելագործվող, ժամանակակից սպառագինությամբ զինված, ռազմարվեստում տեղի ունեցող զարգացումներին համընթաց արդիականացվող զինված ուժերով:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Պաշտպանության ոլորտի ներուժի և կարողությունների շարունակական, ներդաշնակ ու հավասարակշռված աճն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2020 թվականի ավարտը շարունակել զինված ուժերի՝ ժամանակակից մարտական գործողությունների վարման և կրակային խոցման կարողությունների որակական վերագինման համար անհրաժեշտ սպառագինությամբ, ռազմական տեխնիկայով և հատուկ միջոցներով համալրում՝ տնտեսության ռազմարդունաբերական ճյուղերի զարգացման, դրանց արդյունավետության և տնտեսական շահավետության խթանման, հայրենական գիտատեխնիկական արդի ձեռքբերումների կիրառման, ներդրումների խթանման և միջազգային համագործակցության միջոցով: Մասնավորապես, ռազմարդյունաբերական համալիրի զարգացման տեսլականին համահունչ, և հենվելով ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության ու դրա կիրարկումն ապահովող միջոցառումների վրա, ձևավորել ազգային ռազմական ինսվացիոն համակարգ, որտեղ ՀՀ պաշտպանության նախարարությունն ուղղակիորեն կաշխատի ՀՀ բուհերի հետ՝ ներկայացնելով կադրերի պատրաստման պահանջարկ՝ բնական գիտությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների և զինված ուժերի համար հետաքրքրություն ներկայացնող այլ մասնագիտությունների գծով: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուհերում կստեղծվեն նաև համապատասխան լաբորատորիաներ, միաժամանակ կիսթանվի ռազմարդյունաբերական համալիրում աշխատած նախկին կադրերի ինտեգրումը ՀՀ նորարարական համակարգում.

2) մինչև 2020 թվականի ավարտն ստեղծել արդյունավետ կառավարման ճկուն մեխանիզմներ հրամանատրման ու առաջնորդության արդի տեսությունների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների և նոր օրենսդրության հիման վրա, կապահովեն պաշտպա-

նության համակարգում կառավարման էթիկայի բարելավումը, թափանցիկության, հաշվետվողականության, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական ու քաղաքացիական վերահսկողության, բարեվարքության և զինված ուժեր – խորհրդարան կապի ամրապնդումը.

3) մինչև 2022 թվականի ավարտը գուգահեռաբար զարգացնել ազգային պաշտպանական կարողությունները և դաշնակցային ու գործընկերային հարաբերությունները՝ ձևավորելով անվտանգության երաշխիքների փոխկապակցված համակարգ, որը կապահովի բարենպաստ ռազմաքաղաքական միջավայրի ձևավորման և ռազմական կարողությունների զարգացման, տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանման, զինված ուժերի միջազգային ներգրավման և փոխգործունակության, առաջավոր փորձի ներդրման, հավաքական պաշտպանության միջազգային պարտավորությունների ու գործուն մեխանիզմների կիրառման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

2. Պաշտպանության ոլորտի գործունեությունը, գործառույթները և գործընթացներն ավելի արդյունավետ, գործուն և նպատակային դարձնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2019 թվականի ավարտը ներդնել ուսուրաների կառավարման արդյունավետ և թափանցիկ համակարգ, որը հնարավորություն կտա պլանավորման համակարգում քանակական ցուցանիշներից անցում կատարել որակական ցուցանիշների, ինչպես նաև ձևավորել պաշտպանական ռազմավարական (երկարաժամկետ և թիրախային) պլանավորման և ծրագրային բյուջետավորման համակարգեր:

3. Զինված ուժերի պատրաստականությունը, մարտոնակությունը և անձնակազմի մարտական վարպետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2020 թվականի ավարտը շարունակել զինված ուժերի մարտական պատրաստականության և պատրաստության, հրամանատրման համակարգի կատարելագործման, գորային օղակի բարեփոխման, կազմի օպտիմալացման, համալրման, մարտական, նյութատեխնիկական և բարոյահոգերանական ապահովման ընթացակարգերի բարելավումը՝ մարտական խնդիրների լիարժեք ու արդյունավետ կատարման նպատակով.

2) մինչև 2020 թվականի ավարտը կատարելագործել մարտական հերթապահության համակարգը, անհրաժեշտ տեսադիտարկման և հետախուզական համակարգերով համալրման, մարտական դիրքերի խնդեներական կահավորման, սպայական և

շարքային կազմի հասողի պատրաստության ծրագրերի միջոցով բարձրացնել մարտական հերթապահության մեջ ընդգրկված անձնակազմի անվտանգությունը, ցանկացած ուսնագույթյան ժամանակին բացահայտման, կանխման և խոցման հնարավորությունները:

4.Ազգ-բանակ հայեցակարգի կյանքի կոչման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2020 թվականի ավարտը՝ բարձրացնել զինվորական ծառայության գրավչությունը, զինված ուժերի արհեստավարժ բաղադրիչն ընդլայնելու համար ապահովել հավաքագրման շահավետ պայմաններ, հատկապես կարևորելով այնպիսի ծրագրային նախագծերի ներդրումը, ինչպիսիք են՝ պարտադիր զինվորական ծառայությանը զուգահեռ մարտական հերթապահության մեջ ընդգրկվելու պայմանով շարքային կազմի կամ ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով բարձրագույն կրթություն ստացած անձանց կողմից սպայական կազմի պայմանագրային զինվորական ծառայության իրականացումը, ինչպես նաև շարունակել զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրելու, կրտսեր հրամանատարական օղակում արհեստավարժ ենթասպայական կազմի զինծառայողներին ընդգրկելու աշխատանքները: Միաժամանակ, ձևավորել պահեստագորի պատրաստության արդյունավետ համակարգ՝ որպես զինված ուժերի համալրման առանցքային ուղղություններից մեկը.

2) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը յուրաքանչյուր զինապարտ քաղաքացու մասնակցությունը՝ զորակոչային համակարգում արդարության սկզբունքի ամրապնդմամբ, և ընդլայնել կամավորության սկզբունքով կանանց զինվորական ծառայության անցման հնարավորությունները՝ զինվորական ծառայությունը դիտելով որպես կրթության և մասնագիտական զարգացման բարենպաստ հնարավորություն: Միաժամանակ, մանրակրկիտ վերաքննել նախազորակոչային պատրաստության, զորակոչի արդյունավետ կազմակերպման, այդ թվում՝ բժշկական փորձաքննությունների գործընթացը՝ այս ոլորտում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.

3) մինչև 2020 թվականի ավարտը մշակել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, զինվորական հաշմանդամների, զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալական ապահովության ռազմավարություն: Նոր ռազմավարությամբ նշված անձանց համար երաշխավորել սոցիալական ապահովության գործուն համակարգ ու մեխանիզմներ, որոնք կներառն բնակարանային

ապահովածությունը, ամրողապես անվճար բժշկական օգնությունը, նաև հանգստի կազմակերպման ծառայությունները, այլ արտոնություններ ու երաշխիքներ.

4) մինչև 2022 թվականի ավարտը պաշտպանության ոլորտը վերածել պետական կառավարման նոր մոտեցումների ներդրման, հասարակական և միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորման, բարոյական նորմերի և հայրենասիրության սերմանման, գիտական (կիրառական և տեսական) և տնտեսական ներդրումների խթանման հարթակի՝ հանրային իրազեկման, հասարակական վերահսկողության և վստահության, արդարության ու թափանցիկության մթնոլորտի ամրապնդման, զինված ուժերում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների երաշխավորման, առողջ բարոյահոգերանական մթնոլորտի ապահովման միջոցով.

5) մինչև 2022 թվականի ավարտը ստեղծել ուազմական կրթության և ծառայողական առաջխաղացման թափանցիկ համակարգ, ուազմակրթական ոլորտն ապահովել ժամանակակից կրթական ու մեթոդական ծրագրերով, կայացնել և մրցունակ դարձնել նախնական զինվորական, միջին մասնագիտական, բարձրագույն ու հետքուհական կրթությունն ապահովող ազգային ուազմակրթական համակարգը, զարգացնել արժանիքների և կրթական չափանիշների վրա հիմնված ծառայողական առաջխաղացման շարժառիթավորման հնարավորությունները.

6) մինչև 2022 թվականի ավարտն ամրողացնել ուազմաքրթական ապահովման ոլորտի բարեփոխումները, որոնց շրջանակներում կապահովվի նոր ենթակառուցվածքների ու սարքավորումների, ինչպես նաև մասնագետների կատարելագործված արհեստավարժության շնորհիվ՝ ուազմաքաղաքացիական ամրողարկված (ինտեգրված) բուժհաստատությունների կողմից որակապես նոր մակարդակով բուժծառայությունների մատուցումը:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

3.1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԾՆԹԱՑ, ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը փոքր ներքին շուկա ունեցող երկիր է, և նրա մրցունակությունը պայմանավորված է բացառապես արտաքին շուկաներում մրցունակ առաջարկ ներկայացնելու նրա տնտեսության կարողություններով: Երկիրը պետք է առաջնորդվի առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով, որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչն արտահանումն է: Դրա համար հատկապես կկարևորվի արտահանման արտադրողների

մրցունակության բարձրացման և այդ կերպ՝ առկա արտաքին շուկաներում նրանց դիրքերի ամրապնդման, ինչպես նաև՝ նոր արտաքին շուկաներ ներթափանցելու և դրանցում դիրքավորվելու ճանապարհով: Ծրագրային այս մոտեցումների կենսագործումը պահանջում է տնտեսության իրական հատվածի և արտահանման շուկաների դիվերսիֆիկացիա:

Գործարար միջավայրի բարելավման շարունակական քայլերով պետական կարգավորումները, պետության կողմից մատուցվող ծառայություններն ու վարչարարական ընթացակարգերը կրածնան առավել պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար: Պետությունը հետևողականորեն կրարելավի մրցակցային միջավայրը՝ ապահովելով ապրանքային շուկաներ ազատ և հավասար մուտքի/ելքի պայմաններ:

Հայաստանում շարունակարար կայանալու են ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուցիոնալ համակարգերը՝ յուրաքանչյուր ներդրողի մոտ ամրապնդելով երկրի նկատմամբ վստահության և գործընկերային բարձր մակարդակ: Օտարերկրյա ներդրողների ներգրավմամբ ներդրումային ծրագրերը կուղորդվեն հատկապես ժամանակակից արտադրական տեխնոլոգիաներով տնտեսության վերագինման պահանջների բավարարմանը, ինչը զուգահեռաբար կընդլայնի նոր ներդրումներ կլանելու տնտեսության կարողությունը: Միաժամանակ, ներառական տնտեսական աճին նպաստող և նոր աշխատատեղեր ստեղծող ներդրումային ծրագրերը կգտնվեն ՀՀ կառավարության ուղղակի հոգածության տիրույթում:

ՀՀ կառավարությունը հետապնդում է տնտեսության որակական առաջընթացն ինովացիոն զարգացման ճանապարհով ապահովելու նպատակը, որի արդյունքում պետք է զրանցվի ընդհանուր տնտեսության, ինչպես նաև տնտեսության հիմնական ոլորտներում արտադրողականության մակարդակի արագընթաց աճ: Ըստ որում, աշխատավարձերի քաղաքականություն իրականացնելիս ՀՀ կառավարությունը կհետևի արտահանելի հատվածի մրցունակության աճի չխաթարման սկզբունքին՝ պահպանելով նմանատիպ զարգացման հաջողված փորձ ունեցող արևելաւրոպական և այլ երկրներում ժամանակով փորձված նվազագույն աշխատավարձի և տնտեսությունում աշխատավարձի մեղիանայի համամասնությունները:

Համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զրոսաշրջային արդյունքի մրցունակության շարունակական բարձրացման միջոցով ՀՀ կառավարությունը ձգտելու է ապահովել զրոսաշրջիկների թվի շարունակական բարձր աճ և համաչափ բաշխվածություն ամբողջ հանրապետությունում:

ՀՀ կառավարության կողմից մեկնարկված նախաձեռնություններն ու բարեփոխումները վերոնշյալ ոլորտներում նախատեսում են հետևյալ քայլերը՝

Արտահանում

Արտահանման վրա հիմնված աճի ապահովման համատեքստում ՀՀ կառավարությունը թիրախավորում է ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ հասցնելով 40-45 տոկոսի: Այս նպատակին հասնելու համար քաղաքականությունը կիրականացվի հիմնականում երկու ուղղությամբ՝

1) արտահանման առկա, հատկապես արտոնյալ ոեժիմներ ունեցող շուկաներ (ԵԱՏՄ, ԵՄ) մուտքի խոչընդոտների առավելագույն վերացում և ԵԱՏՄ շրջանակներում նոր արտահանման շուկաների հասանելիության բարձրացում.

2) երկկողմ հարթության մեջ թիրախային երկրների հետ առևտրի արտոնյալ ոեժիմների ձեռքբերում:

Այդ կապակցությամբ՝

1. Արտահանման շուկաների հասանելիությունն ընդլայնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ներդնել Եվրոպական միության «GSP+» արտոնյալ առևտրային ոեժիմի շրջանակներում ապրանքների ծագման ինքնահավաստագրման նոր էլեկտրոնային համակարգ (Registered Exporter System).

2) 2017 թվականից սկսած կազմակերպել ԵԱՏՄ-ի շրջանակներում բանակցություններին, նախարանակցային գործընթացներին ակտիվ մասնակցություն և դրսնորել նախաձեռնողականություն Վիետնամի, Չինաստանի, Իրանի հետ բազմակողմ ձևաչափով առևտրային նպաստավոր ոեժիմներ ձևավորելու նպատակով.

3) շարունակել ապահովել և ընդլայնել արտոնյալ առևտրային ոեժիմները (այդ թվում GSP): Մինչև 2017 թվականի ավարտն այդ ուղղությամբ նախաձեռնել բանակցություններ Ծոցի երկրների հետ, իսկ Հնդկաստանի հետ՝ մինչև 2021 թվականի ավարտը.

4) ձևավորել արտահանող ու ներմուծող ընկերությունների համագործակցությունը՝ թիրախային շուկաներում հայկական ապրանքների արտահանման զարգացման նպատակով: Մինչև 2017 թվականի ավարտը կայացնել հայ-իրանական համագործակցության նման մեխանիզմը.

5) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել ոսկերչական իրերի հարգադրոշման փոխանականացնելությունը ԵԱՏՄ-ի երկրներում.

6) մինչև 2018 թվականի ավարտը ՀՀ տարածքում ստեղծել որակավորման ստուգման ծրագրեր իրականացնող և միջաբրուրատոր փորձարկումներ կազմակերպող միջազգային պրովայդեր կազմակերպության ներկայացուցչություն և eLAB Էլեկտրոնային համակարգ.

7) մինչև 2019 թվականի ավարտը կնքել «Եվրոպական հավատարմագրում» (EA) կազմակերպության հետ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից երկկողմ/բազմակողմ ճանաչման մասին համաձայնագիր.

8) մինչև 2022 թվականի ավարտն օժանդակել ԵԱՏՄ-ի երկրների պետական գնումների համակարգերում հայկական արտադրանքի մասնակցությանը, ձևավորել գաղի, Էլեկտրաէներգիայի և տրանսպորտի միասնական շուկաներ, ընդլայնել ծառայությունների միասնական շուկան:

2. Արտահանման խթանման մեխանիզմների կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը դիվերսիֆիկացնել աղամանդի հումքի աղբյուրները և ձևավորել առկա աղբյուրներից հումքի ձեռքբերման առավել արդյունավետ պայմաններ.

2) մինչև 2017 թվականի ավարտը աջակցել ՌԴ-ի շուկայում հայկական ծագման ապրանքների վաճառքի Armzone Էլեկտրոնային հարթակի ներդրմանը և ապահովել հանրայնացումը.

3) մինչև 2017 թվականի ավարտը տրամադրել ծագման երկրի հավաստագրեր և պարզեցնել երկակի նշանակության ապրանքների արտահանման ընթացակարգերը.

4) մինչև 2017 թվականի ավարտն ապահովել հայկական ապրանքների համար առնվազն 5 թիրախային շուկաներ ներմուծման ընթացակարգերի, ՀՀ օրենսդրության պահանջների վերաբերյալ համապարփակ տեղեկատվական հասանելիություն, իսկ 2018 թվականին այն ավարտին հասցնել մնացած թիրախային շուկաների մասով.

5) 2017-2018 թվականների ընթացքում ներդնել առավել արդյունավետ մեխանիզմներ ցուցահանդեսներին և տոնավաճառներին մասնակցության աջակցման հարցում.

6) մինչև 2018 թվականի ավարտն ստեղծել հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների Էլեկտրոնային հարթակ.

7) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել արտահանման ծավալի ապահովագրության ավելի քան կրկնակի աճ.

8) 2018-2022 թվականների ընթացքում կազմակերպել արտահանման թիրախային շուկաներում «Made in Armenia» ամենամյա միջոցառումներ:

Գործարար միջավայր

Բարեփոխումների առանցքային նպատակադրումը երկրում այնպիսի գործարար միջավայրի հաստատում է, որին հասող են՝ անհրաժեշտ նվազագույն ծավալով, հստակության բարձր աստիճանով, համաչափ և հավասար կիրառությամբ, կայուն և կանխատեսելի կարգավորումներ: Դրանց արդյունավետ իրականացման դեպքում ավելացնելով, որ Հայաստանն առաջիկա 4-5 տարիների բարեփոխումների արդյունքում կդիրքավորվի Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» գելուցի լավագույն 20 երկրների շարքում: Այս նպատակների իրագործմանն ուղղված են մի շարք միջոցառումներ՝

1. Գործարար միջավայրի բարեկավման տարեկան ծրագրերի իրականացումը հետևողականորեն շարունակելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ապահովել քնապահպանական և քնօգտագործման հաշվարկ-հաշվետվություններն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարողությունները՝ ամբողջականացնելով հարկային հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգը.

2) մինչև 2017 թվականի ավարտը կրճատել էլեկտրականության միացման գործընթացում պահանջվող գործողությունները.

3) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել քաղաքաշինական թույլտվությունների ոլորտում էլեկտրոնային համակարգի լայն կիրառություն.

4) մինչև 2018 թվականի ավարտը սահմանել պետության կողմից մատուցվող ծառայությունների արագացված ընթացակարգեր, եթե ներկայում այդպիսիք սահմանված չեն.

5) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ խթաններ ստեղծելով սնանկության վարույթում կազմակերպությունների առողջացումը որպես գերակայություն սահմանելու ուղղությամբ:

2. Տնտեսական մրցակցության պաշտպանության մեխանիզմների կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ապահովել գերիշխող դիրքի չարաշահում որակելու դեպքերի օրենսդրական հստակեցում.

2) մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել տնտեսական մրցակցության քնազավառում կայացվող անհատական որոշումների ամփոփման, դրանց նախադեպային տրամաբանության հստակեցման և տնտեսավարողներին ու լայն հասարակությանն իրազեկման մեխանիզմները.

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության և գարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ձևավորել ՓՄՁ-ի ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ինստիտուցիոնալ հնարավորությունները և 2019 թվականին հրապարակել վիճակագրական տեղեկատվությունը.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ներդրել ՓՄՁ-ի սուբյեկտների նոր պահանջներին համապատասխան պետական աջակցության նոր գործիքակազմ, այդ թվում՝ խորացնել ՓՄՁ-ի ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների հետ համագործակցությունը:

Ներդրումներ

ՀՀ կառավարությունը նախատեսում է զգալիորեն և շեշտակի բարձրացնել օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ-ի հարաբերությունը։ Այդ նպատակով ներդրումային քաղաքականությունն իրականացվելու է երեք հիմնական ուղղություններով՝

1. Ներդրողների պաշտպանության և երաշխիքների տրամադրման ինստիտուտների ամրապնդման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն առկա միջազգային չափորոշիչներին համապատասխան մշակել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը.

2) մինչև 2017 թվականի ավարտը կատարելագործել ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) գործունեությունը կարգավորող իրավական դաշտը.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել պետություն-մասնավոր գործընկերության համար օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումները.

4) մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությունը.

5) մինչև 2018 թվականի ավարտն իրագործել ՀՀ-ում որոշակի ներդրումների դիմաց՝ ՀՀ քաղաքացիություն շնորհելու ծրագիրը։

2. Ըստհանուր ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականությունից դեպի «թիրախավորված» ռազմավարության քաղաքականության անցում կատարելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը քննարկել և առաջարկություններ ներկայացնել ընտրված թիրախային ոլորտներում (այդ թվում մասնածագործություն, հազուսի արտադրու-

թյուն, կոշիկի արտադրություն) և ըստ գործունեության վայրերի աշխատատեղերի ստեղծումը խթանող հնարավոր արտոնությունների վերաբերյալ.

2) մինչև 2017 թվականի ավարտը զարգացնել ներդրումային ծրագրերի փաթեթների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման և դրանց առաջմղման համար Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունները և ապահովել այդ գործառույթի շարունակականությունը.

3) մինչև 2017 թվականի ավարտը ամրապնդել Հայաստանի զարգացման հիմնադրամի կարողությունները «մեկ պատուհան» սկզբունքի ամրողական կիրառմամբ՝ ներդրողների հետ աշխատանքի, ներդրումների ներգրավման և հետներդրումային սպասարկման ուղղությամբ.

4) մինչև 2017 թվականի ավարտը մշակել տնտեսական դիվանագիտության կիրառական մոտեցումներ.

5) մինչև 2018 թվականի ավարտը մշակել համայնքային նշանակության մարզային ներդրումային ծրագրերի ֆինանսավորման գործուն մեխանիզմներ.

6) մինչև 2018 թվականի ավարտը մշակել առաջատար վերազգային ընկերությունների հետ երկկողմ հարաբերությունների հաստատմանն ուղղված հստակ ձևաչափեր և մեխանիզմներ.

7) մինչև 2019 թվականի ավարտն ապահովել Հայաստանը S_{CD}C ՕՌԻՆ Կարգավորումների սահմանափակման խնդերսի վարկանիշում (OECD) ներառելուն.

8) մինչև 2020 թվականի ավարտը մշակել և իրագործել առնվազն 5 թիրախային ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարությունները:

3. Ստեղծարար և նորարարական բիզնեսների զարգացում, տեխնոլոգիական զարգացման խթանում՝

1) մինչև 2018 թվականի ավարտը քարտեզագրել ՀՀ նորարարական էկոհամակարգը (քաղաքականություն(իրավական) դաշտ, կազմակերպություններ, ոլորտի զարգացման ծրագրեր, նորարարական բիզնես, կրթություն և հետազոտություններ), գույքագրել Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունները և դրանց տեխնոլոգիական կարողությունները.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել նորարարության զարգացման ռազմավարության և ճանապարհային քարտեզ՝ տնտեսության առանցքային ճյուղերում նորարար տեխնոլոգիաների ներդրումը խթանելու նպատակով.

3) մինչև 2018 թվականի ավարտը՝ ներգրավել վերազգային առնվազն 2 կազմակերպություն՝ հետազոտություններ ու մշակումներ իրականացնող լաբորատորիաների՝ ձևավորման նպատակով։

4) մինչև 2018 թվականի ավարտը՝ մշակել և ներդնել առաջադեմ տեխնոլոգիական հիմքով արտադրություններին տրամադրվող աջակցության հատուկ մեխանիզմներ։

Զբոսաշրջություն

ՀՀ կառավարությունը՝ նպատակադրում՝ 2017-2022 թվականներին իրականացվելիք քայլերի և միջոցառումների արդյունքում տարեկան զրոսաշրջային այցելությունների թիվը հասցնել առնվազն 3 միլիոնի։ Այս նպատակով՝ նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1. Զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական դաշտը կատարելագործելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել մի շարք նպատակային շուկա հանդիսացող երկրների քաղաքացիների համար Հայաստան առանց արտոնագրի մուտքի ուժիմի սահմանում կամ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացում, ինչպես նաև զրոսաշրջային տրանսպորտային միջոցների համար սահմանային անցման դյուրացում։

2) մինչև 2018 թվականի ավարտը՝ սահմանել զրոսաշրջային ծառայությունների նկատմամբ որակական նոր պահանջները և ներդնել դրանց ապահովման մեխանիզմները։

3) մինչև 2019 թվականի ավարտը՝ ներդնել զրոսաշրջության ուղղակիությունը։

2. Մինչև 2020 թվականի ավարտն ավարտել հանրապետության տարածքում ժամանակակից զրոսաշրջային տեղեկատվական միասնական ցանցի ստեղծման աշխատանքները։ Հայաստանի ճանաչելիությունն ակտիվացնելու, զրոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում ապահովելու, վիճակագրական տեղեկատվական համակարգը կատարելագործելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը՝ մշակել և ընդունել «Ուխտագնացություն առաջին քրիստոնյա երկիր» ռազմավարությունը՝ 2018 թվականին ապահովելով դրա իրականացումը։

2) 2017-2022 թվականների ընթացքում պետական աջակցություն ցուցաբերել ՀՀ մարզերում ամենամայ ավանդական փառատոնների, տոնակատարությունների և այլ զրոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը։

3) 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել մարզական գրոսաշրջությունը ՀՀ-ում միջազգային մրցաշարերի կազմակերպման միջոցով.

4) 2017-2022 թվականների ընթացքում ամրապնդել, զարգացնել և խթանել համաշխարհային շուկայում Հայաստանի՝ որպես ապահով և գրոսաշրջության համար գրավիչ երկրի նկարագիրը.

5) մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել գրոսաշրջության վիճակագրության վարման մեթոդը՝ նախադրյալներ ստեղծելով »Զրոսաշրջության սատելիտային հաշիվ» համակարգի ներդրման համար.

6) մինչև 2020 թվականի ավարտն ընդունել էկոտուրիզմի զարգացման հայեցակարգը:

3.2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հասարակության բարեկեցության, սոցիալական խնդիրների լավագույս լուծման բանալին կայուն տնտեսական աճ ունենալն է՝ դրա ստեղծմանը մասնակցողների և դրանից օգտվողների թվի մշտապես աճի պայմաններում: Հարկաբյուջետային քաղաքականությունն առաջիկա տարիներին միտված կլինի տնտեսական աճի խթանմանը և տնտեսությունում աճի ներուժի աստիճանական բարձրացմանը: Հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական շրջանակը միջին ժամկետում ուրվագծվելու է պարտքը կայունացնող քաղաքականության համատեքստում, ինչը տնտեսական աճին նպաստող մակրոտնտեսական կայուն միջավայրի կարևորագույն նախապայման է:

Եկամուտների քաղաքականությունը թիրախավորելու է բիզնեսի և արտաքին ներդրողի համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ապահովումը և այն պետք է հնարավորություն ընձեռի տնտեսությունում ռեսուրսների արդարացի վերաբաշխման, ինչպես նաև վերառուղորդման դեպի արտահանելի հատված:

Գլոբալ աշխարհում մրցունակ և երկարաժամկետ կայուն աճ ապահովող սուբյեկտը թափանցիկ և միջազգային հաշվետվողականության սկզբունքներով գործող բիզնեսն է: Որակյալ առողջիւր պետք է դառնա մրցունակ բիզնեսի գործունեության պահանջված նորմ, իսկ ՀՀ կառավարությունը ջանքեր գործադրի առողջապահական ծառայությունների որակի հսկման գործուն համակարգի ստեղծման համար:

Դեռական ֆինանսները նպաստակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործելու համար ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին նախատեսում է բյուջետային գործընթացում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման ֆինանսական

ցուցանիշների համակարգից անցում կատարել քանակական և որակական արդյունքային ցուցանիշների համակարգին, ինչպես նաև ուժեղացնել ֆինանսական կարգապահությունը։ Այդ առումով, առաջիկա տարիներին կամբողջականացվի ծրագրային բյուջետավորման ներդրման մեթոդաբանական հենքը, ինչպես նաև կրաքարացվի պետական ֆինանսների կառավարման գործառույթների ավտոմատացման մակարդակը, կընդլայնվի էլեկտրոնային գնումներ օգտագործողների շրջանակը, ինչպես նաև կուտեղացվեն պետական ներքին ֆինանսական հսկողության համակարգերը։

Հանրային հատվածի ակտիվները և պարտավորությունները հաշվառելու ու արդյունավետ կառավարելու, ինչպես նաև դրանց վրա բյուջետային միջոցների օգտագործման հստակ ներգործությունը բացահայտելու անհրաժեշտությունը պահանջում է հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության նոր ստանդարտների առկայություն։ Այս նպատակին հասնելու համար ՀՀ կառավարությունը կներդնի հաշվեգրման սկզբունքի հիման վրա հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգ։

Հեռանկարային կայուն տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից էական է ֆինանսական շուկաների զարգացվածությունն ու խորությունը, որը հնարավորություն է տալիս ներքին խնայողություններն ուղղորդելու արդյունավետ ներդրումներին։ Ստվերային տնտեսության կրճատումը, կենսաթոշակային կուտակային համակարգի գործարկումը և վերջինսի արդյունքում ներքին խնայողությունների ձևավորումն ու ուղղորդումը ֆինանսական համակարգ հնարավորություն կտան առավել բազմազան դարձնելու և զարգացնելու ֆինանսական գործիքներն ու շուկաները՝ միաժամանակ ֆինանսական ռեսուրսներն ավելի հասանելի դարձնելով ներդրումների համար։ Վերը նշված նպատակներին հասնելու համար ՀՀ կառավարությունը ջանքեր կգործադրի հետևյալ ուղղություններով՝

1. Տնտեսական աճի ներուժի բարձրացման և մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) բարձրացնել պետական պարտքի կառավարման արդյունավետությունը և ապահովել պետական պարտքի կայունությունը՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը ներդնել ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային շուկայի մասնակիցների վարքագծի գնահատման գործուն համակարգ,

բ. 2018 թվականից սկսած ներդնել հեռանկարում պարտքի կայունացմանն ուղղված, սակայն տնտեսական աճը չտուգանող նոր հարկաբյուջետային կանոններ։

2) մինչև 2019 թվականի ավարտը ներդնել տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների գնահատման նպատակով նոր գործիքակազմ.

3) մինչև 2022 թվականի ավարտը նախագծել բյուջետային շրջանակ՝ միջնաժամկետ ժամանակահատվածի համար, որը կսահսատեսի կապիտալ ծառայությունների աստիճանական ավելացում՝ հնարավորինս չափավորելով ընթացիկ ծախսերը և առավելապես կարևորելով դրանց արդյունավետությունը՝ սոցիալական կարիքների ապահովման տեսակետից խնդիրներ չառաջացնելու նպատակադրմամբ:

2. Հարկային քաղաքականության և միջազգային հարկային համագործակցության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) վերանայել անշարժ գույքի հարկման մեխանիզմները՝ հարկման արդարացի համակարգի ներդրման և տնտեսությունում ավելացված արժեքի ստեղծմանը պարագուրդում գտնվող գույքի մասնակցությունը խթանելու նպատակով, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել և լայն քննարկման ներկայացնել անշարժ գույքի միասնական հարկման համակարգի բարեփոխումներին ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթը,

բ. մինչև 2018 թվականի ավարտը մշակել և հաստատել նոր համակարգի կիրարկումն ապահովող նորմատիվ իրավական ակտերը.

2) 2019-2020 թվականների ընթացքում գործարկել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի ստանդարտներին համապատասխան ավտոմատ եղանակով հարկման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համակարգը.

3) 2017-2019 թվականների ընթացքում իրագործել ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրագիր) ՀՀ անդամակցության գործնթացը և մինչև 2020 թվականի ավարտը տեղայնացնել տրանսֆերային գնագոյացման օրենսդրության BEPS ծրագրի առանձին գործողություններով նախատեսված միջոցառումների պահանջները.

4) տնտեսավարող սուբյեկտների միջսահմանային գործունեությանը և միջավետական առևտուրին նպաստելու համար ընդլայնել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակը, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտն ավելացնել ստորագրված կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի թիվն առնվազն 8-ով,

բ. 2019-2022 թվականների ընթացքում առնվազն 5 երկրների հետ նախաստորագրել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր:

3. Մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և արտաքին առողջտորական գործունեության ոլորտներում կարգավորման կատարելագործման առումով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը մշակել օրենսդրական փաթեթ՝ հիմնված հաշվապահական հաշվառման և առողջտի ոլորտների որակի հսկման համակարգերը շեշտող բարեփոխումների հայեցակարգի վրա.

2) մինչև 2019 թվականի ավարտը ձևավորել անհրաժեշտ ենթաօրենսդրական կարգավորումների դաշտը և մինչև 2020 թվականի ավարտը ներդնել հաշվապահական հաշվառման և առողջտի ոլորտների նկատմամբ արդյունավետ մասնագիտական և հանրային վերահսկողության համակարգը:

4. Պետական ֆինանսական կառավարման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) ընդլայնել էլեկտրոնային գնումների համակարգն օգտագործող պատվիրատունների շրջանակը՝ պետական գնումների ոլորտում արդյունավետության և թափանցիկության մակարդակի բարձրացման, ինչպես նաև մրցակցության ավելացման նպատակով: Մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը ներդնել գնումների էլեկտրոնային աճուրդի համակարգը,

բ. մինչև 2018 թվականի ավարտը գնումների էլեկտրոնային համակարգը համապատասխանեցնել էլեկտրոնային կառավարման համակարգերի ժամանակակից չափորոշիչներին,

գ. մինչև 2018 թվականի ավարտն էլեկտրոնային գնումների համակարգ տեղափոխել 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումներ կազմակերպած ՊՈԱԿ-ներին,

դ. մինչև 2019 թվականի ավարտն էլեկտրոնային գնումների համակարգ տեղափոխել 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումներ կազմակերպած համայնքներին,

ե. մինչև 2020 թվականի ավարտն էլեկտրոնային գնումների համակարգ տեղափոխել 200 մլն դրամը գերազանցող մրցակցային գնումներ կազմակերպած համայնքային ոչ

առևտրային կազմակերպություններին և համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի քածնեմաս ունեցող կազմակերպություններին.

2) բյուջետային գործընթացներում «փողի արժեք» սկզբունքի ուժեղացման և հանրային հաշվետվողականության տեսանկյունից արդյունավետ գործիքակազմի ներդրման նպատակով անցում կատարել ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման քանակական և որակական արդյունքային ցուցանիշներին: Մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտն ամրողականացնել ծրագրային բյուջետավորման մեթոդաբանականը հենքը,

բ. 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի և հաջորդ տարիների նախագծերը կազմել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ծրագրային բյուջետավորման ձևաչափով.

3) մինչև 2019 թվականի ավարտն ավտոմատացնել բյուջետային ծրագրերի ծախսերը կազմելու հաշվարկման գործընթացը և այն համակցել գործող էլեկտրոնային համակարգերին (Էլ-գանձապետարան, գնումներ և այլն).

4) համախմբել պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ) և հաշիվները, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկության և արդյունավետության բարձրացման նպատակով վերջիններիս հաշիվների վարումը կազմակերպել գանձապետարանի միջոցով,

բ. մինչև 2019 թվականի ավարտը պետական և համայնքների բյուջեների կատարման համար ներկայումս գործող նախնական հսկողության համակարգը կիրառել ՊՈԱԿ-ների հաշիվների նկատմամբ.

5) իրականացնել հանրային հատվածում պետական ներքին ֆինանսական հսկողության և ներքին առողջապահության ուժեղացման միջոցառումներ, մասնավորապես, մինչև 2019 թվականի ավարտն ապահովել ներքին առողջապահության գործունեության որակի նկատմամբ արտաքին գնահատումների իրականացման հիմքերը և իրականացնել պիլոտային իրագործում.

6) հանրային հատվածի ֆինանսական հաշվետվողականության և կարգապահության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է իրականացնել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման երկրորդ փուլ, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը ձևավորել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգ և պիլտավորել ՀՀ մեկ նախարարությունում,

բ. ձևավորել նախարարությունների մակարդակով համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացակարգերը, մասնավորապես, 2018-2025 թվականների ընթացքում ներդնել վերոնշյալ պիլտավորման արդյունքների հիման վրա նոր համակարգ՝ առնվազն 5 նախարարությունում:

5. ՀՀ կառավարությունը ֆինանսական շուկաների գործիքակազմի հասանելիության բարձրացման և կենսաթոշակային երկարաժամկետ խնայողությունների ներդրման հարթակների ձևավորման ուղղությամբ ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ իրականացնելու է քայլեր՝ կուտակված միջոցները ՀՀ տնտեսության իրական հատված ուղղելու նպատակով: Դա խթան կհանդիսանա ՀՀ տնտեսության զարգացման և ներդրումների ավելացման համար: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել կապիտալի շուկայի զարգացման ծրագիր՝ ուղղված տեղական ընկերությունների կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկման խթանմանը.

2) մինչև 2019 թվականի ավարտը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ բարձրացնել ֆինանսական ծառայությունների հասանելիությունը՝ անհրաժեշտ իրավակարգավորումների իրականացմամբ.

3) մինչև 2020 թվականի ավարտը կենսաթոշակային համակարգի ընդլայնման համար ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել ապահովագրական շուկայի զարգացման միջնաժամկետ ծրագիր՝ ուղղված ապահովագրական նոր գործիքների և լյանքի ապահովագրության համակարգի ներդրմանը:

3.3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Հարկային և մաքսային համակարգերը պետք է լինեն արդյունավետ և ունենան անհրաժեշտ կարողություններ՝ ստվերային տնտեսության կրճատման և գործարար միջավայրի բարելավման համար: Արդյունավետ հարկային և մաքսային վարչարարության իրականացման արդյունքում պետք է ապահովվի հարկային եկամուտների կայունությունը՝ նախատեսելով հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության աճ՝ առաջիկա 5 տարիների ընթացքում 2.5 տոկոսային կետով՝ հաշվի առնելով առաջիկա տարիներին տնտեսության զարգացման միտումները:

Հարկային և մաքսային մարմինների կողմից հետևողական վարչարարության իրականացման արդյունքում պետք է խստացվի պայքարն օրինազանց, հարկային պարտավորությունները կանխամտածված կերպով չկատարելու վարքագիծ դրսւորող հարկ վճարողների նկատմամբ, պետք է շարունակվեն աշխատանքները տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման ուղղությամբ: Այս առումով հիմնական մոտեցումն այն է, որ հարկային և մաքսային հսկողական գործիքները կկիրառվեն բացառապես ոչ բարեխիճ հարկ վճարողների նկատմամբ, իսկ հարկային մարմին կողմից իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունը տեղափոխվի Էլեկտրոնային հսկողության հարթակ:

Գործարար միջավայրի տեսանկյունից կարևորվելու է պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում հարկ վճարողների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների համար իրականացվող վարչարարության հնարավորինս պարզեցումը, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարեկավումը: Միևնույն ժամանակ տնտեսավարող սուբյեկտների կանխիկ հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից վարչարարական գործիքակազմի զարգացմանը զուգընթաց՝ հումքի և սարքավորումների ներմուծման հարկումը սահմանից աստիճանաբար կտեղափոխվի ներքին տնտեսություն:

Նշված ուղղություններով աշխատանքների իրականացման, հարկային և մաքսային համակարգերի կառուցվածքի վերանայման, հարկային և մաքսային ծառայողների կերպարի վերափոխման արդյունքում կրաքարանա վատահությունը հարկային և մաքսային համակարգերի նկատմամբ:

Նշված թիրախներին հասնելու նպատակով անհրաժեշտ է հարկային և մաքսային համակարգերի բարեփոխումների հստակ ուղղությունների նախանշում, որոնք ճշգրիտ կերպով կարտացողեն սահմանված նպատակներին հասնելու եղանակները:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Հարկային և մաքսային հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է հսկողական գործընթացները կազմակերպել ոիսկերի գնահատման համակարգերի ներդրման և կատարելագործման միջոցով՝ ստեղծելով անհրաժեշտ գործիքակազմ ստվերային շրջանառությունների բացահայտման և հարկերը թաքցնելու հնարավորությունների սահմանափակման նպատակով: Այս

ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- 1) 2017-2018 թվականների ընթացքում ըստ նպատակայնության կանոնակարգել հարկային, մաքսային, վարչական, քրեական պատասխանատվության տեսակները և չափերը, իրավախախումների համար՝ ըստ բնույթի սահմանել վտանգավորության աստիճանի և պատճառած վնասի, պատասխանատվության միջոցներ.
- 2) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել տնտեսության մեջ կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման ուղղությամբ շարունակական աշխատանքներ.
- 3) 2018-2022 թվականների ընթացքում առանձնացնել ոլորտային վերլուծությունների իրականացման արդյունքում հարկ վճարողների թիրախային խմբեր, կազմակերպել անհատական խմբային հանդիպումներ, ներկայացնել վերջիններիս գործունեությանն առնչվող ռիսկերը, քննարկել խնդիրները և դրանց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ հարկային կարգապահության բարձրացման ուղղությամբ միջոցներ չձեռնարկած տնտեսավարող սուբյեկտների մոտ հարկային հսկողության վարչարարական գործիքակազմի անհատական կիրառում.
- 4) մինչև 2022 թվականի ավարտը կազմակերպել հարկային հսկողության գործընթաց՝ ռիսկերի գնահատման համակարգերի կատարելագործման միջոցով՝ ապահովելով հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների քանակի և հարկ վճարողների թվի հարաբերակցության հետևողական կրճատում.
- 5) մինչև 2022 թվականի ավարտը կատարելագործել մաքսային հսկողության համակարգը՝ ռիսկերի գնահատման համակարգերի արդյունավետության բարձրացման միջոցով՝ ապահովելով մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակի կրճատում.
- 6) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել մաքսային հսկողության «Կապույտ ուղի» ընթացակարգը՝ սահմանային հսկողությունն աստիճանական տեղափոխներով հետրացթողումային փուլ.
- 7) հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով՝ կատարելագործել հարկային մարմնին տեղեկությունների տրամադրման և փոխանակման համակարգերը և ընդլայնել, մասնավորապես, մինչև 2022 թվականի ավարտը երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների շրջանակի ընդլայնում և որակի բարելավում, դրանց փոխանակման և մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգում իրականացվող վերլուծական և ոիսկերի գնահատման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունն էլեկտրոնային հսկողությամբ փոխարինելու նպատակով կկատարելագործվեն և կընդլայնվեն հարկային և մաքսային մարմինների վերլուծական կարողությունները՝ ապահովելով անհրաժեշտ փոխկապակցվածությունը վերլուծական աշխատանքների արդյունքների, ոիսկերի կառավարման համակարգերի և հսկողական միջոցառումների արդյունքների միջև։ Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը կենտրոնացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համակարգում իրականացվող վերլուծությունները մոնիթորինգային կենտրոնում՝ որակապես բարելավելով իրականացվող վերլուծական և ոիսկերի բացահայտման գործընթացները և ապահովելով ոիսկերի գնահատման նպատակով վերլուծությունների առավելագույն ավտոմատացում և միասնականություն։

2) մինչև 2018 թվականի ավարտը գործարկել կամերալ ուսումնասիրությունների իրականացման էլեկտրոնային համակարգը։

3. Օրինապահ հարկ վճարողների համար բարենպաստ հարկային և մաքսային միջավայրի ստեղծման, հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքների ընդլայնման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) սահմանել օրինապահ հարկ վճարողների գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով՝ օրինապահ հարկ վճարողների համար հարկային և մաքսային ոլորտներում լրացրուցիչ արտոնյալ պայմաններ։ Մասնավորապես, մինչև 2018 թվականի ավարտը՝ կլրճատվեն օրինապահ հարկ վճարողների համար ԱԱՀ-ի գերավճարի վերադարձի ժամկետները։

2) մինչև 2019 թվականի ավարտը ներդնել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ հորիզոնական մոնիթորինգի համակարգ՝ ամրապնդելով հարկ վճարողների հետ գործընկերային հարաբերությունները։

4. ԵԱՏՄ-ի մաքսային նոր օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում մշակել ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգրքից բխող ազգային օրենսդրության կիրարկում ապահովող նորմեր և մասնակցել ԵԱՏՄ-ի իրավունքի մաս կազմող իրավական ակտերի մշակման աշխատանքներին.

2) 2017-2019 թվականների ընթացքում մաքսային մարմիններում էլեկտրոնային կառավարման և հսկողության համակարգի համապատասխանեցում (այդ թվում՝ նոր ենթահամակարգերի գործարկում) ԵԱՏՄ-ի մաքսային օրենսգրքին և դրա կիրարկում ապահովող իրավական այլ ակտերին:

5. Երկարաժամկետ հատվածում հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում առաջնահերթությունը տրվելու է հարկային մարմնում իրականացվող գործընթացների ավտոմատացմանը, այդ թվում՝ հարկ վճարողներին, ժամանակին համահունչ, որակյալ ծառայությունների մատուցմանը, ինչն էլ իր հերթին կիսթանի հարկ վճարողների հարկային պարտավորությունների կամավոր կատարման մակարդակի բարձրացմանը և վարչարարության պահանջներն ապահովելու համար հարկ վճարողների կողմից իրականացվող ծախսերի կրճատմանը: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը զարգացնել հարկային և մաքսային մարմինների էլեկտրոնային կառավարման համակարգի կարողությունները՝ ապահովելով հարկային մարմին ներկայացվող բոլոր հաշվարկների, փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորություն, այդ թվում՝ հարկային օրենսգրքից բխող բոլոր փոփոխությունների էլեկտրոնայնացում.

2) մինչև 2018 թվականի ավարտը գործարկել մեկ միասնական գանձապետական հաշվի համակարգը.

3) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել շրջանառության հարկի հաշվարկման ինքնաշխատ համակարգ.

4) 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել հարկ վճարողների գործունեության ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ վերջինների կողմից ուղարկվող ծանուցումների համակարգի կիրառումը՝ օգտագործելով առավելապես էլեկտրոնային համակարգերի հնարավորությունները.

5) մինչև 2019 թվականի ավարտը գործարկել հարկերի վճարման էլեկտրոնային համակարգը:

6. Հարկային և մաքսային վարչարարության բարելավման համարի միջոցառումների շարքում առանձնակի կարևորվում է հարկային և մաքսային մարմինների գործունեության

թափանցիկության ապահովմանն ուղղված լայնածավալ աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Իրականացվող աշխատանքները կիանգեցնեն հարկային և մաքսային կարգապահության բարձրացմանը, վարչական մարմսի հանդեպ վստահության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանը, հարկային եկամուտների ապահովմանը: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- 1) 2017-2018 թվականների ընթացքում բարելավել հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազնգերի կենտրոնի կարողությունները.
- 2) 2017-2018 թվականների ընթացքում կատարելագործել հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտները՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը.
- 3) 2017-2022 թվականների ընթացքում ձեռնարկել միջոցներ հարկ վճարողներին իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործման ուղղությամբ.
- 4) 2017-2022 թվականների ընթացքում հեռարձակել հարկային կարգապահության թեմայով հեռուստահաղորդաշարերը, որոնց միջոցով հանրությանը պարբերաբար կիրազեկվի բացահայտված հարկային իրավախախումների, կիրառված պատասխանատվության միջոցների, ձեռք բերված արդյունքների վերաբերյալ.
- 5) 2017-2022 թվականների ընթացքում հարկային մարմին-հարկ վճարող համագործակցության արդյունավետության բարձրացման շրջանակներում՝
 - ա. ներգրավել հարկ վճարողներին հարկային և մաքսային վարչարարության կազմակերպման գործընթացներում,
 - բ. կազմակերպել հասարակության գնահատականի ստացման նպատակով հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումներ՝ ինտերնետային կայքերի միջոցով.
- 6) 2017-2022 թվականների ընթացքում հրապարակել հարկային և մաքսային մարմինների գործունեության (այդ թվում՝ գերատեսչական վերահսկողության) վերաբերյալ հաշվետվություններ.
- 7) մինչև 2019 թվականի ավարտն ստեղծել հարկ վճարողների կողմից վճարված հարկերի ծախսման ողբույժունների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման հնարավորություն:

7. Հարկային և մաքսային համակարգերի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նախատեսվում է սահմանել համակարգի օպտիմալ կառուցվածք, որը հնարավորություն կտա կառավարման բոլոր մակարդակներում ունենալ հստակություն և խուսափել կրկնություններից: Կվերակառուցվեն հարկային (տարածքային) տեսչությունները՝ սահմանելով գործառույթների վրա հիմնված կառուցվածք: Կառուցվածքի հենայուներից է լինելու մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծումը՝ հարկային, մաքսային ծառայողի կերպարի վերափոխման միջոցով: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) հարկային, մաքսային ծառայողին ներկայացվող պահանջների և կերպարի վերափոխման նպատակով 2017-2018 թվականների ընթացքում՝

ա. մշակել «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

բ. վերանայել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները.

2) 2017-2018 թվականների ընթացքում ներդրել մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատ տեղեկատվական համակարգ՝ ապահովելով մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթների իրականացման արդիականացումը և աշխատանքի արդյունավետության բարձրացումը.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ներդնել հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձրացման նպատակով ուսումնական կարիքների գնահատման մոդել.

4) 2017-2022 թվականների ընթացքում մշակել և իրականացնել հարկային և մաքսային ծառայողների ուսումնական և վերապատրաստման ծրագրեր.

5) 2017-2022 թվականների ընթացքում բացահայտել հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով՝ ռիսկերը և վերանայել ընթացակարգերը:

3.4. ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունն ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը,

տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, Էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, Էներգակիրների մատակարարման տարատեսականացման և տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ, արդյունավետ օգտագործման և էներգա-արդյունավետ ժամանակակից միջոցների իրականացման ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա:

Ներկայում էներգահամակարգն ամրողովին բավարարում է Էլեկտրաէներգետիկայի ներքին շուկայի պահանջարկը և պահպանում է Էլեկտրաէներգիայի արտահանման որոշակի ներուժ: Ներքին շուկայի կարիքներից ելնելով և Վրաստանի ու Իրանի հետ առևտութիւնարարություններն օգտագործելու նպատակով ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել ՀՀ Էլեկտրաէներգետիկ շուկայի փուլային ազատականացման գործընթացին:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Տարածաշրջանում իրացման նոր էներգետիկ շուկաներ փնտրելու, ներկրման և արտահանման ակտիվ քաղաքականության միջոցով Հայաստանի էներգետիկ անկախության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջավետական առևտութիւն զարգացման միջոցառումների ծրագիր, որի հիմնական նպատակն է Էլեկտրաէներգետիկական շուկայի ամրողությամբ կարգավորվող մոդելից նոր՝ ազատական մոդելին անցումը, առևտութիւն ժամանակակից կանոնների ներդրումը, սակագնային համակարգի հետագա կատարելագործումը և միջավետական առևտութիւն խթանումը հանդիսանում են նշված ծրագրի հիմնական գերակայությունները, միաժամանակ որպես առաջնահերթություն ունենալով ներքին շուկայի սպառողների պաշտպանությունը.

2) մինչև 2020 թվականի ավարտը մշակել Էներգետիկայի մասին նոր ՀՀ օրենքի նախագիծ՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև Էլեկտրաէներգետիկական շուկայի մոդելի և Էլեկտրաէներգիայի առևտութիւն մեխանիզմի ներդրման ընթացքում առաջ եկած խնդիրները.

3) մինչև 2021 թվականի ավարտը մշակել Հայաստանի Էլեկտրաէներգետիկական համակարգի նոր հետանկարային զարգացման ծրագիրը՝ հաջորդ տասնամյա ժամանակահատվածի համար, որը պետք է ներառի մինչև 2021 թվականն ընկած

ժամանակահատվածի էլեկտրաէներգետիկական համակարգում կատարված աշխատանքները և արձանագրված զարգացումները:

2. Նորագոյն և բարձր տեխնոլոգիաների ներդրման համար օրենսդրական խթաններ ձևավորելու, էներգետիկայի բնագավառի զարգացմանն և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրմանն ուղղված քաղաքականության նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն էլեկտրաէներգիայի մեծածախ և մանրածախ շուկայի աստիճանական ազատականացման խթանման նպատակով մշակել «Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը.

2) մինչև 2017 թվականի ավարտը վերանայել ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումները և իրականացման ժամկետները՝ նպատակ ունենալով բարձրացնել ՀՀ էներգետիկ անվտանգության պահանջների կատարման արդյունավետությունը.

3) մինչև 2017 թվականի ավարտը մշակել իրավական ակտի նախագիծ, որով կկարգավորվեն վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էներգակիրների ստացման օբյեկտների բնականոն գործունեության, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգության ու գույքի պաշտպանության հետ կապված գործընթացները.

4) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել նորագոյն և բարձր տեխնոլոգիաների ներդրման խթանման և զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումներ:

3. Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման և արդիականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրով նախատեսված՝ Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի սարքավորումների և համակարգերի լրացուցիչ հետազոտությունները, և ըստ սահմանված պլան-ժամանակացույցի՝ սարքավորումների մատակարարումը.

2) 2018-2019 թվականների ընթացքում իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ավարտական փուլի աշխատանքները.

3) մինչև 2019 թվականի ավարտը՝ իրագործել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը, որով կապահովվի

Հայկական ԱԵԿ-ի արդյունավետ և անվտանգ աշխատանքը՝ շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում:

4. Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի շրջանակներում՝

ա. 2017-2018 թվականների ընթացքում իրականացնել հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման և ենթակայանի կառուցման աշխատանքները,

բ. մինչև 2019 թվականի ավարտը շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը.

2) Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագրի շրջանակներում՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մեկնարկել նախագծման աշխատանքները,

բ. մինչև 2019 թվականի ավարտն ավարտել Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման ծրագիրը:

Նշված էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման ավարտից և շահագործման հանձնելուց հետո Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում հանդես կգա որպես էլեկտրաէներգետիկ ոլորտի տարածաշրջանային հար' կապելով Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը:

5. Արևային համակարգային կայանների կառուցման ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել Մարիկ տեղանքում 55 ՄՎտ այլկային հզրությամբ արևային ֆուտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփումը և ապահովել ֆՎ էլեկտրակայանի կառուցուման մեկնարկը:

6. 2017-2022 թվականների ընթացքում ՀՀ կառավարությունը նախատեսում է աջակցել հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերին՝ այդ ուղղությամբ մշակել նաև օրենսդրական խթաններ:

7. «Կարկառ» կոչվող տեղանքում տնտեսական շահավետության տեսանկյունից երկրաշերմային պաշարների վերջնական հաստատման դեպքում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մասնավոր ներդրողի ներգրավման և մրցույթի անցկացման նպատակով մշակել էլեկտրակայանի կառուցման ներդրումային ծրագիր, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման աշխատանքների արդյունքում երկրաշերմային հնարավոր էլեկտրակայանի իրագործելիության ուսումնասիրությունը և արդյունքների ամփոփումը,

բ. մինչև 2018 թվականի ավարտը երկրաշերմային հետախուզական հորատման ծրագրի արդյունքում էլեկտրակայանի կառուցման իրագործելիության դրական եզրակացության դեպքում մշակել երկրաշերմային էլեկտրակայանի կառուցման ներդրումային ծրագիր, իսկ մինչև 2019 թվականի ավարտը՝ ներդրողների ներգրավման նպատակով անցկացնել մրցույթ:

Բնական պաշարներ

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտը պետք է լինի թափանցիկ, հանրության առջև ունենա բարձր հաշվետվողականություն: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Հանքարդյունաբերության ոլորտի կայուն գարգացմանը նպաստելու, ինչպես նաև ոլորտի քաղաքականության օրենսդրական նոր հենքի ստեղծման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ընդունել հանքարդյունաբերության ոլորտի գարգացման հայեցակարգ և հաստատել դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկը.

2) մինչև 2018 թվականի ավարտը կազմել և հրապարակել ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/ЕITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակ-ներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային գեկույց և մշակել ոլորտի իրական սեփականատերերի քացահայտման ճանապարհային քարտեզ.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել հանքարդյունաբերության ոլորտի գարգացման ռազմավարություն և դրանից բխող միջոցառումների ծրագիր.

4) 2019-2020 թվականների ընթացքում իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ օրենսդրական և ինստիտուցիոնալ կարգավորումներ:

2. Օգտակար հանածոնների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացման նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել առկա նյութերի թվայնացման և www.geo-fund.am կայքում տեղադրման աշխատանքները՝ այն առցանց հասանելի դարձնելով բոլոր հնարավոր ներդրողների համար:

Զրային տնտեսություն

Զրային տնտեսության 5-ամյա ծրագրային հայտը բնորոշվելու է Զրային տնտեսության համակարգի զարգացման ու բարեփոխումների շարունակականության, ֆինանսական կայունության համար բավարար հիմքերի ապահովման, ենթակառուցվածքների ու ոլորտային հաստատությունների ինքնարավ և տնտեսապես անկախ գործունեությանը նպաստող կառավարման նոր համակարգերի ներդրման, Զրային համակարգերի մասով Զրային ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավման և շարունակական ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման միջոցով:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Խմելու ջրի ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) լուծել խմելու ջրի մատակարարման ոլորտում առկա խնդիրները, մասնավորապես՝

ա. 2017-2019 թվականների ընթացքում իրականացնել Երևան քաղաքի տարբեր համայնքների բաշխիչ ցանցերի բարելավման աշխատանքներ՝ հոսակորուստների կրճատման, ջրի բաշխվածության ապահովման նպատակով,

բ. բարելավել վարձակալական պայմանագրի կառավարման արդյունքում սպասարկման տարածքի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները և **ՀՀ պետական բյուջեի ամենամյա մուտքն ապահովել առաջիկա 5,5 տարիների համար 19 063.5 մլն դրամի չափով,**

գ. ապահովել վարձակալի ֆինանսական միջոցներով կատարվող Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացումը՝ առաջիկա 5 տարիների համար 11 մլրդ դրամի չափով,

դ. կրճատել ջրակորուստներն առաջիկա 5 տարիների համար 12-13 %-ի չափով, պայմանագրային տարիների ընթացքում՝ 30 %-ով,

ե. իրականացնել գույքի բարեկալման ու զարգացման վրա ներդրումների պետական ծրագիր՝ շուրջ 150 մն եվրոյի չափով.

2) իրականացնել միջոցառումներ՝ սպասարկման տարածքից դուրս մնացած 560 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ԶՏՊԿ համակարգի մասնագիտացված կառույցի սպասարկման տարածքի ստեղծման համար, այդ թվում՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել չափասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման մասին հայեցակարգ,

բ. մինչև 2017 թվականի ավարտն ավարտել Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի, իսկ մինչև 2019 թվականի ավարտը՝ Սևանի և Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանների շինարարությունները,

գ. մինչև 2017 թվականի ավարտը վերանայել և լրամշակել խմելու ջրի ռազմավարությունը,

դ. մինչև 2018 թվականի ավարտը ներդնել չափասարկվող տարածքում պետությունմասնավոր գործընկերության (ՊՄԳ) փոխահավետ համագործակցության առավել արդյունավետ գործիքներ,

ե. 2018-2022 թվականների ընթացքում լուծել ՀՀ Շիրակի, ՀՀ Արագածոտնի և ՀՀ Արմավիրի, ՀՀ Լոռու, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Սյունիքի մարզերի խմելու ջրի ռեսուրսների անհամաշափ բաշխվածության և հասանելիության խնդիրները, այդ թվում մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել նշված տարածքների 560 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման նախագծային աշխատանքները և մինչև 2020 թվականի ավարտը մեկնարկել շինարարական աշխատանքները:

2. Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարեկավելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2019 թվականի ավարտն ապահովել մեխանիկական ռոռոգման համակարգերն ինքնահոս համակարգով և մայր ու երկրորդ կարգի ջրանցքները նորեկով փոխարինումը՝ ռոռոգման համակարգերի վերականգնման, վերակառուցման, արդիականացման ներդրումային ծրագրերի իրականացմամբ.

2) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ջրամբարաշինության ծրագրերը, այդ թվում՝

ա. մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել Սելավ-Մաստարա ջրամբարի տեխնիկատնտեսական հիմնավորման, կառուցապատման նախնական նախագծի պատրաստման ուսումնասիրությունը,

բ. մինչև 2022 թվականի ավարտն ավարտել Վեդո ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները,

գ. մինչև 2022 թվականի ավարտն ավարտել Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման աշխատանքները.

3) ոռոգման ոլորտում իրականացնել օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել ոռոգման համակարգի ֆինանսական առողջացման ծրագիր,

բ. մինչև 2017 թվականի ավարտը մշակել ոռոգման ոլորտում հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիր,

գ. մինչև 2017 թվականի ավարտը մշակել «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

դ. մինչև 2019 թվականի ավարտը մշակել «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ ԶՕՇ-հողօգտագործող-ֆերմեր իրավահարաբերությունների կանոնակարգման, գյուղատնտեսության զարգացման մեջ ոռոգման ջրի դերակատարության հստակեցման, նոր ոռոգելի հողատարածքների ավելացման, ընկերությունների կառավարչական կարգավիճակի փոփոխման հիմքերի ստեղծման նպատակով,

ե. մինչև 2019 թվականի ավարտը մշակել ոռոգման ջրի բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարելավման հայեցակարգը,

զ. մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել «Արփա-Սևան» N 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները.

է. մինչև 2021 թվականի ավարտը մշակել ըստ հողատարածքների առանձնահատկությունների՝ սակավաշրության և միջին ջրատվության ոռոգման ու ջրման նորմատիվային չափորոշիչներ.

4) մինչև 2017 թվականի ավարտը մշակել հեղեղների կառավարման և կանխարգելման ծրագիր, այդ թվում՝ սահմանելով հակահեղեղային առաջնահերթ ամենամյա միջոցառումներ.

5) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել խոնավ (գերխոնավ) օյուղատնտեսական հողատարածքների մեջիրատիվ վիճակի բարելավման ամենամյա աշխատանքներ.

6) մինչև 2021 թվականի ավարտը նոր տեխնոլոգիաների, կառավարման հեռահար զոնդավորման տեղեկատվական համակարգի միջոցով ներդնել ոռոգման արդյունավետության բարձրացման, ջրակորուստների կրճատման, ջրախնայողության, մշակաբույսերի բերքատվության աճի, ոռոգվող հողատարածքների ավելացման, ջրի առցանց, թափանցիկ կառավարման համակարգ.

7) բարձրացնել վերահսկելիությունը հիդրատեխնիկական կառույցների տեխնիկական, ֆինանսական և ֆիզիկական վիճակի գնահատման, ջրի հաշվառման հստակեցման, ջրակորուստների բացահայտման և էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման ուղղությամբ, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը գնահատել մեխանիկական ջրարտադրության սարքավորումների տեխնիկական վիճակը՝ վերազինելով (փոխարինելով) կառավարման արդի համակարգերը,

բ. մինչև 2019 թվականի ավարտը գույքագրել հիդրատեխնիկական կառույցները և իրականացնել առողջիւտ,

գ. մինչև 2020 թվականի ավարտը կահավորել ոռոգման համակարգերը՝ SCADA ծրագրով հագեցած ջրաչափական դիտակետերով:

Միջուկային անվտանգություն

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի երկարաժամկետ ծրագրի նպատակն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության մակարդակի բարձրացումը և ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում իրականացվող գործունեության ոիսկի նվազեցումն են:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Միջուկային օրենսդրության կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2019 թվականների ընթացքում մշակել «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ նոր օրենք, որն ուժի մեջ կմտնի 2020 թվականից:

2. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգ շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի մասցորդային ռեսուրսի հիմնավորման գնահատում.

2) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման միջոցառումների լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում.

3) մինչև 2021 թվականի ավարտն իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում՝ մինչև 2026 թվականը:

3. Աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման ռազմավարությամբ և հայեցակարգով նախատեսված աշխատանքների լիցենզավորում:

4. Շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) ստեղծել ճառագայթային չափումների ռեֆերենսային լաբորատորիա, մասնավորապես՝ ա. մինչև 2018 թվականի ավարտը տարածք հատկացնել ՀՀ կառավարության առնվազեցնելու միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին և վերանորոգել այն,

բ. 2018-2021 թվականների ընթացքում ձեռք բերել լաբորատոր ժամանակակից և սերտիֆիկացված սարքեր, սարքավորումներ, մեթոդաբանություններ, նմուշառման միջոցներ, անհատական պաշտպանության միջոցներ, դիզել գեներատորի ու գրասենյակային գույք՝ տեխնիկական համագործակցության ծրագրերի շրջանակներում,

գ. 2018-2022 թվականների ընթացքում հավաքագրել, պատրաստել և վերապատրաստել մասնագետներ.

2) 2018-2020 թվականների ընթացքում ներդնել միջուկային և ճառագայթային վթարային իրավիճակներում որոշումների ընդունմանն աջակցող «RODOS» ավտոմատ համակարգ:

3.5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի նպատակը գյուղատնտեսությունում տպրեկան առնվազն 5 տոկոսով ոլորտի համախառն արտադրանքի ավելացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը (էներգետիկ արժեքով գնահատված հիմնական պարենամթերքների ինքնարավության մակարդակը 2022 թվականին կհասնի շուրջ 75 %), բարձրարժեք գյուղատնտեսության զարգացումը, արդիական

տեխնոլոգիաների ներդրումը, ներմուծման փոխարինումը, արտահանման ծավալների ավելացումը և գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումն են:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Բուսաբուծության ոլորտի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում ամրապնդել սերմնաբուծության, սերմնարտադրության և սերմնապահովման սեղեկցիոն կայանների կարողությունները և ընդլայնել դրանց ցանցը: Շարունակել սերմների որակի ստուգման և պետական սորտավորձարկման ծրագիրը.

2) 2017-2022 թվականների ընթացքում կայուն բերքի ապահովման համար իրականացնել բույսերի պաշտպանության միջոցառումներ՝ արդյունքում էապես նվազեցնելով վնասատուների պատճառած վնասը.

3) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել գյուղատնտեսության հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի լայն տեսականու հասանելիության ծրագիր.

4) մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ-ում ժամանակավից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների պետական աջակցության ծրագիրը, այդ թվում՝ մինչև 2018 թվականի ավարտը հիմնելով 100 հա ինտենսիվ պտղատու այգիներ:

2. Անասնաբուծության ճյուղի կայունացման և զարգացման համար երկարաժամկետ լուծումներ ապահովելով նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ձեռք բերել տեղական վերարտադրության տոհմային երինջներ և մատչելի պայմաններով տրամադրել տարածամկետ վճարմամբ տավարաբուծական գյուղացիական տնտեսություններին՝ նախատեսելով հստակ չափորոշիչներ և ծախսվող միջոցների վերադարձի մեխանիզմներ.

2) 2018-2022 թվականների ընթացքում կրկնապատկել տեղական վերարտադրության տոհմային երինջների տրամադրման ծավալները.

3) ստեղծել և զարգացնել տոհմաբուծարաններ, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագիր,

թ. 2018-2022 թվականների ընթացքում մասնավորի հետ համագործակցությամբ՝ հիմնել 4 տոհմարուծարան:

3. Զենարուծության ճյուղի կայուն զարգացման և կանոնակարգման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում մշակել ուսումնակարություն՝ արտահանմանը միտված ժամանակակից ձեռնարուծարանների ձևավորման և կայացման պետական աջակցության մեխանիզմների ներդրմամբ:

4. Հականասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների և անասանրուժական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել շուրջ 6 մին կանխարգելիչ պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:

5. Աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում իրականացնել ծրագրի պիլոտային փուլը՝ ՀՀ մեկ մարզի ամբողջական աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրմամբ.

2) 2018-2019 թվականների ընթացքում ավարտին հասցնել ևս 9 ՀՀ մարզերի աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգի ներդրումը.

3) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել հողերի ազդրիմիական հետազոտության և բերրիտության բարձրացման միջոցառումների ծրագրը:

6. Գյուղացիական տնտեսությունների կոռպերացիայի խթանման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է 2018-2022 թվականների ընթացքում իրագործել կոռպերատիվներին աջակցության պետական ծրագիր:

7. Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի արդիականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրը, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտը մատակարարել շուրջ 3 մլրդ դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկա՝ տարեկան 2 տոկոս տոկոսադրույքով.

2) 2017-2021 թվականների ընթացքում մասնավորի հետ համագործակցությամբ իրականացնել գյուղատնտեսական տեխնիկայի կայանների հիմնման ծրագիր: Կայանի աշխատանքների պիլոտային ծրագիրը մեկնարկել 2017 թվականին՝ աշխատանքների հետ:

8. Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման ծրագիրը՝ ընդհանուր առմամբ շուրջ 10.0 հազ. հա-ի վրա կաթիլային ոռոգման համակարգի ներդրմամբ.

2) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել **ՀՀ գյուղատնտեսությունում հակակարևության ցանցերի ներդրման պետական աջակցության ծրագիրը՝ մատչելի պայմաններով,** նպատակային վարկերի տոկոսադրույթի սուբսիդավորման մեխանիզմների կիրառմամբ:

9. Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի աջակցության նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտի վարկավորման սուբսիդավորման ծրագիր.

2) բարձրացնել գինեգործության վարկանիշը և մրցունակությունը, մասնավորապես՝
ա. մինչև 2018 թվականի ավարտն առաջարկել **ՀՀ պետական բյուջե հավաքագրվող տարեկան մուտքերի պահպանմամբ՝ պետական տուրքի և ակցիզային հարկի դրույթաշվերի հաշվարկման մեթոդ,**
բ. 2017-2019 թվականների ընթացքում միջազգային պահանջներին համապատասխանեցնել գինու որակի տեղական չափորոշիչները և չափանիշները:

10. Գյուղատնտեսության ոլորտում վարկերի մատչելիության և նպատակայնության մակարդակի բարձրացման նպատակով **ՀՀ կառավարությունը նախատեսում է՝**

1) 2017-2022 թվականների ընթացքում շարունակել գյուղատնտեսության ոլորտին նպատակային վարկերի տրամադրման պետական աջակցության ծրագիրը՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների գյուղացիական տնտեսությունների համար սահմաներով առավելագույն նպաստավոր տոկոսադրույթ, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտը տարեկան 5 տոկոս տոկոսադրույթով տրամադրել շուրջ 7 մլրդ դրամի վարկեր:

11. Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2018-2020 թվականների ընթացքում պետական աջակցությամբ իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը:

12. Բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, դաշտային կերարտադրության բարելավման, անասնաբուծության արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսությունում կոռավերացիայի խթանման, արտադրական կարողությունների և արժեշղթայի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2020 թվականների ընթացքում շարունակել համայնքների գյուղատնտեսական ուսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիրը՝ ուղղված ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ու տեղական արտադրողների ու վերամշակողների արտադրական հզորությունների ավելացմանը:

13. Անտառային ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել անտառապահպանական ծառայությունների կատարելագործման, հսկողության և անտառների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիր, իսկ 2018-2022 թվականների ընթացքում ապահովել ծրագրի իրագործումը.

2) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել անտառային պետական մոնիթորինգի նոր ծրագիր՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:

Մնադամթերքի անվտանգություն

Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման որակական փոփոխությունների ապահովումը պահանջում է սննդամթերքի անվտանգության կարողությունների և որակի ենթակառուցվածքների արդիականացման միջոցով հետևողականորեն նպաստել երկրում սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Նշված ոլորտներում պետական վերահսկողությունը պետք է անցում կատարի ոխսկերի գնահատման և կառավարման ներդրված համակարգի հիման վրա վտանգի հայտնաբերման ու կանխարգելման սկզբունքներով գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը՝ միաժամանակ ապահովելով նվազեցված վարչարարությունը, թափանցիկությունը, սպառողի կյանքի և առողջության համար անվտանգ, միջազգային

պրակտիկայում որակի ամենաբարձր չափանիշներին համապատասխան սննդամթերքի արտադրությունը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Սննդի շղթայի օպերատորների շրջանում սննդամթերքի անվտանգության և որակի կառավարման համակարգերի ներդրման պահանջի կիրառման ապահովման և իրականացվող պետական վերահսկողության խստացման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել սննդի շղթայի օպերատորների շրջանում որակի կառավարման համակարգերի ներդրմանն ուղղված՝ իրազեկվածության մակարդակի բարձրացման աշխատանքներ.

2) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել, ըստ ոլորտների, որակի կառավարման համակարգերի փուլային ներդնում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արտահանվող առանձին ապրանքատեսակների որակի ստուգմանը:

2. Սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ներդնել սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրման մեխանիզմներ.

2) 2018-2022 թվականների ընթացքում փուլերով իրականացնել տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման և փուլերով կիրառել առանց սանիտարական անձնագրերի տրանսպորտային միջոցներով սննդամթերք տեղափոխող սննդի շղթայի օպերատորների նկատմամբ պատասխանատվության միջոցներ:

3. Մսի իրացման և գնման ոլորտում պարտադիր սպանդանոցային մորթի ապահովման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017 թվականից սկսած՝ փուլային անցում կատարել պարտադիր սպանդանոցային մորթի.

2) 2018-2019 թվականների ընթացքում մշակել և ներդնել սպանդանոցների նկատմամբ հսկողության, անասնաբուժասանիտարական փորձաքննության և մսի դրոշմման վարչարարության կատարելագործման ու արդյունավետության բարձրացման մեխանիզմներ:

4. Գյուղատնտեսական կենդանիների նույնականացման, հաշվառման ու համարակալման թվայնացված համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ու համարակալման ծրագրի մշակման և նախապատրաստական աշխատանքներ.

2) 2018-2020 թվականների ընթացքում ներդնել թվայնացված համակարգ և ապահովել վտանգի բացահայտման ու վարակիչ հիվանդությունների մոնիթորինգային հսկողություն՝ գյուղատնտեսական կենդանիների նույնականացման, հաշվառման ու համարակալման նպատակով:

5. Մնանամթերքի անվտանգության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել, ըստ արտադրատեսակների և գործունեության իրականացման տեսակների, սննդի շղթայի օպերատորների ույժինգավորման համակարգի ներդրման հայեցակարգ, իսկ 2018-2020 թվականների ընթացքում ներդնել սննդի շղթայի օպերատորների ույժինգավորման համակարգ.

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել սննդամթերքի անվտանգության ոլորտում ոիսկերի գնահատման մոդել, իսկ 2018-2021 թվականների ընթացքում ներդնել սննդամթերքի անվտանգության ոլորտներում ոիսկերի գնահատման մոդել և կիրառել ոիսկերի կառավարման մեխանիզմներ.

3) 2017-2019 թվականների ընթացքում բարձրացնել սննդամթերքի անվտանգության լարորատոր հսկողության մակարդակը և զարգացնել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական ու բուսասանիտարական լարորատոր ծառայությունների համակարգը:

6. Ներմուծվող սննդամթերքի որակի նկատմամբ վարչարարության պարզեցման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ներդնել սահմանային հսկողության համար «մեկ պատուհան» համակարգ.

2) մինչև 2018 թվականի ավարտը վերանայել և պարզեցնել ներմուծման արտահանման ընթացակարգերը և այդ գործընթացներում ոիսկայնության մեջողաբանությունը.

3) 2018-2022 թվականների ընթացքում պարզեցնել արտադրանքի և որակի կառավարման համակարգերի հսկողության բարձր մակարդակ ունեցող երկրներից որոշակի

սննդամթերքի տեսակների ներմուծման դեպքում վարչարարությունը, ինչպես նաև կրճատել ժամկետները:

3.6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը նպատակառության վեհական լինելու՝

- տրանսպորտի ոլորտում, կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների միջոցով, քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի, փոխադրումների, ապրանքների և ծառայությունների հասանելիության ու մրցունակության ապահովմանը.
- ճանապարհային տնտեսության կառավարման համակարգի կատարելագործման, ճանապարհների որակի ու անվտանգության զգալի բարելավման ապահովմանը.
- ՏՀՏ-ի և կապի ոլորտի ենթակառուցվածքների բարելավման, դինամիկ զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման և ձեռներեցության խթանման, բնակչության զբաղվածության, ձեռնարկատիրության և տարածքային համաշափ զարգացման խթանման ապահովմանը.
- փոստային կապի համակարգի արդիականացման, որակյալ փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հասանելիության և մատչելիության, նոր ծառայությունների, այդ թվում՝ փոստանկային, էլեկտրոնային-փոստային ծառայությունների ներդրման ապահովմանը.
- պետական ծախսների նպատակայնության և արդյունավետության բարձրացման, ֆինանսական վերահսկողության և կառավարման մեխանիզմների արդիականացման ապահովմանը, որի շնորհիվ ՀՀ քաղաքացուն և գործարար համայնքին տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծառայությունները կլինեն հասանելի, մատչելի և արդյունավետ ՀՀ ամրող տարածքում, իսկ կառավարումը՝ ժամանակակից և թափանցիկ:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Տրանսպորտի ոլորտում, կայուն զարգացող տրանսպորտային ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների միջոցով, քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի, փոխադրումների, ապրանքների և ծառայությունների հասանելիության ու

մրցունակության ապահովման, ինչպես նաև սպասարկման որակի ու տրանսպորտային անվտանգության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) ՀՀ տարածքում ստեղծել միասնական ավտոմոբիլային ուղևորափոխադրումների երթուղային ցանց, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը մշակել միասնական երթուղային ցանցի ներդրման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը՝ ներառյալ տրանսպորտային սպասարկման ծառայությունների գնազոյացման, տրանսպորտային ծախսերի ու եկամուտների հավասարակշռման և փոխհատուցման (սուբսիդավորման) մեխանիզմները,

բ. մինչև 2019 թվականի ավարտը ներգրավել միասնական երթուղային ցանցի մասնավոր օպերատորի (օպերատորների), ինչպես նաև մասնավոր ներդրումներ,

գ. մինչև 2020 թվականի ավարտը մշակել ՀՀ տարածքի տրանսպորտային միասնական ինտերակտիվ քարտեզը, Էլեկտրոնային կառավարման և միասնական տոմսի համակարգը, իսկ մինչև 2022 թվականի ավարտը ներդնել ամրողական համակարգը,

դ. մինչև 2020 թվականի ավարտը մասնավորեցնել ավտոկայարանային համակարգը (առանց ավտոկայարանային համակարգի գործառնական նշանակության փոփոխության իրավունքի)՝ մասնավոր ներդրումների ներգրավման միջոցով համակարգի արդիականացման, տեխնոլոգիական հազեցվածության, կառավարման արդյունավետության, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, ծառայությունների աշխարհագրության ընդլայնման նպատակով, իսկ 2021-2022 թվականների ընթացքում իրականացնել համակարգի արդիականացման ծրագիրը,

ե. մինչև 2022 թվականի ավարտը ապահովել ՀՀ բոլոր համայնքների ավտոմոբիլային ուղևորափոխադրումների հասանելիությունը.

2) ապահովել տրանսպորտային անվտանգություն, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը կանոնակարգել տրանսպորտային միջոցների տեխնիկական գննության գործընթացը և ներդնել Էլեկտրոնային համակարգը,

բ. մինչև 2017 թվականի ավարտը կանոնակարգել գազարալոնային սնման համակարգով կահավորված տրանսպորտային միջոցների շահագործումը,

գ. մինչև 2018 թվականի ավարտը բարձրացնել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների տեխնիկական հազեցվածությունը՝ վարորդների աշխատաժամանակի վերահսկման նպատակով թվային տախտգրաֆի և վերահսկողության այլ Էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով.

3) մինչև 2020 թվականի ավարտը կատարելագործել տաքսամոտորային փոխադրումների օրենսդրությունը, կարգավորել էլեկտրոնային հարթակի միջոցով աշխատող ու ավանդական տաքսի ծառայությունների գործունեությունը և ստեղծել շարժակազմի թարմացման խթաններ.

4) գարգացնել այլընտրանքային տրանսպորտային ուղիները, մասնավորապես՝

ա. մինչև 2020 թվականի ավարտը մշակել ՀՀ-ից և դեպի ՀՀ ուղևորների և բեռների տեղափոխման այլընտրանքային անվտանգ ծրագրերը և խթանել դրանց գարգացմանը: Համաձայնեցնել տարանցիկ երկրների հետ փոխադրումների առավել նպաստավոր ռեժիմները՝ երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի միջոցով,

բ. մինչև 2022 թվականի ավարտը ստեղծել մուլտիմոդալ փոխադրումների գարգացման նպատակով «չոր նավահանգստի» օրենսդրական դաշտ, խթանել լոգիստիկ կենտրոնների գարգացմանը և ընդլայնել ՀՀ տարանցիկ հնարավորությունները.

5) գարգացնել երկաթուղային տրանսպորտը, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ընդունել երկաթուղային ենթակառուցվածքների գարգացման ռազմավարություն,

բ. մինչև 2022 թվականի ավարտն արդիականացնել ուղևորատար շարժակազմը:

2. Ճանապարհային տնտեսության կառավարման համակարգի կատարելագործման, ճանապարհների որակի ու անվտանգության զգայի բարելավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) կատարելագործել ճանապարհային ակտիվների կառավարումը, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել ճանապարհային ռազմավարություն,

բ. մինչև 2018 թվականի ավարտը ներդնել ակտիվների կառավարման միասնական համակարգ, այդ թվում՝ ճանապարհների երկարաժամկետ սպասարկման և շահագործման պայմանագրերի միջոցով,

գ. մինչև 2018 թվականի ավարտը գույքագրել, քարտեզագրել և թվայնացնել ՀՀ ճանապարհային ցանցը,

դ. մինչև 2018 թվականի ավարտը վերանայել և խստացնել ՀՀ-ում միջազետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական և օտարման գոտիներում կառուցապատում իրականացնելու աշխատանքներին ներկայացվող պահանջները,

ե. մինչև 2018 թվականի ավարտը մշակել ՀՀ-ում այլընտրանքային վճարովի ճանապարհների վերաբերյալ օրենսդրություն.

2) խթանել ճանապարհաշինական աշխատանքների որակի բարեկավման, արդյունավետության բարձրացման և տարածքային համաշափ գարգացումը՝ նշված միջոցառումների շնորհիվ՝

ա. մինչև 2022 թվականի ավարտն ապահովել Հյուսիս-հարավ ծրագրի շարունակականությունը,

բ. մինչև 2022 թվականի ավարտն իրականացնել ՀՀ համայնքների համապատասխան միջավետական նշանակության ավտոճանապարհների կամ մարզկենտրոններին կապող առնվազն մեկ լավ կամ բավարար վիճակում գտնվող ճանապարհով ապահովումը,

գ. մինչև 2022 թվականի ավարտն ապահովել ՀՀ ճանապարհային ցանցի՝ միջավետական, հանրապետական և տեղական (մարզային) նշանակության լավ վիճակում գտնվող ավտոճանապարհների տեսակարար կշռի ավելացման և ճանապարհային կահավորանքի բարեկավումը,

դ. մինչև 2022 թվականի ավարտը մշակել խոշոր ճանապարհային ծրագրեր և ներկայացնել միջազգային հարթակներում դրանց իրականացման նպատակով մասնավոր ներդրումների ներգրավման խթանման համար.

3) ապահովել ճանապարհային երթևեկության անվտանգությունը, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել և ընդունել երթևեկության անվտանգության 5-ամյա ծրագիրը, իսկ 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել այն,

բ. մինչև 2020 թվականի ավարտը մշակել և իրականացնել ՀՀ միջավետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհները ճանապարհային նշաններով կահավորելու նոր տարատեղման սխեմա:

3. SCS-ի և կապի ոլորտի ենթակառուցվածքների բարեկավման, դիմամիլ գարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման և ձեռներեցության խթանման, տարածքային համաշափ գարգացման և SCS-ի անվտանգության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ՀՀ-ում SCS-ի ոլորտի գարգացման ռազմավարություն.

2) խթանել հայկական SS-ի կամ SCS-ի արտադրանքի մրցունակ բրնսդի ձևավորումը և ապահովել միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանքը պատշաճ ներկայացնելը, ինչպես նաև խթանել այլ համակարգերի հետ խնտեզրմանը, մասնավորապես՝

ա. 2017 թվականից սկսած իրականացնել գործարար համայնքի հետ համագործակցության համալիր միջոցառումներ՝ ոլորտում առկա խոշնդրությունները բացահայտելու և լուծման

ուղիներ համատեղ գտնելու համար, իրազործել **S_{CS}**-ի ոլորտի խթանման և գործարար միջավայրի բարելավման օրենսդրական նախաձեռնություններ,

բ. 2017-2022 թվականների ընթացքում զարգացնել **S_{CS}**-ի ոլորտի որակյալ մասնագիտական կարողությունները, մասնավորապես, ուսումնական կենտրոններում վերազգային ընկերությունների ներգրավմամբ, համապատասխան կարողություններ և իրականացնել համատեղ ծրագրեր,

գ. ապահովել Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հազեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեություն և մինչև 2019 թվականի ավարտն ստեղծել նոր կենտրոններ,

դ. 2017-2022 թվականների ընթացքում խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, առևտրայնացնել գիտական հետազոտությունների արդյունքները՝ ինովացիոն և բիզնես զարգացման դրամաշնորհային ծրագրերի միջոցով.

3) 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել **ՀՀ** տնտեսության բոլոր ճյուղերում **SS**-ի և **S_{CS}**-ի լուծումների կիրառումը, մասնավորապես, խթանել տեղական **SS**-ի և **S_{CS}**-ի մրցունակ արդյունքի օգտագործմանը.

4) զարգացնել և ստեղծել նոր **S_{CS}**-ի ենթակառուցվածքներ՝ բարձրացնելով ծառայությունների մատուցման արդյունավետությունը, որակը, արագագործությունը, հասանելիությունը և այլ համակարգերին ինտեգրացման հնարավորությունները, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել և ընդունել **ՀՀ** տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ռազմավարությունը, իսկ 2018-2022 թվականների ընթացքում՝ իրականացնել այն,

բ. մինչև 2018 թվականի ավարտը ստեղծել պետություն-մասնավոր համագործակցությամբ տվյալների մշակման ժամանակակից կենտրոն,

գ. 2019-2022 թվականների ընթացքում ստեղծել **ՀՀ** պետական մարմնների միջև միասնական ժամանակակից էլեկտրոնային հաղորդակցության միջգերատեսչական փակցանց.

5) զարգացնել և ստեղծել **S_{CS}**-ի ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակներ, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը գործարկել Հայաստանի **S_{CS}**-ի ընկերությունների www.e-ictregister.am էլեկտրոնային համակարգերը, իսկ մինչև 2019 թվականի ավարտը մատուցել էլեկտրոնային բազաների և ծրագրային լուծումների հիման վրա www.e-ictregister.am առցանց ծառայությունները,

թ. մինչև 2018 թվականի ավարտը թվայնացնել արխիվային նյութերը՝ երեք տարվա կտրվածքով, ինտեգրել թվայնացված նյութերը գործող ավտոմատացված համակարգերում.

6) մինչև 2017 թվականի ավարտը մշակել վստահության, տեղեկատվական անվտանգության, կիրեռանվտանգության և տվյալների պաշպանության բարձրացման ուղղությամբ համալիր միջոցառումներ և 2018-2022 թվականների ընթացքում ապահովել դրանց իրականացումը:

4. Փոստային կապի համակարգի կատարելագործման և մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը մասնավորեցնել «Հայփոստ» փակ քածնետիրական ընկերությունը և ներգրավել մասնավոր ներդրումներ.

2) 2018-2021 թվականների ընթացքում բարձրացնել փոստային ցանցի ենթակառուցվածքների արդյունավետությունը, կատարելագործել փոխազործողությունը, ապահովել որակյալ փոստային կապի ոնփիերսալ ծառայության հասանելիություն և մատչելիություն, սահմանել և խթանել նոր ծառայությունների, այդ թվում՝ փոստանկային, էլեկտրոնային-փոստային ծառայությունների ներդրման պայմաններ:

3.7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻՈ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ոլորտը պետք է լինի արդյունավետ, դինամիկ և ճկուն՝ արձագանքելու համար ինչպես համաշխարհային օդային փոխադրումների ոլորտում կատարվող փոփոխություններին և զարգացումներին, այնպես էլ տեղի ունեցող աշխարհաքաղաքական և տնտեսական իրադարձություններին:

Օդային փոխադրումների ոլորտի կայուն զարգացման համար անհրաժեշտ է ապահովել ազատականացված և սպառիչ իրավական դաշտ, կանխատեսելի քիզնես միջավայր, ավիացիայի ճյուղային զարգացման նախապայմանների բացահայտում և հետևողական աշխատանքների իրականացում, ինչն իր հերթին կնպաստի ավիացիոն շուկայի դիվերսիֆիկացմանը, օդային երթուղիների ցանցի ընդլայնմանը, անհրաժեշտ ներդրումների ծավալների հստակեցմանը և դրանց ադրյունների բացահայտմանը, ոլորտի կառավարման համակարգում աշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործմանը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Դեպի ՀՀ և ՀՀ-ից մատչելի ավիափոխադրումների կազմակերպման, մասնավորապես, բյուջետային ավիաընկերությունների ներգրավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը Գյումրու «Շիրակ» օդանավակայանի կառավարչի ներդրումների հաշվին բարեկարգել օդանավակայանը և զարգացնել ենթակառուցվածքները.

2) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել չվերթների աշխարհագրության ընդլայնման և բյուջետային ավիաընկերությունների թվի ավելացման համար անհրաժեշտ նախադրյալները:

2. Փոքր ավիացիայի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել փոքր ավիացիայի զարգացման համարի ծրագիր.

2) մինչև 2018 թվականի ավարտն ապահովել ՀՀ փոքր ավիացիայի գործարկման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

3. ՀՀ-ից իրականացվող քեռնային փոխադրումների ծավալների մեծացման հետ կապված՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից կանոնավոր քեռնային փոխադրումների իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է մինչև 2018 թվականի ավարտը գործարկել կանոնավոր քեռնային փոխադրումներ:

4. Գործընկեր պետությունների հետ գործող համաձայնագրերի վերանայման և նոր համաձայնագրերի կնքման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը ստորագրման պատրաստել «ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը.

2) համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելուց հետո 2018-2020 թվականների ընթացքում վերջնական ներդնել համաձայնագրով նախատեսված համապատասխան կանոնակարգերը:

5. ՀՀ օդային տարածքով տարանցիկ թոիչքների թվի ավելացման նպատակով ՀՀ «Օդային մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգի ներդրում և դրա հետագա ընդլայնում՝ Հայաստան-Վրաստան ազատ օդային տարածք ձևաչափով: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ներդնել Հայաստանի Հանրապետության օդային տարածքում 290 թոիչքային մակարդակից (FL290) բարձր, ժամը 00:00-ից մինչև 06:00 «Օդային

մայրուղիներից ազատ օդային տարածք» (Free Route Airspace) հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ).

2) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել ՀՀ օդային տարածքում 24-ժամյա հայեցակարգը՝ 290 թռիչքային մակարդակից (FL290) հսարավորինս ցածր բարձրությունների վրա.

3) մինչև 2019 թվականի ավարտը ներդնել Վրաստանի հետ համատեղ հայեցակարգ:

3.8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը վերահստատում է իր հանձնառությունը՝ ընդգրկուն և արդյունավետ քաղաքաշինական քաղաքականության ձևավորման, դրա թափանցիկ ու հաշվետու կերպով իրականացման և արդյունքում՝ քաղաքաշինական միջոցներով քնակչության լյանքի որակի հետևողական բարելավման հարցում՝ կարևորելով տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

Այդ նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքաշինական գործունեության արդյունավետության բարձրացման, տարածական պլանավորման և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի լիարժեք բազաների, ինչպես նաև քաղաքաշինական օրյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական համակարգի ձևավորման, քաղաքաշինության քնագավառում ներդրումային գրավչության և գործարար միջավայրի բարելավման, շենքերի և շինությունների սեյսմակայունության և հուսալիության ապահովման, բազմաբնակարան շենքերի կառավարման խնդիրների կանոնակարգման ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ միջոցներ կձեռնարկվեն 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների հետևողականորեն իրականացման և ավարտման ուղղությամբ:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Տարածական պլանավորման գործընթացը բարելավելու և մինչև 2021 թվականը Հայաստանի Հանրապետության համայնքները տեղական մակարդակի պլանավորման փաստաթղթերով ապահովելու ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների սերտ համագործակցությամբ համարել համայնքների գլխավոր հատակագծերի և գոտունուման նախագծերի բազան՝ միկրոուղինալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միջոցով: Մասնավորապես՝

ա. 2017 թվականին մշակել ՀՀ Տավուշի մարզի միկրոուղինալ տարածական պլանավորման փաստաթղթերը,

բ. 2018 թվականին մշակել ՀՀ Սյունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերի միկրոուղինալ տարածական պլանավորման փաստաթղթերը,

գ. 2019 թվականին՝ մշակել ՀՀ Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերի միկրոուղինալ տարածական պլանավորման փաստաթղթերը,

դ. 2020 թվականին՝ մշակել ՀՀ Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերի միկրոուղինալ տարածական պլանավորման փաստաթղթերը.

2) 2021 թվականին մշակել նոր՝ ՀՀ տարածնակեցման և տարածքների կազմակերպման գլխավոր նախագիծ, որը կամփովի միկրոուղինալ փաստաթղթերով առաջարկվող դրույթները և կսահմանի ՀՀ տարածքի զարգացման ռազմավարությունը մինչև 2030 թվականը.

3) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ճարտարապետական նախագծման և շինարարական գործունեության բարեփոխումների ծրագիր՝ ուղղված ճարտարապետական գործունեության և կառուցապատման ընթացակարգերի կանոնակարգմանը, նախագծմանն ու շինարարության անհրաժեշտ որակի ապահովմանը:

2. Քաղաքաշինության ոլորտում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, քաղաքաշինական գործընթացների և տնտեսության զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2021 թվականներին խթանել մի շարք խոշոր ներդրումային ծրագրերի իրագործումը, մասնավորապես՝

1) Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (Ներկայիս Ֆիրդուսի շուկայի տարածք) կառուցապատման ներդրումային ծրագիրը.

2) «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագիրը՝ Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքում.

3) կառուցապատման ներդրումային ծրագրեր՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և առանձին համայնքների տարածքներում (Սևանի թերակղղի, Ջերմուկ, Գյումրի, Դիլիջան, Գորիս, Ծաղկաձոր, Գառնի և այլն):

3. Շինարարության ոլորտում մրցունակ, միջազգային չափանիշներին համապատասխան շինարարական արտադրանքի ստեղծման և ծառայությունների մատուցման, շինարարական կազմակերպությունների նորագույն տեխնոլոգիական և տեխնիկական հազեցվածության մակարդակի բարձրացման, բնագավառի մրցունակ մասնագիտական կաղըերի ապահովման, շինարարական շուկայում ազատ մրցակցային դաշտի և բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականն արդիականացնել շինարարական աշխատանքների գնագոյացման մեթոդաբանությունը և ձևավորել շինարարական արտադրանքի արժեքի հաշվարկման սկզբունքներ.

2) մինչև 2019 թվականն ստեղծել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեությամբ գրաղվող, ինչպես նաև լիցենզավորող մասնագետների վերապատրաստման և մասնագիտական որակավորման համակարգ.

3) աջակցել շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների և դրանց կիրառման մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը:

4. ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ պետությունների, ինչպես նաև Եվրամիության միասնական շուկայում շրջանառվող արտադրանքի և ծառայությունների հետ Հայաստանի Հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիությունն ապահովելու, դրանից բխող՝ արտահանման և ներդրումային ծավալների աճին նպաստելու, ինչպես նաև քաղաքաշինական բնագավառի նորմատիվ փաստաթղթերը՝ շինարարության ոլորտի միջավայրական (տարածաշրջանային), միջազգային և եվրոպական փաստաթղթերի ու դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների հետ ներդաշնակեցնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն առանձնացնել առաջնահերթ մշակման (տեղայնացման), վերանայման ենթակա (այդ թվում՝ բազմաթափառ շենքերի էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված պահանջների ապահովմանն ուղղված) նորմատիվ փաստաթղթերը.

2) 2017-2021 թվականների ընթացքում իրականացնել համակարգված և հետևողական աշխատանքներ առաջնահերթ մշակման (տեղայնացման) և վերանայման ենթակա

Նորմատիվ փաստաթղթերի արդիականացման՝ միջավայրական, միջազգային և եվրոպական նորմերի հետ ներդաշնակեցման ուղղությամբ.

3) 2017-2022 թվականների ընթացքում նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման, նախագծային ու շինարարական աշխատանքների որակի բարձրացման աջակցելու նպատակով զարգացնել շինարարության ոլորտի գիտատեխնիկական և փորձարարական լաբորատոր բազան:

5. Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման նպատակով շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցման, ինչպես նաև դրանց սեյսմակայունության և հուսալիության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) բարելավել տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անվտանգ և հուսալի շահագործմանն ուղղված օրենսդրական դաշտը, մասնավորապես՝

ա. 2017-2018 թվականների ընթացքում մշակել նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգ՝ սահմանելով գոյություն ունեցող շենքերի ու շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազնությունների և տեխնիկական անձնագրավորման իրականացումը,

բ. որի արդյունքում ստեղծված եղակետային տվյալների հիման վրա 2019-2021 թվականների ընթացքում մշակել և ներդնել համակարգչային ծրագիր՝ տվյալների մշտական ռեժիմով թարմացման հնարավորությամբ.

2) 2018-2021 թվականների ընթացքում հստակեցնել հանրապետության բնակավայրերի 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի բնակիչների վերաբնակեցմանը և 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի վերականգնման-ուժեղացմանն ուղղված քայլերը, մասնավորապես՝

ա. 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի թվի հստակեցման նպատակով 2018 թվականին իրականացնել դրանց տեխնիկական վիճակի նոր հետազնություն,

բ. տեխնիկական վիճակի հետազնության արդյունքների հիման վրա մինչև 2020 թվականի ավարտը մշակել առաջնահերթ ծրագիր:

6. Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրների կանոնակարգման նպատակով երկրի համար առանցքային նշանակություն ունեցող այդ ակտիվի պահպանումն ու անվտանգ շահագործումը կանոնակարգելու ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը սկզբունքորեն վերանայել բազմաբնակարան շենքի կառավարման հետ կապված՝ համատիրությունները կարգավորող օրենսդրական դաշտը՝ հստակեցնելով դրանից բխող գործառույթները.

2) մինչև 2018 թվականի ավարտն ամրագրել բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի վերակառուցման, վերանորոգմանն ուղղված (այդ թվում՝ Էսերգախնայողության և Էսերգաարդյունավետության բարձրացման) պետական աջակցության համակարգված մեխանիզմների ներդրման ուղղություններն ու սկզբունքները:

7. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով 2008 թվականին մեկնարկած և ներկայում իրականացման փուլում գտնվող պետական աջակցության բնակապահովման ծրագիրն ավարտելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2020 թվականի ավարտը լուծել ՀՀ Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելաված ընտանիքների բնակարանային խնդիրները:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտ

Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայման։ Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է։ Կրթության զարգացման գլխավոր նպատակն ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումն է, որը լիարժեք ծառայում է ազգային շահերին, արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին, յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջներին համապատասխան որակյալ կրթություն և հիմնված է կարիքներից բխող պլանավորման, սոցիալական երկխոսության և համագործակցության վրա։

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիներին գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018 թվականից սկսած ներդնել նախադպրոցական այլնուրանքային, ծախսարդյունավետ մոդելներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ազգային փոքրամասնություններին, գյուղական և սահմանամերձ համայնքներին.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել, 2019-2021 թվականների ընթացքում ներդնել նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմներ.

3) մինչև 2018 թվականի ավարտը վերանայել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը:

2. Հանրակրթության որակի և մատչելիության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) հանրակրթության բովանդակության և ծրագրերի բարեկավում՝

ա. մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018 թվականից ներդնել փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման առանձնահատուկ մոդելներ,

բ. մինչև 2018 թվականի ավարտն արդիականացնել հանրակրթական ծրագրերը, մասնավորապես, հանրակրթական հաստատություններում ներդնել ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության տարրեր,

գ. մինչև 2018 թվականի ավարտը վերանայել մաթեմատիկայի, բնական գիտությունների, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների, օտար լեզուների ուսուցման հայեցակարգային մոտեցումները,

դ. սկսած 2018 թվականից սկսել Արարատյան քակալավրիատի ներդրումը երրորդ աստիճանի կրթական ծրագիր իրականացնող մարզային ուսումնական հաստատություններում,

ե. մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018 թվականից փորձնական ծրագրի շրջանակներում, միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ) ներդնել կրեդիտային համակարգ,

գ. մինչև 2018 թվականի ավարտը ներդնել մասնագիտական կողմնորոշման կենտրոնների (կամ խմբակի) համակարգ,

է. մինչև 2018 թվականի ավարտը մշակել արտադպրոցական կրթության և դաստիարակության ծրագրերի իրականացման մեխանիզմներ,

թ. 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել կայուն դպրոցական սննդի ծրագիրը, աստիճանաբար ապահովելով հավասարակշռված, անվտանգ և որակյալ սնունդ հանրապետության ամբողջ տարածքում,

ժ. 2017-2022 թվականների ընթացքում ապահովել հատուկ դպրոցների համակարգի վերափոխումը և անցումը համընդհանուր ներառական կրթության համակարգին:

3. Ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգի ներդրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել և ներդնել ուսուցիչների աշխատանքի վարձատրության, խրախուսման նոր մեխանիզմներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների ուսուցիչներին.

2) մինչև 2017 թվականի ավարտը վերանայել, 2018 թվականից ներդնել ուսուցիչների վերապատրաստման, ատեսադրամական և մասնագիտական առաջխաղացման նոր մեխանիզմներ:

4. Կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարեկավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել, 2018 թվականից ներդնել նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակության ստեղծման նոր չափանիշներ և գործիքակազմ.

2) մինչև 2019 թվականի ավարտը մշակել և հանրությանը հասանելի դարձնել հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և Էլեկտրոնային ուսումնական պաշարներ՝ հաշվի առնելով նաև սիյուռքի կրթօջախների, փախստականների կարիքները:

5. Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարեկավման, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել շենքերի հիմնանորոգում, սեյսմակայունացում, անհրաժեշտության դեպքում, նոր դպրոցական շենքերի ու շինությունների կառուցում հաշվի առնելով նաև կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել և 2019 թվականից ներդնել անվտանգ դպրոցական շնորհերի կառուցման և վերակառուցման նախագծերի համար ներկայացվող անհրաժեշտ չափորոշիչներ՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները:

6. Դպրոցների կառավարման համակարգի վերափոխման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018 թվականից ներդնել հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր համակարգ.

2) մինչև 2018 թվականի առաջին կիսամյակի ավարտը՝ մշակել հանրակրթական հաստատությունների կառավարման նոր արդյունավետ համակարգ.

3) մինչև 2018 թվականի առաջին կիսամյակի ավարտը մշակել և ներդնել հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության կամ նշանակման նոր չափանիշներ և համակարգ:

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակի բարեկամման և ՀՀ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) գյուղատնտեսության ոլորտի մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) արդիականացում՝

ա. մինչև 2019 թվականի ավարտը մշակել և ներդնել գյուղատնտեսական և գյուղատնտեսության առնչվող ՄԿՈՒ պետական կրթական (որակավորման) չափորոշիչներն ու համապատասխան ուսումնական պլանները՝ ձեռներեցության մոդուլի պարտադիր ներառմամբ:

8. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները ՀՀ մարզերի գարգացման ուղղություններին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ստեղծել ՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված կարիերայի ուղղորդման միավորներ.

2) 2017-2018 թվականների ընթացքում ուսումնասիրել տնտեսության գերակա ոլորտները, հետագա զարգացման միտումները, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը՝ ՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով:

9. Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների խոշորացման, ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կառավարման և ծախսարդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է 2017-2018 թվականների ընթացքում օպտիմալացնել (խոշորացնել) ՄԿՈՒ հաստատությունները:

10. Բարձրագույն կրթության որակի արդիականացման, արդյունավետության և մատչելիության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) բարեկավել բարձրագույն կրթության բովանդակային հենքը և կրթական գործընթացը՝

ա. 2017-2018 թվականների ընթացքում բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան մշակել որակավորումների ոլորտային շրջանակներ,

բ. 2019-2021 թվականների ընթացքում վերանայել մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը և կառուցվածքը՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները՝ ներմուծելով ճկուն մոդուլային կառուցվածքների և ուսանողի առաջընթացի ապահովման անհատականացված մոդել,

գ. 2019-2021 թվականների ընթացքում մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրերում զարգացնել հետազոտական ու նորարական բաղադրիչները,

դ. 2017 թվականին սկսել և 2022 թվականին ավարտել բուհերում ծրագրային հավատարմագրման գործընթացը:

11. Բուհերի միաջազգայնացման գործընթացների ընդլայնման և բազմազանեցման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում ապահովել Հայաստանի եվրոպական բարձրագույն կրթական տարածքի գործընթացներին շարունակական ակտիվ մասնակցությունը և Բոլոնիայի գործընթացի նպատակների հետևողական իրագործումը.

2) 2019-2021 թվականների ընթացքում կրթական ծրագրերի կառուցվածքում նախատեսել ուսանողների շարժունության հնարավորություններն ընդլայնող ուսումնական մոդուլներ՝ «Շարժունության պատուհաններ»:

12. Բարձրագույն կրթության համակարգի և բուհերի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը կատարելագործել և գործարկել բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգը՝ բուհական և ազգային մակարդակներում.

2) մինչև 2019 թվականի ավարտը ձևավորել բնագիտական և խնդեներական ոլորտում բուհ-գիտահետոգատական խնսիտուտ-գործատու գիտակրթական կլաստերներ.

3) 2019-2022 թվականների ընթացքում իրականացնել բարձրագույն կրթության համակարգի և բուհերի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիր:

13. Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման գործառույթների բարելավման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը վերանայել բարձրագույն ուսումնական հաստատությունների պետական ֆինանսավորման մեխանիզմները և ուսանողական կրթաթոշակների ու նպաստների տրամադրման սկզբունքները.

2) 2018-2019 թվականների ընթացքում ձևավորել ՀՀ բարձրագույն կրթական համակարգում բուհական անձեռնմխելի ֆոնդեր.

3) 2019 թվականից սկսած ապահովել բնակչության բոլոր խավերի համար բարձրագույն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ՝ ավելացնելով պետության կողմից ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների թիվը՝ ուղղելով գերակա ոլորտների մասնագիտություններին և ուսանողական խոցելի խմբերին:

14. 2017 թվականի ընթացքում բարձրագույն կրթության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Ազգային ժողով:

15. 2018-2020 թվականների ընթացքում շարունակել աշխատանքը մասնավոր ներդրողների հետ՝ ՀՀ հանրակրթական համակարգում խնդեներական լարորատորիաների հիմնման ուղղությամբ:

Գիտություն

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտը պետք է լինի միջազգայնորեն մրցունակ, միջազգային հետազոտական տարածքի հետ ինտեգրված, հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններում գերազանցությունը խթանող, հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ:

Այդ նպատակակետի ձեռքբերման համար անհրաժեշտ է իրականացնել գիտության ոլորտի բարեփոխումներ՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմամբ և այդ արդյունավետության գնահատման հստակ, արդի պահանջներին համապատասխան չափանիշների ներդրմամբ:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտը կանոնակարգող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխանեցում արդի չափանիշներին.

2) 2017-2018 թվականների ընթացքում մշակել և ներդնել գիտության ոլորտի օպտիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագիր.

3) 2018 թվականին մշակել և ներդնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման և պետական ֆինանսավորման ծավալների ու արդյունավետության համապատասխանեցման մեխանիզմները:

2. Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրման, գիտական ենթակառուցվածքների արդիականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել գիտական կազմակերպություններում վարչական պաշտոններում աշխատանքային տարիքը 70 տարեկանով սահմանափակելու մեխանիզմների և համապատասխան օրենսդրական ակտերի նախագծերը.

2) 2017-2018 թվականների ընթացքում մշակել եվրոպական երկրների գիտական աստիճանաշնորհման համակարգի հետ համադրելի աստիճանաշնորհման համակարգի ներդրման հայեցակարգը և իրականացնել միջոցառումներ.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել և ներդնել գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը.

4) 2018-2022 թվականների ընթացքում գիտության ոլորտում գիտական և (կամ) գիտակրթական կադրերի վերափոխում ծրագրերի իրականացում:

3. Գիտության ոլորտի ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել երկակի նշանակություն ունեցող և պաշտպանական խնդիրներին միտված ծրագրերը.

2) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել կիրառական բնույթի, այդ թվում՝ տնտեսության պահանջներից բխող գիտատեխնիկական ծրագրերը՝ մասնավոր հատվածի հետ համափինանսավորման սկզբունքով.

3) 2018-2020 թվականների ընթացքում կենտրոնացնել տնտեսության պահանջներից բխող և միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հետազոտությունների ուղղություններում ռեսուրսները:

4. Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգի ձևավորման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը մշակել գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի ձևավորման, ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի ներգրավման խրախուսման մեխանիզմները.

2) 2018-2022 թվականների ընթացքում ստեղծել գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական գերազանցության կենտրոններ՝ բեկումնային զարգացում ապահովող որոշ տեխնոլոգիաների ոլորտներում.

3) աջակցել Հայաստանի գիտատեխնիկական հիմնադրամի (FAST) հետ համագործակցության միջոցով Հայաստանում տեխնոլոգիական նորարարությունների համար ներդաշնակ միջավայր ստեղծելուն և զարգացնելուն:

5. Հայագիտության ոլորտի հետազոտությունների խթանման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

4.2. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականությունն ուղղված է լինելու քաղաքացիների սոցիալական իրավունքի ամրողական իրացմանը՝ նպատակ ունենալով տրամադրել նոր որակի ծառայություններ՝ կիրառելով արդիական մեթոդներ և թափանցիկ մեխանիզմներ:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիներին գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնորույնաբար կայուն եկամտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծման և դեպի պետական նպաստն առկա ձգումների առավելագույնս ապախթանման նպատակով 2017-2022 թվականների ընթացքում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- 1) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ անցում կատարել դեպի սոցիալական պաշտպանության նախաձեռնողական քաղաքականություն: Շահառուին տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակների ընտրության հիմքում դրվելու է ոչ թե շահառուի ներկայացրած «պահանջարկը», այլ նրա իրական կարիքը.
- 2) գործառնական ապահովման տեսանկյունից գերակա համարել սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը և զարգացումը՝
 - ա. մինչև 2019 թվականի ավարտը ներդնել որակավորման կրեդիտային սանդղակի վրա հիմնված սոցիալական աշխատողների հավաստագրման համակարգ,
 - բ. մինչև 2020 թվականի ավարտն ապահովել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման բնականոն գործընթացը՝ սոցիալական դեպքի վարման մեթոդարանության ներդրման, ընտանիքների անապահովության գնահատման բազմակողմանի և օրյեկտիվ հենքի ապահովման միջոցով.
 - 3) համայնքային ներուժի առավելագույնս ներգրավման միջոցով, տարածքային համաշակի զարգացման նպատակով՝
 - ա. մինչև 2018 թվականի ավարտը մշակել տեղական սոցիալական ծրագրեր՝ համայնքի սոցիալական կարիքների գնահատման միջոցով,
 - բ. մինչև 2019 թվականի ավարտը որոշել տեղական սոցիալական ծրագրի առաջնահերթությունը և ներգրավել ծրագրի համար ֆինանսական միջոցներ (fund-raising),
 - գ. մինչև 2020 թվականի ավարտը սոցիալական ծառայությունների համալիր տարածքային կենտրոնները փոխանցել համայնքներին.
- 4) ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրման այլընտրանքային մեխանիզմներ, մասնավորապես՝
 - ա. մինչև 2018 թվականի ավարտը ներդնել պարենի (Փուդրանկի) ծրագիրը՝ միջազգային կառույցների և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցությամբ,
 - բ. մինչև 2019 թվականի ավարտը սահմանել սոցիալական պաշտպանության ոլորտում պատվիրակման ենթակա ծրագրերի ընտրության չափորոշիչները և գնահատել արդյունքները.
- 5) 2017-2022 թվականների ընթացքում ապահովել կայուն գրադադարձության պետական ծրագրերում սոցիալապես անապահով ընտանիքների գործազուրկ անձանց ներգրավ-վածության առաջնահերթությունը:

2. Կարևորելով արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրացման համար պայմանների ապահովումը հատկապես աշխատող աղքատների թվի հետևողական նվազման տեսանկյունից՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) նախաձեռնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի արմատական փոփոխություններ՝ եվրոպական ժամանակակից միտումներին համահունչ, մասնավորապես՝

ա. 2017-2018 թվականների ընթացքում վերացնել աշխատավարձի հավելումների և աշխատողների հատուցումների կոշտ կարգավորումները՝ բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության և կողեւկտիվ բանակցությունների կայացմանը զուգընթաց,

բ. մինչև 2018 թվականի ավարտն ամրողականացնել կամավոր աշխատանքի կայացման ու զարգացման իրավական հիմքերը.

2) 2017-2022 թվականների ընթացքում շարունակել նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացումը՝ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված նպատակադրումներին համապատասխան.

3) 2018-2022 թվականների ընթացքում կատարելագործել պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգը՝ աշխատավարձների համամասնորեն աճի ապահովման նպատակադրմամբ.

4) կատարելագործել կայուն զբաղվածության ապահովմանն ուղղված պետական քաղաքականության շարունակականությունը, մասնավորապես՝

ա. 2018-2020 թվականների ընթացքում ներդնել ՀՀ սոցիալ-ժողովրդագրական վիճակի բարեկալմանը, արտագաղթի կանխարգելմանը, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը, հանրային կառավարման ոլորտում երիտասարդ և բանհմաց մասնագետների ներգրավմանը, գործատուների համար թափուր աշխատատեղերն արդյունավետ համալրելուն ուղղված նոր ծրագրեր,

բ. մինչև 2019 թվականի ավարտը ստեղծել աշխատաշուկայի ընթացիկ և հետանկարային կարգավորման թափանցիկության և արդյունավետության բարձրացման, զբաղվածության պետական ծառայությունների և ծրագրերի որակի, մատչելիության մեծացման նպատակով ամրողական կենտրոնացնելու կառավարման գործուն համակարգ:

3. Երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումների հիմքում դնելով «յուրաքանչյուր երեխա պետք է մեծանա ընտանիքում» սկզբունքը՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- 1) ՀՀ կառավարության ծրագրի իրականացման ժամանակահատվածում բացառել Հայաստանի Հանրապետությունում երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող պետական հաստատությունների ստեղծումը.
- 2) 2017-2018 թվականների ընթացքում վերակազմակերպել կամ փակել երեխաների շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատությունները, զարգացնել երեխայի լավագույն շահն ապահովելու նպատակով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգը, ընդ որում, հաստատությունների վերակազմակերպման ընթացքում երեխաներին այլ հաստատությունում տեղավորելը դիտվելու է որպես ծայրահեղ քայլ և ժամանակավոր միջոց.
- 3) մինչև 2018 թվականի ավարտը հստակեցնել որդեգրման ընթացակարգերը, բարձրացնել թափանցիկությունը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և սահմանել բոնության ենթարկված երեխայի պաշտպանությանն ուղղված ուղղորդման ընթացակարգը.
- 4) մինչև 2018 թվականի ավարտը բարեփոխել խնամատարության ընթացակարգը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքն ընտանեկան պայմաններում կազմակերպելու նպատակով.
- 5) 2018-2019 թվականների ընթացքում ներդնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց մատուցվող անհրաժեշտ ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչների և զոհերի նախնական նույնացման միասնական ցուցիչներ.
- 6) 2018-2021 թվականների ընթացքում սահմանել ընտանեկան բոնության ենթարկված անձանց տրամադրվող համալիր ծառայությունների չափանիշները և ընդլայնել այդ ծառայությունների ցանցը.
- 7) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող վերականգնողական ծառայությունների պատվիրակում համապատասխան ծառայություններ տրամադրող կազմակերպություններին.
- 8) 2019-2021 թվականների ընթացքում տարանջատել բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ հաստատություններում պալիատիվ խնամքը և վերապատրաստել մասնագետների.
- 9) 2020-2021 թվականների ընթացքում հզորացնել խնամակալության և հոգաբարձության ինստիտուտը՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն իր սոցիալական միջավայրում կազմակերպելու նպատակով.
- 10) մինչև 2022 թվականի ավարտը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ընդյանման նպատակով ինտեգրել ՀՀ սոցիալ-

տնտեսական զարգացման ծրագրերում սեռի հատկանիշով բաղադրիչը, ներդնել իրավիճակի գնահատման և մոնիթորինգի գործիքները:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ու մատչելի պայմանների բավարար մակարդակն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2020 թվականների ընթացքում համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին, այդ թվում մինչև 2017 թվականի ավարտը լրամշակել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և մինչև 2020 թվականի ավարտը նախատեսել ՀՀ օրենսդրությամբ սահմանված մատչելիության պայմանների ապահովման դրույթների խախտման համար վարչական պատասխանատվություն, ինչպես նաև նախատեսել վարչական պատասխանատվություն պահանջների (քաղաքաշինական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների, սպորտի և մշակութային միջոցառումների և այլն) մատչելի պայմանների ապահովման դրույթները չկատարելու համար.

2) նախատեսել քժշկատցիալական փորձաքննության համակարգի բարեփոխումներ, մասնավորապես՝

ա. 2017-2018 թվականների ընթացքում ձևավորել նոր համակարգ. մշակել և ներդնել քժշկատցիալական փորձաքննության գործընթացում փաստաթղթային եղանակով փորձաքննության մեխանիզմներ, հիվանդությունը հաշմանդամությունից տարանջատող չափորոշիչներ,

բ. 2017-2018 թվականների ընթացքում կիրառել անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության գործառույթների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված՝ հաշմանդամության սահմանման նոր մոդելը,

գ. 2018-2020 թվականների ընթացքում նոր մոդելի պահանջներին համապատասխան ներդնել անձի կարիքների գնահատման արդյունքում վերականգնողական հասցեական ծառայությունների տրամադրման մեխանիզմներ:

5. Ակտիվ և առողջ ծերացմանն ուղղված քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը սահմանել տարեցների խնամքի գործող պետական և ոչ պետական հաստատություններում ծառայությունների տեսականին ու որակը

բարելավելու նպատակով՝ ծառայությունների վճարովի և համագնարի սկզբունքով տրամադրման մեխանիզմները, ինչպես նաև իրականացնել խնամքի ծառայությունների պատվիրակում՝ մրցակցային սկզբունքով.

2) 2018-2019 թվականների ընթացքում մշակել տարեցներին մատուցվող ժամանակակից խնամքի այլընտրանքային ծառայությունների մոդելներ (ծրագրեր), փորձնական իրականացնել.

3) մինչև 2021 թվականի ավարտը ստեղծել ՀՀ մարզերում տարեցների սոցիալական պաշտպանության համայնքահեն այլընտրանքային ծառայություններ՝ տարեցների կարիքների գնահատման հիման վրա:

6. Կարևորելով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում նպատակային, արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգի առկայությունը՝ հիմնված «դրամի դիմաց առավելագույն արժեք» սկզբունքի վրա, ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը վերակազմակերպել դրամական վճարների նշանակման գործընթացները և քաղաքացիներին սպասարկելու գործառույթը տարանջատել որոշում ընդունելու գործառույթից (վարչարարությունից)՝ նպատակ ունենալով նվազեցնելու որոշումներ ընդունող անձնակազմի և շահառուների միջև շփումները.

2) 2017-2022 թվականների ընթացքում ամրողականացնել առցանց մատուցվող ծառայությունների շրջանակը՝ նպատակ ունենալով կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների բնագավառում շարունակաբար նվազեցնել առկա ոխսկերը, ապահովել ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը:

7. Ժողովրդագրական վիճակի բարեկալման նպատակով անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված արտագաղթի դադարեցմանը, ծնելիության բարձրացմանը, կյանքի տևողության երկարացմանը, մահացությունների մակարդակի կրճատմանը, ամուսնությունների թվի ավելացմանը, ինչպես նաև հայրենադարձության նախապայմանների ստեղծմանը, արտաքին միզրացիայի բացասական մնացորդի կրճատմանը և աղետներից զոհերի թվի էական նվազեցմանը՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարեկալման երկարաժամկետ ուղղմավարություն (մինչև 2040 թվական), 5-ամյա ժամանակահատվածի համար՝ համայիր ծրագիր, իրականացնել ծրագրով նախատեսված միջոցառումները՝ համապատասխան նախադրյալներ ստեղծելով երկարաժամկետ

հեռանկարում հանրապետության առկա բնակչության թվի էական աճի ապահովման համար.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի՝ ‘նախագիծ’ ամրողացնելով ծնունդների խրախուսումն ու բազմազավակ ընտանիքներին (4 և ավելի երեխա ունեցող) տրամադրվող սոցիալական երաշխիքները:

8. Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունների սահմանման և շահառուների գնահատված կարիքներին համապատասխան ծառայությունների տրամադրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բոլոր ծրագերի և մատուցվող ծառայությունների ՄԳ իրականացման համար գործիքակազմ.

2) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել «Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ» միանական տեղեկատվական համակարգ.

3) 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման և ազդեցության, սոցիալական պաշտպանության ոլորտում արտաքյուջետային միջոցներով իրականացվող ծրագրերի ՄԳ կիրարկում:

4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգը պետք է լինի որակյալ, արդյունավետ, հասանելի և թափանցիկ: Առողջ ապրելակերպը պետք է դառնա մեր կյանքի անբաժանելի մասնիկը թե՛ առօրյա կյանքի նորմ դառնալու, թե՛ հիվանդությունների մշտադիտարկման և վաղաժամկետ կանխարգելման առումով:

Դետական առողջապահական ծախսերի նպատակայնության բարձրացման, հատկացվող ֆինանսավական միջոցների վերահսկման և որակի կառավարման գործուն մեխանիզմների շնորհիվ ՀՀ քաղաքացին ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար սահմանված ծառայությունների համար և ստանալ ցածրորակ ծառայություններ:

Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ, պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Պետության կողմից երաշխավորված բժշկական ծառայությունների բարձր որակի ապահովման, էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման, առողջապահական ծառայությունների շուկայական և մրցակցային գնագոյացման մեխանիզմների շնորհիվ ստեղծել հիմքեր պարտադիր բժշկական ապահովագրության համակարգին աստիճանաբար անցնելու համար:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Առողջ ապրելակերպի և հանրային առողջապահության ոլորտում երկարաժամկետ կանխարգելիչ լուծումներ ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկման արդյունավետ կառավարում, մասնավորապես՝

ա. մինչև 2017 թվականի ավարտն ավելացնել համակարգի էլեկտրոնային կառավարման հզորությունները՝ դասընթացների իրականացման և լրացուցիչ կայանների ներդրման ճանապարհով, ինչպես նաև մինչև 2018 թվականի ավարտը ներդնել կենսաանվտանգության կառավարման կենտրոնացված համակարգը,

բ. զարգացնել լարորատոր համակարգը, մասնավորապես, մինչև 2017 թվականի ավարտը ներդնել լարորատորիաներում փաստաթղթերի և սարքերի կառավարման արդիական համակարգը.

2) ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) և ՈՎՀ-ի ռիսկի գործուների արդյունավետ կառավարման (կանխարգելման, վաղ հայտնաբերման և վերահսկման) միջոցով՝

ա. նվազեցնել ծխախոտի և այլ վնասակար նյութերի օգտագործումը, մասնավորապես, մինչև 2017 թվականի ավարտը մշակել ՀՀ օրենքներում փոփոխությունների կատարումը, որում հստակ կամրագրվեն ծխախոտի օգտագործման վայրերի և զովագոյի սահմանափակումները: 2018 թվականին սահմանել ծխելու դեմ պայքարին նպաստող ենթաօրենսադրական նորմերը,

բ. ապահովել ՈՎՀ-ի թիրախավորված վաղ հայտնաբերումը, 2017-2018 թվականներին ամփոփել ընթացիկ սքրինինգային ծրագրերը, իսկ 2018-2021 թվականներին ներդնել թոքերի քրոնիկ օրատրուկտիվ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը,

գ. զարգացնել իմունականիսարգելման գործընթացը, մասնավորապես, մինչև 2017 թվականի ավարտը հաստատել մարդու պապիլոմավիրուսի դեմ պատվաստումների ներդրման պլանը:

2. Առողջապահական ոլորտում հատկացվող բյուջետային միջոցների և ստացված արդյունքների անհամաշափությունը վերացնելու ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է բյուջետային միջոցների՝ բուժհաստատությունների միջև փաստացի բաշխումից աստիճանաբար անցում կատարել առողջապահական ծառայությունների մրցակցային շուկայական գնման մոդելի: Առողջապահության ֆինանսավորման և ֆինանսական վերահսկողության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է պետական բյուջետային միջոցների բաշխման նպատակային, արդյունավետ և թափանցիկ մեխանիզմների ապահովում, ինչպես նաև առողջապահության ոլորտում առկա միջոցների կենտրոնացված բաշխման տեսակարար կշռի աստիճանական ավելացում: ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017 թվականին հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման, սոցիալական արդարության և իրատեսական բուժօգնության ծավալների տրամադրման սկզբունքների հիման վրա ամրողական վերանայված փաթեթը և այն գործարկել 2018 թվականի սկզբից.

2) Ներդնել պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նպատակով բժշկական ծառայությունների գնման գործընթացում դեպքերի անհատական վարման (case management) ինստիտուտ, մեծացնել պետական առողջապահական գործակալության (ՊԱԳ) գործառույթներում բժիշկ-փորձագետների ինստիտուտի դերը և ներգրավել ապահովագրական կազմակերպությունների կարողությունները: Մասնավորապես, 2017 թվականի վերջում այդ տրամաբանությամբ կներդրվեն պետական ծառայողների հիվանդանոցային բժշկական օգնության փաթեթները, իսկ արդյունքների ամփոփումից ենելով՝ 2018 թվականին անապահով խավի հիվանդանոցային բժշկական օգնության փաթեթները.

3) Մինչև 2017 թվականի ավարտը վերանայել պետական պատվեր իրականացնող բժշկական հաստատությունների ընտրության չափանիշները՝ նպատակ ունենալով բարձրացնելու ընտրության գործընթացի թափանցիկությունը,

4) ապահովել ֆինանսական վերահսկողություն և թափանցիկություն բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպություններում, այդ թվում առավել բարձր հաշվետվողականության մակարդակ՝ պետպատվեր իրականացնող բոլոր բժշկական հաստատություններում: Մասնավորապես, 2018 թվականից ներդնել պետական պատվեր իրականացնող հիմնարկների նկատմամբ եռամյա գործարար ծրագիրը ներկայացնելու պարտադիր պահանջ, 2018 թվականին մեկնարկել ֆինանսական հաշվետվողականության

ֆՀՄՍ (IFRS) համակարգի ներդրումն առողջապահական կազմակերպություններում, 2018 թվականից ներդնել պետական բժշկական հաստատություններում պարտադիր տարեկան արտաքին առողջական անցկացման պահանջ, 2018 թվականի ընթացքում համակարգի թափանցիկությունն ապահովելու նպատակով ներդնել միասնական հարթակում առողջապահական կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակման պահանջ.

5) մինչև 2019 թվականի ավարտը մշակել և ներդնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման մեթոդաբանություն՝ հիմնված բժշկատնտեսագիտական ստանդարտների և շուկայական առողջ մրցակցության վրա.

6) մինչև 2018 թվականի ավարտը երկու փուլով ներդնել պետական պատվերի միջոցների հաշվին ձեռք բերվող դեղերի, քիմիական նյութերի, բժշկական սարքերի և պարագաների գնման գործընթացների կենտրոնացված համակարգ.

7) մշակել ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ (համաձայնությամբ) Հայաստանում առողջության պարտադիր ապահովագրության հայեցակարգ:

3. Բնակչության բուժման ելքերի բարեկավման և բուժսպասարկման գործընթացների որակի բարձրացման, վերահսկողության և թափանցիկության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) շարունակաբար զարգացնել բուժաշխատողների մասնագիտական հմտությունները և կարողությունները, այդ թվում՝

ա. առողջապահական մարդկային ներուժի որակի կառավարում շարունակական մասնագիտական զարգացման (CPD) և շարունակական մասնագիտական կրթության (CME) կրեդիտավորմանը վերաբերող միջազգայնորեն ընդունված ուղեցույցներին համահունչ սահմանել շարունակական մասնագիտական զարգացման և կրթության շրջանակներում կրեդիտավորմանը ներկայացվող պահանջները մինչև 2017 թվականի ավարտը,

բ. 2017-2021 թվականների ընթացքում իրականացնել հավաստագրման գործընթացի աստիճանական ներդնում, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտը ներդնել ՀՀ-ում հավաստագրման նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների գիտելիքները գնահատող համակարգ (թեստավորման համակարգ),

գ. մշակել և հաստատել ՀՀ-ում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության կարգը մինչև 2017 թվականի ավարտը,

դ. մշակել մարզային բժշկական հաստատությունները նեղ մասնագետներով ապահովելուն ուղղված հայեցակարգի մինչև 2017թվականի ավարտը,

ե. մշակել ՀՀ-ում գործող բժշկական ասոցիացիաների ֆունկցիոնալ բարեփոխումների հայեցակարգը մինչև 2018 թվականի ավարտը,

զ. մինչև 2020 թվականի ավարտն ամփոփել մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացման ծրագիրը.

2) համալիր միջոցառումների իրականացման արդյունքում բարձրացնել բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակը, այդ թվում՝

ա. շարունակականորեն ներդնել կլինիկական ուղեցույցերի և պացիենտի վարման գործելակարգերը: Մասնավորապես, թարգմանել, տեղայնացնել և ներդնել 2017-2021 թվականների ընթացքում 600 ուղեցույց, 350 գործելակարգ և 600 ընթացակարգ,

բ. մշակել և ներդնել առողջապահական ծառայությունների, բժշկական հաստատությունների և մարդկային ներուժի տեղաբաշխման ժամանակակից նորմատիվային բազա, մասնավորապես, հաստատել ԱԱՊ-ի օղակի գործունեության, հիվանդանոցային և ախտորոշիչ ծառայությունների կազմակերպման և մարդկային ներուժի նորմատիվային բազան մինչև 2018 թվականի ավարտը,

գ. ներդնել և զարգացնել բժշկական օգնության մշտադիտարկման, որակի կառավարման համակարգերի, այդ թվում՝ ներդնել ԱԱՊ-ի և հիվանդանոցային ծառայությունների որակական ցուցանիշները, ազգային մակարդակում ծառայությունների գնահատման որակական և քանակական ցուցանիշները 2018-2020 թվականների ընթացքում.

3) կանոնակարգել պայքարը կեղծ դեղերի և բժշկական նշանակության արտադրանքների շրջանառության դեմ, այդ թվում՝

ա. ներդնել բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի պահանջները մինչև 2017 թվականի ավարտը,

բ. 2017-2019 թվականների ընթացքում հաստատել բժշկական նշանակության սարքերին, սարքավորումներին և պարագաներին ներկայացվող պահանջների մասին իրավական ակտերը.

4) ապահովել պացիենտ-բուժհաստատություն իրավահարաբերություններում ծագող վեճերի արագ, էժան և արդյունավետ լուծման նոր մեխանիզմ ստեղծվելիք նոր արտադրատական մարմնի, այն է՝ բժշկական հաշտարարի ինստիտուտի կողմից կայացված որոշումների միջոցով, այդ թվում՝

ա. հաստատել «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգը մինչև 2017 թվականի ավարտը,

բ. 2018-2019 թվականների ընթացքում մշակել «Բժշկական համակարգի հաշտարարի գործունեության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող այլ իրավական ակտերը և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:

4. Համընդհանուր մատչելիության սկզբունքի վրա բնակչության բժշկական ծառայությունների ֆիզիկական հասանելիության մեծացման, ՀՀ տարածքում առողջապահական ենթակառուցվածքների և մասնագիտական ներուժի համաշափ բաշխման, ամրող հանրապետությունում որակյալ ծառայությունների մատուցման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է ՀՀ-ում բժշկական հաստատությունների, մահճականների և բուժանձնակազմի օպտիմալ քանակների սահմանում, այդ թվում՝

1) մինչև 2017 թվականի ավարտն օպտիմալացնել ՀՀ առողջապահության նախարարության կենտրոնական ապարատը և ենթակա կազմակերպությունները.

2) 2017 թվականի երկրորդ կիսամյակում հաստատել ՀՀ-ում հոգեբուժական ծառայություն մատուցող հաստատությունների օպտիմալացման պլանը և մինչև 2018 թվականի ավարտն օպտիմալացման աշխատանքները.

3) մինչև 2018 թվականի ավարտը հաստատել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածքը (master plan).

4) մինչև 2018 թվականի ավարտը մշակել բուժօգնության առաջնային օդակի բարեփոխումների հայեցակարգ՝ նպատակ ունենալով տնտեսել առավել թանկ հիվանդանոցային օդակին դիմելիության ուշացած դեպքերի հետ կապված պետական միջոցները.

5) 2017 թվականից մինչև 2019 թվականն իրականացնել բժշկական կենտրոնների կոնցեսիոն կառավարման հանձնման և (կամ) մասնավորեցման փուլային աշխատանքներ.

6) շարունակել մարզային հիվանդանոցային համակարգի արդիականացման ծրագիր՝ ՀՀ Վայոց ձորի մարզի ընդգրկմամբ:

5. Առողջապահական համակարգում որակի կառավարման, լիարժեք հաշվառման, մարդկային ներուժի համապարփակ և համալիր զարգացման, առողջապահական ծառայությունների նպատակայնության, հետագծելիության ապահովման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման իրազործումը հնարավոր է միայն ոլորտում միասնական էլեկտրոնային համակարգի (E-HEALTH) լիարժեք կիրառմամբ, որի գործարկումը նախատեսվում է 2017 թվականից, իսկ ամրող առողջապահական համակարգի կողմից

ավելի ակտիվ և գնալով ավելի մեծ թվով ենթահամակարգերի փուլային ներդրումը՝ 5 տարիների ընթացքում: ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ձևավորել համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի փաթեթը.

2) մինչև 2017 թվականի ավարտը մեկնարկել ՀՀ-ում լիցենզավորված բժշկական հաստատությունների, դեղատների և ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների գրանցումներն Էլեկտրոնային առողջապահական համակարգում: Համակարգի լիարժեք ներդրումը նախատեսվում է ավարտել առաջիկա երեք տարիների ընթացքում.

3) 2018-2022 թվականների ընթացքում ստեղծել և ներդնել քաղաքացիների կողմից առցանց հերթագրման, հեռարժշկության, հաճախորդների կողմից բժիշկների գնահատման, բողոք-պահանջների գրանցման և քննության, դեղերի պահեստի, բժշկական ուղեցույցների և անալիտիկ տվյալների կառավարման, լարորատոր հետազոտությունների և բժշկական ուղղողոգիական նկարների միասնական ծրագրային փաթեթները:

6. Առողջապահական համակարգի կողմից նոր ծառայությունների մատուցումը, համակարգի կարողությունների զարգացումը, բժշկական ծառայությունների արտահանումը (բժշկական տուրիզմ), ծառայությունների որակի բարձրացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է ՀՀ-ում նեղ մասնագիտական ծառայությունների խմբերի (clusters) և որակական զարգացման ազգային ծրագրերի ներդրում և խրախուսում, այդ թվում՝

1) հաստատել նեղ մասնագիտական խմբերի (clusters) բժշկական ծառայությունների զարգացման հայեցակարգ, մասնավորապես՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը գործնականում իրագործել պալիատիվ բժշկական օգնության ծառայությունների ուղղմանավորությունը,

բ. 2018-2021 թվականներին ներդնել սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, վահանաձև գեղձի և չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծառայությունների զարգացման հայեցակարգերը,

գ. զարգացնել բժշկական տուրիզմը, որը հիմնականում կիրականացվի նեղ մասնագիտական ծառայությունների բույլեր մատուցող կազմակերպությունների շտեմարանի ստեղծման և տարբեր շուկաներում դրա իրազեկման ապահովման միջոցով, մասնավորապես, 2018-2019 թվականներին որակյալ պլաստիկ վիրաբուժության, ստոմատոլոգիական, վերականգնողական և համալիր բժշկական զննման (check-up)

ծառայություններ մատուցող կազմակերպությունների շտեմարանի ստեղծում և հանրային իրազեկման ապահովում:

7. Մինչև 2019 թվականի ավարտը մշակել և ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնել «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությունը, բարեկավումը, վերականգնումը և ողջամիտ օգտագործումը ոչ միայն կարևոր նախապայման է մարդու և բնության ներդաշնակ գոյակցության համար, այլև երաշխիք է երկրի կայուն զարգացման սահմանադրական նորմի կիրառման համար:

ՀՀ կառավարությունն առաջիկա 5 տարիների ընթացքում առաջնորդվելով կայուն զարգացման սկզբունքով՝ կվիրատի այնպիսի գործողություններ, որոնք կրացանեն բնական ռեսուրսների գերշահագործումը, նվազագույնի կիասցվեն շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու լյանքի և առողջության վրա բացասական ազդեցությունները, կապահովեն շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը կամ նվազեցումը, բնական ռեսուրսների համալիր կառավարումը և դրանց նկատմամբ վերահսկողությունը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Բնապահպանության ոլորտի կառավարման համակարգի շարունակական կատարելագործման և բարեկավման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսվում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ձևավորել բնապահպանական նոր քաղաքականության օրենսդրական հենքը.

2) մինչև 2017 թվականի ավարտն ընդունել շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը.

3) մինչև 2017 թվականի ավարտը կայացնել շրջակա միջավայրի վերահսկողության համակարգը՝ հետևանքներին արձագանքումից անցնելով իրավախախտումների կանխարգելման.

4) 2017-2018 թվականների ընթացքում ներդնել շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միասնական կառավարման համակարգ՝ ՀՀ բնապահպանության նախարարության գործառույթների ամրողականացմամբ.

5) 2018 թվականի ընթացքում վերանայել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության օրենսդրությունը՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված չափորոշիչները:

2. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ընդունել Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարություն.

2) 2017-2018 թվականների ընթացքում ստեղծել հաշվետվությունների էկոլոգոնային ներկայացման միասնական համակարգ.

3) մինչև 2018 թվականի ավարտը ներդնել բնապահպանության բնագավառում թույլտվությունների (լիցենզիաների) միասնական և էկոլոգոնային տրամադրման համակարգ.

4) 2018-2020 թվականների ընթացքում կատարելագործել բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների, ինչպես նաև բնապահպանության ոլորտում պատասխանատվության և վնասի փոխհատուցման համակարգը.

5) 2018-2022 թվականների ընթացքում կատարելագործել Հայաստանի Հանրապետության կողմից ոլորտի միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող օրենսդրական հենքը, ինչպես նաև նախաձեռնել մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրերի արձանագրությունների վավերացման գործընթացը.

6) մինչև 2019 թվականի ավարտը ձևավորել բնապահպանական միասնական պետական մոնիթորինգի և տեղեկատվական համակարգ (ազգային պորտալի ստեղծում և տեղեկատվական թեմատիկ բազաների ու բնական միջավայրի բաղադրիչների կադաստրների կատարելագործում):

3. Զրային ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017 թվականին ընդունել փոքր ՀԵԿ-երի կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչները.

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրական փոփխությունների փաթեթ.

3) 2017-2018 թվականների ընթացքում իրականացնել Արարատյան դաշտի գյուղատնտեսական և ձկնաբուծական ջրօգտագործողների մոտ ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական համակարգերի տեղադրման աշխատանքներ,

4) մինչև 2021 թվականի ավարտն իրականացնել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման և ջրախնայողական օգտագործման միջոցառումներ.

5) մինչև 2021 թվականի ավարտն ընդունել Սևանի, Հրազդանի և Հյուսիսային ջրավագանային տարածքների կառավարման պլանները և վերանայել Ախուրյանի, Հարավային և Արարատյան ջրավագանային կառավարման պլանները:

4. Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել օրենսդրական կարգավորումներին համահունչ Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության շարունակական վերականգնում և պահպանություն, ինչպես նաև ափամաքրման աշխատանքների կազմակերպման նոր մեխանիզմներ.

2) մինչև 2019 թվականի ավարտն ընդունել «Սևան» ազգային պարկի գարգացման հայեցակարգը և կառավարման պլանը:

5. Մթնոլորտային օդի պահպանության նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը մշակել մթնոլորտային օդի պահպանության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր.

2) 2018 թվականի ընթացքում ընդունել Կյիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիր (National Adaptation Programme - NAP):

6. Հողերի ու ընդերքի պահպանության նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը կատարելագործել ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի մոնիթորինգի և հաշվետվողականության օրենսդրությունը՝ ներդնելով ընթացիկ մոնիթորինգի համակարգ.

2) ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (ոեկոլոգիակացիոն ֆոնդ) հատկացված գումարների հասցեական օգտագործման և խախտված հողերի վերականգնման նպատակով՝ մինչև 2017 թվականի ավարտն ընդունել ոեկոլոգիակացիոն ֆոնդի կառավարման հայեցակարգ.

3) 2018-2020 թվականների ընթացքում ներդնել հայեցակարգի դրույժների կիրարկումն ապահովող մեխանիզմներ:

7. Կենսաբազմազանության պահպանության նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել Երևան քաղաքում բուսաբանական այգու հիմքի վրա կենսաբազմազանության պահպանման և բնապահպանական կրթության ազգային կենտրոնի նախագծումը և 2018-2022 թվականների ընթացքում Երևան քաղաքում ստեղծել բուսաբանական այգու հիմքի վրա կենսաբազմազանության պահպանման և բնապահպանական կրթության ազգային կենտրոն.

2) մինչև 2018 թվականի ավարտն ընդունել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ անտառների ապօրինի հատումների կանխման համակարգի ներդրման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը.

3) 2018-2022 թվականների ընթացքում ընդունել բնության հատուկ պահպանվող բոլոր տարածքների կառավարման պլանները.

4) կենսաբազմազանության և էկոսուրբիզմի առկա պոտենցիալի արդյունավետ օգտագործման նպատակով իրականացնել ՀՀ տարածքում կենսաբազմազանության բիզնես ներուժի գնահատման և անձնագրավորման (մինչև 2018 թվականի ավարտը) և մինչև 2020 թվականն էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքները.

5) մինչև 2022 թվականի ավարտը «Պետություն - մասնավոր հատված» համագործակցության շրջանակներում ստեղծել «Ձերմուկ» ազգային պարկը:

8. Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտի մասով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ոլորտի իրավական ակտերի նախագծեր.

2) 2017-2022 թվականների ընթացքում ներդնել նոր տնտեսական մեխանիզմ, որն ուղղված կլինի սպառման թափոնների թաղման կրճատմանը և դրանց տնտեսական շրջանառության մեջ ներգրավմանը (արտադրողի ընդլայնված պատասխանատվություն).

3) 2018-2019 թվականների ընթացքում ձևավորել քիմիական նյութերի գործածությունը կարգավորող օրենսդրական հենքը, որը կկարգավորի քիմիական նյութերի անվտանգ գործածության, արտադրվող և ներկրվող քիմիական նյութերի պետական գրանցման, անձնագրավորման և նախազգուշական մակնշման հետ կապված հարցերը.

4) 2019-2022 թվականների ընթացքում իրականացնել Նուրարաշենի ժամկետանց պեստիցիդների գերեզմանցի պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով աղտոտված տարածքների վսասագերծում՝ միջազգային պարտավորություններին համահուն:

9. Շրջակա միջավայրի պահպանության նորարարական տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ներդրման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման հայեցակարգը.

2) մինչև 2018 թվականի ավարտն ուսումնավիճել և բանակցել միջազգային կառույցների հետ՝ «Բնապահպանական միջոցառումներ՝ երկրի արտաքին պարտքի դիմաց» ֆինանսավորման մեխանիզմի ներդրման ուղղությամբ.

3) 2018-2022 թվականների ընթացքում իրագործել անհրաժեշտ քայլեր՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով նախատեսված տեխնիկական և ֆինանսական օժանդակության բոլոր խողովակներն ու մեխանիզմները, այդ թվում՝ 2017 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև Կանաչ կլիմայի հիմնադրամի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին» համաձայնագրի ստորագրում.

4) 2019-2022 թվականների ընթացքում ստեղծել և գործադրել «Պետություն-մասնավոր հատված» համագործակցության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ, բնապահպանական, այդ թվում՝ համայնքային հիմնադրամների, ապահովագրական, ինչպես նաև քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ:

4.5. ՄՇԱԿՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու հոգևոր և ազգային ավանդույթների վրա խարսխված մշակութային միջավայրի ձևավորմանը, մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծմանը և ծառայությունների մատուցմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը և ժամանակակից մշակութային զարգացումներին հանրության լիիրավ մասնակցությանը, անհատի ստեղծագործական կարողությունների խթանմանը, ազգային ինքնության և քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված հասարակության ձևավորմանը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելով՝

1. Մշակույթի ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը ներկայացնել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

3) մինչև 2020 թվականի ավարտն ընդունել պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահոչակման 2016-2020 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրից բխող իրավական ակտերը, այդ թվում՝

ա. մինչև 2018 թվականի ավարտը մշակել «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների հավաստագրման կարգը, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում մասնագիտական գործունեության տեսակների ցանկը և պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների հավաստագրի ձևը հաստատելու մասին» իրավական ակտի նախագիծ,

բ. մինչև 2018 թվականի ավարտը մշակել «Հուշարձանների պետական ցուցակում նորահայտ օբյեկտ ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները հաստատելու մասին» իրավական ակտի նախագիծ,

գ. մինչև 2020 թվականի ավարտը ստեղծել 6 պատմամշակութային արգելոց-թանգարան, որոնց ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձանների համալիրների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի և հանրահոչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

2. Մշակույթային արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցման գործընթաց-ներում տնտեսական աճի խթանման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում ներդնել միասնական էլեկտրոնային տոմսային համակարգ.

2) 2017-2022 թվականների ընթացքում ընդլայնել գրավաճառ ցանցը՝ գրախանութեների և գրավաճառ կետերի ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովմամբ, այդ թվում նաև՝ մինչև 2017 թվականի ավարտը Կ. Ստանիլավսկու անվան պետական ոուսական դրամատիկական թատրոնի տարածքում աջակցել նոր գրախանութի ստեղծմանը, մեկնարկել նաև շարժական գրախանութերի՝ «գրաբուների» գործարկումը մարզերում.

3) մինչև 2020 թվականի ավարտը մշակել յուրաքանաչյուր թանգարանի ուղղվածությանը համապատասխան հուշանվերային նոր արտադրանքներ և դրանց իրացման արդյունավետ մեխանիզմներ.

4) 2017-2020 թվականների ընթացքում մշակել պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պահպանական գոտիներում, ինչպես նաև դրանց հարակից տարածքներում ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացման ուղղված ներդրումային քաղաքականության ակտիվացման, կառավարման նոր մոդելների ներդրման ծրագրեր:

3. Մշակութային ժառանգության ոլորտում տեղեկատվական հասանելիության նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2021 թվականի ավարտն առնվազն 300 հուշարձանային համալիրում մշակել և տեղադրել միասնական նմուշի (եռալեզու) տեղեկատվական վահանակցուցանակներ (QR կոդեր).

2) մինչև 2021 թվականի ավարտն ապահովել մշակութային ժառանգության մատչելիությունը՝ դրանց թվայնացման միջոցով, այդ թվում՝ Հայաստանի ազգային գրադարանում առկա 1512-1960 թվականների անձեռնմխելի հավաքածուն, կինոժառանգությունը, երաժշտական ստեղծագործությունների նոտաները:

4. Հայաստանում կինոարտադրության զարգացմանն ուղղված կառավարման ժամանակակից մոդելի ներդրման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտն ստեղծել «Ֆիլմ հանձնակատարի» ինստիտուտը.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել կինոարտադրության ոլորտի կառավարման ժամանակակից մոդելի ներդրման իրավական հիմքերը.

3) մինչև 2018 թվականի ավարտը պատրաստել պետություն-մասնավոր համագործակցությամբ տարածաշրջանային կինոդպրոցի ստեղծման ծրագիրը:

5. Գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության ոլորտում երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2019 թվականի ավարտն ընդլայնել նպատակային և ստեղծագործական ծրագրերի ուղղությունները, շրջանակները և ընդգրկված մասնակիցների թիվը.

2) իրականացնել մանուկների և պատանիների համար գիտաճանաչողական ծրագրեր՝

ա. 2018-2022 թվականներին երեխաների համար կմշակվեն և կիրատարակվեն երաժշտական, արվեստի և կերպարվեստի հայալեզու առարկայական դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ և տեսություններ,

բ. հանրակրթության և արտադպրոցական (լրացուցիչ) կրթության համակարգում տեսական գիտելիքների մատուցումը կիամատեղվի ժամանակակից մեթոդներով մատուցվող գործնական ու առարկայական մշակութային գիտելիքների հետ: Մինչև 2017 թվականի ավարտը կստեղծվի «Մշակութային կազմակերպություն-դպրոց» արոնեմենտային ծրագիրը:

6. Մարզերում մշակութային ծառայությունների համաշափության, մատչելիության և հասանելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2018 թվականից գործարկել մարզերում նոր ձևավորված մշակութային միավորումների և անհատների ստեղծագործական ծրագրերին աջակցության ծրագիրը.

2) 2018-2022 թվականների ընթացքում շարունակել «Մշակութային կանգան» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում յուրաքանչյուր տարի շուրջ 400 բազմաթիվ (թատերահամերգային միջոցառումներ, կինոցուցադրություններ, ցուցահանդեսներ) միջոցառումներ կիրականացվեն: 2018 թվականից սկսած նախատեսվում է ընդլայնել ծրագիրը շարժական կինոթատրոնների ներդրմամբ, որի արդյունքում Հայաստանի և Արցախի տարբեր համայնքներում տարեկան մինչև 200 կինոցուցադրություն կկազմակերպվի.

3) 2018 թվականին ՀՀ մարզերում մեկնարկել համայնքային կինոթատրոնների հանրապետական կինոցանցի ստեղծման ծրագիրը:

7. Օտարերկրյա պետություններում հայկական մշակույթի հանրահոչակման և համաշխարհային մշակույթը ներկայացներու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) ներկայացնել հայ մշակույթն օտարերկրյա պետություններում՝

ա. կազմակերպել քաղաքակրթական ցուցահանդեսներ աշխարհի (այդ թվում՝ Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի) հեղինակավոր թանգարաններում և առաջատար ցուցարահներում,

բ. մասնակցել հեղինակավոր միջազգային փառատոններին, ցուցահանդես-տոնավաճառներին և մրցույթներին, մասնավորապես, արվեստի, ճարտարապետության, կինոյի և գրականության ոլորտներում,

գ. փոխադարձության սկզբունքով «մշակույթի օրերի» կամ այլ ձևաչափով հայկական մշակույթը ներկայացնել օտարերկրյա պետություններում՝ յուրաքանչյուր տարի առնվազն 5 երկրում.

2) ներկայացնել օտարերկրյա պետությունների մշակույթը Հայաստանում՝

ա. «Մշակույթի օրերի» կամ այլ ձևաչափով տարբեր երկրների մշակույթը ներկայացնել Հայաստանում՝ յուրաքանչյուր տարի առնվազն 5 երկրի,

բ. անցկացնել միջազգային բնույթի լայնամասշտաբ միջոցառումներ Հայաստանում, այդ թվում՝ ժամանակակից արվեստի, կինոյի, թատերարվեստի և երաժշտարվեստի միջազգային փառատոններ, հեղինակավոր գործիչների համերգներ.

3) համագործակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում, մասնավորապես, մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական, համաշխարհային ժառանգության ցուցակների, հոչակավոր մարդկանց և իրադարձությունների օրացույցի համալրման և ուժեղացված պաշտպանության կարգավիճակ ստանալու նպատակով պատրաստել հայտեր, մասնավորապես, օժանդակել օտարերկրյա պետություններում հայ գրականության, թարգմանությունների հրատարակմանը:

8. Հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի և սոցիալական մեժիայի ռեսուրսներում մշակութային բաղադրիչի ընդլայնման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2018 թվականից սկսած մեկնարկել պատմամշակութային ժառանգությունը, ժամանակակից արվեստը ներկայացնող, կրթական, դաստիարակչական ուղղվածություն ունեցող գիտահանրամատչելի և ճանաչողական հեռուստահաղորդումների ստեղծման աշխատանքները.

2) 2017-2022 թվականների ընթացքում հայերենի գործածության խթանմանը և տարածմանը նպաստելու համար հետևողականորեն աշխատանք տանել՝ համացանցում հայերենի ներկայացվածության մեծացման ուղղությամբ.

3) 2018-2022 թվականների ընթացքում հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով և սոցիալական մեղիայով հոչակել մշակութային կյանքի, արդի ստեղծագործողների գործունեությունը, լուսաբանել մշակութային անցուղարձը:

4) մինչև 2021 թվականի ավարտն ապահովել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներգրավվածությունը մշակութային նախագծերի մշակման և իրականացման գործում:

9. Մինչև 2021 թվականի ավարտը **ՀՀ կառավարությունը նախատեսում է ավարտել հայկական մշակութային ստեղծագործական ներուժի գույքագրումը, տեղորոշումը և հաշվառումը, միասնական տեղեկատվական շտեմարանի (պորտալի) ստեղծումը:**

4.6. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Ապագայի նկատմամբ վստահություն ունեցող երիտասարդներն են ստեղծելու ամուր և առողջ ընտանիք, անվտանգ և առաջ ընթացող երկիր: **ՀՀ կառավարությունը նախատեսում է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ հասարակության ամենամեծ ներուժ ունեցողները՝ մեր երիտասարդները, կարողանան լիարժեք ինքնադրսուրվել, լինեն երջանիկ և իրենց քայլերում միշտ լինեն իրենց խղճին համահունչ: Այդ իսկ պատճառով կրթական միջոցառումների միջոցով պետք է ապահովել մեր երիտասարդ սերնդի հայկական ավանդականությունը և միաժամանակ «զլորալ քաղաքացի» լինելու կարողությունը: Պետք է հետևողականորեն իրականացնել նաև երիտասարդության զբաղվածության ապահովման միջոցառումներ և սոցիալապես անապահով երիտասարդ ընտանիքների համար հատուկ աջակցության ծրագրեր:**

Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական նպատակը երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության աստիճանը բարձրացնելն է, երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների միջմարդկային և միջհամայնքային հորիզոնական համագործակցության զարգացմանն նպաստելն է:

ՀՀ կառավարությունը հետևողականորեն իրականացնելու է սպորտի մասայականացմանն ուղղված միջոցառումներ և գործողություններ: Ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացումն ապահովելու նպատակով նախատեսվում է հնարավորինս կիրառել ֆինանսավորման նոր մոդել, որի հիմքում դրվելու է պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության սկզբունքը:

ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների գործունեությունը հիմնականում միտված է լինելու՝

1. Բնակչության ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, բնակչության բոլոր տարիքային խմբերի համար առողջ ապրելակերպի արմատավորման գործում նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի տարածում, մասնավորապես՝

ա. 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ֆիզկուլտուրային-առողջարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումներ, ստեղծել առողջ ապրելակերպի արմատավորման համար նպաստավոր պայմաններ,

բ. մինչև 2017 թվականի ավարտն աջակցել հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, 2018-2022 թվականների ընթացքում բարձրացնել դեռահասների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը,

գ. մինչև 2017 թվականի ավարտը մշակել հանրակրթական դպրոցների մարզադահլիճների կառավարումը մասնավորին տրամադրելու մեխանիզմները: 2018-2022 թվականների ընթացքում ըստ անհրաժեշտության հանրակրթական դպրոցների մարզադահլիճները տրամադրել մասնավորներին՝ վերանորոգելու և գույքով համալրելու նպատակով՝ կնքելով համապատասխան պայմանագիր՝ մարզադահլիճն ըստ նշանակության (նպատակային) օգտագործելու և հանրակրթական դպրոցի դասարանների ֆիզկուլտուրայի դասաժամերին տրամադրելու համար,

դ. մինչև 2017 թվականի ավարտը մշակել ազգային ծրագիր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման տարածման վերաբերյալ, 2018-2019 թվականներին փորձարկել և ներդնել ծրագիրը,

ե. բակային սպորտի զարգացման հայեցակարգը մշակել մինչև 2017 թվականի ավարտը, իսկ հայեցակարգից բխող 2018-2022 թվականների միջոցառումները՝ մինչև 2018 թվականի ավարտը.

2) մինչև 2017 թվականի ավարտը մշակել Հայաստանի Հանրապետությունում սպորտային տուրիզմի զարգացման հնարավորությունների ստեղծման և կատարելագործման վերաբերյալ հայեցակարգ, իսկ հայեցակարգից բխող միջոցառումները՝ մինչև 2018 թվականի ավարտը.

3) մինչև 2018 թվականի ավարտը մշակել Հայաստանի Հանրապետության ամրող տարածքում հաշմանդամություն ոնեցող անձանց ֆիզիկական կուլտուրայով և սպորտով

զբաղվելու համար հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման, հաշմանդամային տարբեր մարզաձևների զարգացման, մարզական-առողջարարական և մարզական մասսայական աշխատանքների արդյունավետ կառավարման համակարգի ստեղծմանն ու ապահովմանն ուղղված գործիքակազմ:

2.Մանկապատանեկան սպորտի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում հատկացնել Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և դեկավար անձնակազմին ներկայացվող աշխատանքային պահանջները և մշակել վերապատրաստման կազմակերպման արդյունավետ մեխանիզմ.

2) 2017-2022 թվականների ընթացքում մարզակառույցները, մանկապատանեկան մարզադպրոցների մարզադահիճները վերանորոգել, հիմնանորոգել և նորերը կառուցել՝ ըստ փուլերի.

3) 2018-2022 թվականների ընթացքում շարունակականորեն իրականացնել «ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևների ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագիրը և մշակել Հայաստանի Հանրապետությունում գործող մանկապատանեկան մարզադպրոցների համար տարեկան առնվազն 6 միասնական ուսումնական ծրագիր՝ ըստ մարզաձևների և մարզման փուլերի.

4) շարունակականորթյան ապահովման նպատակով 2018-2019 թվականների ընթացքում մանկապատանեկան մարզադպրոցներում 18 տարեկանից բարձր հեռանկարային մարզիկների մարզումները շարունակելու համար ձևավորել բարձրագույն վարպետության դպրոց:

3. «Հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների մարզադահիճների գույքով ապահովում» ծրագրի ներդրման շրջանակներում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել գույքի և միջոցների բաշխման չափորոշիչները.

2) մինչև 2018 թվականի ավարտն ընդունել հստակ գործիքակազմ, որով կրացահայտվեն այն հաստատությունները, որոնց պետք է տրամադրվեն համապատասխան գույք և 2018-2022 թվականներին գույքը տրամադրել ըստ ընդունված գործիքակազմի:

4. Հրաձգություն մարզաձևի գարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը հրաձգություն մարզաձևի գարգացման հայեցակարգի համաձայն մշակել ուսումնավարության և դրա իրականացման 2018-2024 թվականների միջոցառումների ծրագիրը և, դրանցից բխող, տարածքներ ու շինությունների տրամադրել.

2) 2018-2021 թվականների ընթացքում՝ իրականացնել հանրապետությունում եղած (այդ թվում՝ «Հայաստանի ԴՕՍԱՖ» համահայկական հայրենասփրական հասարակական կազմակերպությանը պատկանող) հրաձգարանների փուլային վերանորոգում:

5. Երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների միջմարզային և միջհամայնքային հորիզոնական համագործակցության գարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ 2018-2022 թվականների ընթացքում կատարելագործել «Երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը և իրականացնել մարզային քաղաքների երիտասարդական կազմակերպությունների համատեղ միջոցառումներ, այդ թվում՝ մինչև 2018 թվականի ավարտը զարգացնել մարզպետներին առընթեր խորհուրդների կարողությունները և ձևավորել համագործակցության հորիզոնական պլատֆորմ:

6. Երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության աստիճանի բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել և ներդնել երիտասարդական աշխատողի վերապատրաստման ինստիտուտի սահմաններում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և զրադարձության հմտությունների զարգացման և զրադարձության ապահովման գործուն մոդուլ.

2) մինչև 2018 թվականի ավարտը մշակել երիտասարդների իրավագիտակցության մակարդակի բարձրացման, երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների, ինչպես նաև ծրագրեր գրելու հմտությունների զարգացման ապահովման վերաբերյալ մոդել և գործիքակազմ:

7. Երիտասարդների զրադարձության, սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման ուղղությամբ փաստարկված և իրատեսական լուծումների առաջարկման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) 2017-2018 թվականների ընթացքում ուսումնասիրել երիտասարդների շրջանում ստեղծագործական զրադարձության բարձրացմանն ուղղված պետական և միջազգային ծրագրերը և մշակել արդյունավետ կիրառման առաջարկություններ.

- 2) 2018-2020 թվականների ընթացքում ուսումնասիրել երիտասարդների ստեղծագործական ձեռներեցության զարգացման մոդելները և իրականացնել փորձարարական ներդրում որոշակի թիրախ խմբի սահմաններում.
- 3) 2018-2022 թվականների ընթացքում վերանայել երիտասարդ ընտանիքների և երիտասարդների կողմից բնակարան ձեռք բերելու համար նախատեսված պետական աջակցության ծրագրերը և ընդլայնել տրամադրվող արտոնությունները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ**

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ